

ԳԵՎՈՐԳ Մ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻՆ

Էթնիկ լոբբինգի էությունը և գործառնման համատեքստը

*Գիրքը հրատարակվում է Հայագիտական  
ուսումնասիրությունները ֆինանսավորող  
համահայկական հիմնադրամի դրամաշնորհով*



Երևան - 2024

ՀՏԴ 328.184:327:94(4)  
ԳՄԴ 66.0+63.3(4)  
Ղ 952

**Տպագրության է երաշխավորվել  
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման  
ակադեմիայի գիտական խորհրդի կողմից**

**Մասնագիտական խմբագիր՝**

Մարիամ Մ. Մարգարյան, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

**Գրախոսներ՝**

Գեղամ Հ. Պետրոսյան, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Աբրահամ Գ. Գասպարյան, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ղուկասյան Գևորգ Մ.

Ղ 952 Եվրոպայի հայկական լոբբին: Էթնիկ լոբբինգի էությունը և գործառնման  
համատեքստը / Գ.Մ. Ղուկասյան.- Եր.: Հեղ. հրատ., 2024.- 200 էջ:

Աշխարհային նպատակն է վեր հանել էթնիկ լոբբինգի անդրազգային քաղաքական դերակատարությունը արդի քաղաքական գործընթացներում, գնահատել Եվրոպայի հայկական լոբբիի կառուցվածքա-գործառնական հնարավորությունները, գործունեության առանձնահատկությունները, նույնականացնել լոբբիստական սուբյեկտները և հասկանալ դրանց ազդեցության շրջանակն ու ՀՀ-ԵՄ հարաբերություններում դերակատարության հնարավորությունը: Գնահատվել է էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերը քաղաքական արդիականացման գործընթացում: Միաժամանակ դիտարկվել են էթնիկ լոբբինգի հնարավորությունները՝ հանդես գալու իբրև «փափուկ ուժի» գործառնող, բացահայտվել են մոլորիկուկությունից արժեհամակարգային պայմաններում լոբբինգի դրսևորման հնարավորությունները, համակարգային հատկորոշման է ենթարկվել «հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն» եռանկյունու փոխգործակցության և փոխազդեցության շրջան: Նույնականացվել են Եվրոպայի հայկական սփյուռքի լոբբիստական կառույցները և նրանց գործունեության հիմնական ուղղություններն ու գործիքակազմերը, բացահայտվել է դարաբաղյան հիմնախնդրի շուրջ ԵՄ քաղաքական վարքը: Վերլուծվել են էթնիկ լոբբինգի ներեվրոպական ընկալումը, լոբբինգի և դրա տարատեսակ էթնիկ լոբբինգի ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական հնարավորությունները ԵՄ-ում:

Մենագրությունը նախատեսված է քաղաքագետների, պատմաբանների, հայագետների, կառավարող ընտրանու, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների և ուսանողների, ինչպես նաև ընթերցասեր լայն հանրության համար:



# **ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն .....	5
--------------------	---

## **ԳԼՈՒԽ 1. ԷԹՆԻԿ ԼՈՐԲԻՆԳՐ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ**

1.1 Էթնիկ լորբինգի ինստիտուտի էությունը.....	13
1.2 Էթնիկ լորբինգի ինստիտուտը՝ որպես անդրազգային քաղաքական դերակատար. սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը.....	24
1.3 Էթնիկ լորբինգը՝ որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ և ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման դերակատար .....	52

## **ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԷԹՆԻԿ ԼՈՐԲԻՆԳՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

2.1 Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու քաղաքական աշխարհագրությունը .....	64
2.2 Եվրոպայի հայկական լորբիի քաղաքական գործունեության առաջնահերթությունները. «փափուկ ուժի» կիրառելիության գնահատում.....	69
2.3 Ղարաբաղյան հիմնախնդիրը ՀՀ-ԵՄ հարաբերությունների քաղաքական զարգացման գործընթացում.....	89

## **ԳԼՈՒԽ 3. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 Բազմամշակութայնության դերը էթնիկ լորբինգի գործունեության երաշխավորման գործում .....	138
--	-----

3.2 Լորբինգի ինստիտուտի գործունեության իրավական հիմքերը Եվրոպական միության երկրներում.....	148
3.3 Եվրոպայի հայկական լորբիի դերակատարությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում .....	163
Վերջաբան .....	169
Օգտագործված աղբյուրների եվ գրականության ցանկ .....	183

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*«...Հայրենի կառավարությունների հետ սփյուռքի մոտ հարաբերությունները և համագործակցությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային երևույթներից են»:*

### ***Սամուել Հանթինգթոն***

Հայաստանի անկախացումից հետո, հայրենիք-սփյուռք հարաբերությունների շարունակական կերպափոխմամբ պայմանավորված, անհրաժեշտություն է առաջացել արդի գլոբալ անորոշությունների և տուրբուլենտության պայմաններում վերարժևորելու էթնիկ լոբբինգի գործունեության արժեքաբանությունը՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունների զարգացման հնարավոր դերակատարության օրինակով: Այդ համատեքստում շեշտադրելով արդի ցանցային կառավարման առանձնահատկությունները, միգրացիոն անկառավարելի հոսքերի և տեղեկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճը՝ նպատակահարմար է ուսումնասիրել սփյուռքի և հատկապես հայկական սփյուռքի քաղաքական դերակատարումը: Որպես այդպիսին՝ սփյուռքը, բազմաչափ հարաբերությունների մեջ մտնելով իր պատմական հայրենիքի և պետության, ինչպես նաև ընդունող պետության հետ, ինքնադրսևորվում և ինքնիրացվում է՝ ստանձնելով **համայնքային, էթնոպաշտպան և քաղաքական համագործակցության պատասխանատվություն**: Սփյուռքի կողմից էթնիկ լոբբիստական կազմակերպությունների ստեղծումն էլ իր հերթին նպատակ է հետապնդում մասնակցելու հայրենի պետության/ժողովրդի կյանքի կառավարմանը և միաժամանակ համագործակցելու ընդունող պետության հետ՝ որպես այդ պետության քաղաքացիական մշակույթի կրող: Հետևապես, անհրաժեշտ է համակարգված բացահայտել սփյուռքի, մասնավորապես՝ դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազ-

գային բազմաշերտ դերակատարումը արդի միջազգային հարաբերություններում:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել հետազոտության արդիականությունը պայմանավորող հետևյալ հանգամանքները.

- էթնիկ լոբբինգի հնարավորությունների համակարգային վերլուծություն՝ ՀՀ-ԵՄ հարաբերությունների հետագա զարգացման նպատակով,
- Հայաստանի Հանրապետության բնականոն արդիականացման գործընթացում ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների ռացիոնալ կանխատեսում,
- սփյուռքի քաղաքական գործունեության ռացիոնալացման գնահատում Հայաստանի Հանրապետության շուրջ ծավալված անվտանգության գոյաբանական ռիսկերի պայմաններում,
- լոբբինգի ներկայացումը՝ որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորման ձև,
- սփյուռքյան էլիտաների ինքնության երկվության գնահատումը և արժեշահային համակարգերի զուգամիտման հրամայականները,
- էթնիկ լոբբինգի ինստիտուտը որպես «փափուկ ուժ» դիտարկելու անհրաժեշտությունը և կիրառելիության հնարավորությունները,
- ՀՀ-ԵՄ ինստիտուցիոնալ փոխհարաբերությունների զարգացման տրամաբանությունը,
- մոլտիկուլտուրալիզմի դիտարկում՝ որպես էթնիկ լոբբինգի արդյունավետ գործառնման երաշխավորման արժեհամակարգ,
- Եվրոպայում հայկական լոբբինգի խնդիրների վերլուծություն և կանխատեսում՝ քաղաքական առաջնահերթությունների և գործիքակազմի վերարժևորման համատեքստում:

Թեման նաև արդիական է ՀՀ-ԵՄ փոխհարաբերությունների արդյունավետ զարգացման, Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի ռացիոնալացման, ինչպես նաև հայկական էթնիկ լոբբինգի գործունեության վերաթևոցման ու հետագա զարգացման նպատակներով: Էթնիկ լոբբինգի ուսումնասիրումը հնարավորություն կտա ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործընթացում մշակելու ռազմավարական պլանավորում: Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ էթնիկ լոբբինգը, հանդիսանալով միջազգային քաղաքական գործընթացների դերակատար, մշտապես արդիական ուսումնասիրման թեմա է:

Հետազոտության շրջանակներում ներառված հիմնախնդիրները տարբեր դիտանկյուններից ուսումնասիրվել են քաղաքագետների, մասնավորապես՝ միջազգային հարաբերությունների տեսաբանների և քաղաքական գործընթացի ու ինստիտուտների հետազոտողների, սոցիոլոգների և պատմաբանների կողմից: Պետք է նշել, որ միջազգային քաղաքագիտական գրականության մեջ էթնիկ լոբբինգի ինստիտուտի հետազոտությունն էապես ստվերվել է, քանի որ դրան նվիրված հետազոտությունները գլխավորապես կատարվել են սփյուռքի վերաբերյալ հետազոտությունների շրջանակում: Դրա արդյունքում էթնիկ լոբբինգի ինստիտուտը պատշաճ կերպով չի դիտարկվել որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորում: Այնուամենայնիվ, առկա է սփյուռքի վերաբերյալ հետազոտությունների պատկառելի ծավալ, որն օգտակար է եղել սույն աշխատությունը գրելիս: Մյուս կողմից, չնայած արտերկրում լոբբինգի վերաբերյալ արժեքավոր գիտական հետազոտությունների մեծ ծավալին՝ այդ հետազոտությունները մեծ մասամբ վերաբերում են լոբբինգի այլ ենթատեսակների և հիմնականում համակարգված մոտեցում չեն ցուցաբերում էթնիկ լոբբինգին:

Խնդրի գիտական մշակվածության աստիճանի վերլուծությունը ցույց է տվել, որ վերոնշյալ աշխատանքներում և այլ աղբյուրներում առկա են սույն աշխատանքի տարբեր ասպեկտներին վերաբերող արժեքավոր ուսումնասիրություններ: Այնուամենայնիվ, հայ

իրականության մեջ դեռևս չկա համակարգային հետազոտություն, որը կպատասխանի էթնիկ լոբբինգի ինստիտուտի միջգիտակարգային փոխառնչությունների լայն համատեքստին և մասնավորապես կանդրադառնա էթնիկ լոբբինգի դերակատարության հնարավորությանը ՀՀ-ԵՄ հարաբերություններում: Այս համատեքստում չի դիտարկվել էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարությունը, «փափուկ ուժի» կիրառելիության հնարավորությունները, քաղաքական արդիականացման գործընթացում դերակատարության հնարավորությունը, ինչպես նաև ազդեցությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործընթացում:

Աշխատության նպատակն է արդի քաղաքական գործընթացներում վեր հանել էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային քաղաքական դերակատարությունը, գնահատել Եվրոպայի հայկական լոբբիի կառուցվածքա-գործառնական հնարավորությունները, գործունեության առանձնահատկությունները, նույնականացնել լոբբիստական սուբյեկտները և հասկանալ դրանց ազդեցության շրջանակն ու ՀՀ-ԵՄ հարաբերություններում դերակատարության հնարավորությունը:

Աշխատանքի առջև դրված նպատակն իրագործելու համար կարևոր են հետազոտական հետևյալ խնդիրների լուծումները.

- դիտարկել էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորում և անդրազգային քաղաքական դերակատար,
- գնահատել էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարությունը քաղաքական արդիականացման գործընթացում,
- դիտարկել էթնիկ լոբբինգի ինստիտուտի հնարավորությունները՝ հանդես գալու իբրև «փափուկ ուժի» գործառնող,
- բացահայտել մոլտիկուլտուրալիզմի արժեհամակարգային պայմաններում էթնիկ լոբբինգի դրսևորման հնարավորությունները,

- համակարգային հատկորոշման ենթարկել «հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն» եռանկյունու փոխգործակցության և փոխազդեցության շղթան,
- նույնականացնել Եվրոպայի հայկական սփյուռքի լրբբիստական կառույցները և նրանց գործունեության հիմնական ուղղություններն ու գործիքակազմերը,
- բացահայտել Եվրոպայի հայկական լրբբինգի գործունեության հիմնական ուղղության՝ ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ԵՄ քաղաքական վարքը,
- հասկանալ էթնիկ լրբբինգի ներեվրոպական ընկալումը, լրբբինգի և դրա տարատեսակ էթնիկ լրբբինգի ինստիտուցիոնալ և օրենսդրաիրավական հնարավորությունները ԵՄ-ում:

Հետազոտության նպատակին ու առաջադրված խնդիրների լուծմանը հասնելու համար ուսումնասիրություններ են իրականացվել «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ», «Քաղաքական մարդաբանություն», «Քաղաքական սոցիոլոգիա», «Քաղաքական հոգեբանություն» առարկաների շրջանակներում: Այս բազմամակարդակ մոտեցումը հնարավորություն է տվել թեման գիտականորեն վերլուծելիս զուգամիտելու համակարգային, պատմահամեմատական, կառուցվածքա-գործառնական, վարքաբանական և սիներգետիկական մեթոդները:

Անդրադառնալով աշխատանքի գիտական նորույթին՝ նշենք, որ քաղաքական գործընթացում էթնիկ լրբբինգի ինստիտուցիոնալ դրսևորումների միջգիտակարգային վերլուծությունների և գործունեության բազմաչափության վերհանման արդյունքում գիտական ուսումնասիրության տեսադաշտ է բերվել արդի քաղաքական գործընթացներում էթնիկ լրբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ դերակատարությունը:

Հետազոտության ընթացքում նախապես առաջադրված խնդիրների համակարգային ուսումնասիրումը թույլ է տվել հիմնավո-

րել տեսական ու գործնական նշանակության գաղափարներ ու դրույթներ, որոնցից գիտական իմաստով առավել արժեքավոր են ներքոնշյալները.

- Էթնիկ լոբբինգի ինստիտուտը դիտարկվել է որպես անդրազգային քաղաքական դերակատար և սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող:
- Լոբբինգի վերաբերյալ առավել ներառական սահմանումների հստակեցման գործընթացում անհրաժեշտ է այն դիտարկել իբրև միջգիտակարգային երևույթ: Դրանով մենք հնարավորություն ենք ստանում բացահայտելու նրա բազմաչափությունը և գլոբալ կառավարման ցանցային դրսևորման կառուցվածքում գործառնման խաղային բնույթը: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ աշխատանքի տեսական մեկնաբանության հիմքում դնում ենք լոբբինգը որպես քաղաքական զարգացման գործընթացի ինստիտուտ դիտարկելու և այդ ինստիտուտի իրավաքաղաքական գործունեությունը լեգիտիմ և լեգալ կազմակերպելու մարտահրավերը:
- Էթնիկ լոբբինգը արդի քաղաքական զարգացումներում ունի գլոբալ դրսևորում: Սակայն, իբրև սփյուռքյան ֆենոմեն, այն նաև գլոկալ և լոկալ դրսևորումներ ունի: Այս պարագայում էթնիկ լոբբինգի ինստիտուտը մեծ մասամբ կատարում է ներսփյուռքյան գործունեություն՝ ներգրավված լինելով համայնքային կյանքում և գործունեություն ծավալելով ընդունող երկիր-սփյուռք հարաբերություններում, որոնք ազդեցություն չեն ենթադրում ընդունող պետության արտաքին քաղաքականության վրա: Այդպիսի ազդեցությամբ և միջազգային հարաբերություններում ներգրավմամբ՝ էթնիկ լոբբիստական կառույցները վերածվում են գլոբալ դրսևորում ունեցող անդրազգային դերակատարների:
- Կարևորելով արդի քաղաքական զարգացումների տրամա-



բանության և դինամիկայի ընկալման պատմական ենթատեքստը՝ հիմնավորվել է պետության՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի կողմից էթնիկ լոբբինգի շահերի հաշվետվողական կառավարման և կանխատեսման շահագրգռվածությունը:

- Աշխատանքում վեր են հանվում էթնիկ լոբբինգի և «փափուկ ուժի» տեսության ընդհանրությունները, բազմամշակութայնության (մուլտիկուլտուրալիզմ) ընձեռած արժեքաբանական հնարավորությունները: Ըստ այդմ եզրահանգվել է, որ բազմամշակութայնության ֆենոմենը, ուղղակիորեն առնչվելով սփյուռքին, վերջինիս հնարավորություն է տալիս մասնակցելու ինստիտուցիոնալացված ինքնության քաղաքականության ապահովման գործընթացներին, որի հիմքի վրա էլ տեղի են ունենում ազգային ինքնության բնականոն արդիականացում և քաղաքակրթական չափման ապահովում:
- Տեսամեթոդաբանական ուսումնասիրության հենքի վրա գնահատվել է քաղաքական արդիականացման գործընթացում էթնիկ լոբբինգի՝ որպես ազգային ու արդիականի կոնվերգենցիան ապահովող դերակատար հանդես գալու հնարավորությունը:
- Աշխատանքում հիմնավորվում և գնահատվում է սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը, որի հաղթահարման համար կարևորվում է ազգային և սփյուռքյան ինքնությունների՝ անձի ծագմամբ ու ընդունող պետության քաղաքացիությամբ պայմանավորված ինքնությունների կոնվերգենցիան:
- Հաշվի առնելով ՀՀ-ԵՄ առաջանցիկ զարգացող հարաբերությունների ռազմավարական կարևորությունը՝ նախանշվել և գնահատվել է այն ներուժը, որով Եվրոպայի հայկական էթնիկ լոբբին կարող է նպաստել ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացմանը՝ ստանձնելով նաև ՀՀ քաղաքական

բնականոն արդիականացման ու անվտանգության բարձրացման դերակատարություն:

Հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել էթնիկ լոբբինգի ինստիտուտի միջգիտակարգային համալիր ուսումնասիրությունների համար՝ նկատի ունենալով Եվրոպայի հայկական լոբբիի գործառնումը իբրև քաղաքական գործընթացների ինստիտուցիոնալ դերակատար:

Միաժամանակ, կիրառելիության տեսանկյունից հետազոտությունը նպատակահարմար է օգտագործել հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման, հայկական սփյուռքի էթնիկ լոբբիստական հնարավորությունների արդիականացման, առկա խնդիրների նույնականացման, սփյուռքի՝ ազգային ինքնության պահպանման և այլ ուղղություններով:

# ԳԼՈՒԽ 1. ԷԹՆԻԿ ԼՈՐԲԻՆԳՐ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ

## 1.1 Էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը

«Լոբբինգ» եզրույթի առաջացման շուրջ քաղաքական գիտության մեջ առկա բազմաթիվ մոտեցումներն իրարից տարբերվում են հիմնախնդրի վերաբերյալ համակարգային վերլուծություն իրականացնելիս առաջ եկած և իմաստաբանական, և ժամանակագրական արժեքային չափումներով: Լոբբինգի հայտնի տեսաբան Լիոնել Ջեթերը լոբբինգը համարում է աշխարհի հնագույն երևույթներից մեկը: Ըստ այդմ՝ Ջեթերը լոբբինգի ձևավորումը և զարգացումը պայմանավորում է իշխանության առաջին ինստիտուտների ի հայտ գալով, երբ մարդկանց որոշ խմբեր կամ անհատներ, իրենց շահերից ելնելով, իշխանության կրողներին համոզում էին իրենց հնարավորություններն օգտագործել որևէ կոնկրետ ուղղությամբ: Այդ առումով, քաղաքական գործընթացում լոբբինգը բնական է և անխուսափելի՝ խմբային շահերի պաշտպանության և ներկայացման տեսանկյունից<sup>1</sup>: Անհրաժեշտ ենք համարում լոբբինգը ներկայացնել որպես քաղաքական գործընթացի ինստիտուցիոնալ դրսևորման ձև: Նշենք, որ, մեր դիտարկմամբ, ինստիտուտը որոշակի նորմերի օգնությամբ իրականացվող կառավարումն է: Հանրային քաղաքականության տիրույթում «ինստիտուտ» հասկացությունը կարող է ունենալ և սոցիալական, և իրավական դրսևորում: Ինստիտուտի սոցիալական դրսևորումը հիմնված է պատմության հոլովույթում ձևավորված ավանդույթների վրա, իսկ իրավական դրսևորումը սոցիալականի օրինականացումն է՝ հիմնված հասարակության ունեցած փորձի վրա, ինչն էլ շահադրդում է մարդկանց վարքը՝ համապատասխան նորմերի և կանոնների համաձայն:

Անհրաժեշտ ենք համարում նաև շահային խմբերի էության և բնույթի էվոլյուցիան դիտարկել որպես միջառարկայական ուսում-

<sup>1</sup> Zetter L., Lobbying: The Art of Political Persuasion, London, 2014, p. 7.

նասիրման հիմնախնդիր՝ նկատի ունենալով դրա էթնոքաղաքական, սոցիալ-հոգեբանական, քաղաքակրթական և մարդաբանական առանձնահատկությունները: Շահային խմբերը, որոնք մեծ մասամբ նույնացվում են ճնշման խմբերի հետ, սահմանվում են որպես կազմակերպություններ, որոնք հետապնդում են հատվածական շահ և միևնույն ժամանակ չեն փորձում ձևավորել կառավարություն կամ դրա մասը կազմել: Շահերի խմբերը կարող են մասնակցել ընտրական գործընթացների՝ որպես քաղաքական կուսակցությունների վրա ազդելու մարտավարության մաս, սակայն, որպես կանոն, դրանք մեծ մասամբ հիմնվում են քարոզչական և լոբբիստական տարբեր մեթոդների վրա՝ կառավարության քաղաքականության վրա ազդելու համար<sup>2</sup>: Չնայած էթնիկ լոբբինգն օգտագործում է և՛ ճնշման խմբերի, և՛ շահային խմբերի գործառույթներ, միևնույն ժամանակ քաղաքական գործընթացում հանդես է գալիս ինքնուրույն արժեքաբանական դրսևորմամբ՝ պայմանավորված շահային և ճնշման խմբերի հետ ունեցած լատենտ փոխհամաձայնությամբ:

Հայտնի է, որ քաղաքական գործունեության կառուցվածքում լոբբինգը կարևորվել է, ավելին՝ լոբբիստական համակարգված գործունեություն է իրականացվել դեռևս հունա-հռոմեական անտիկ իրականությունում, երբ լոբբիստները փորձում էին հասնել տարբեր արդյունքների, որոնք ենթադրում էին ինչպես սենատորների, այնպես էլ պլեբեյների մասնակցություն: Այդ միջոցառումների ընթացքում լոբբիստները ճնշում էին գործադրում իրենց թիրախ խմբերի վրա՝ ամենատարբեր բնույթի հարցերի լուծմանը հասնելու համար:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ անհրաժեշտ է համակարգված մոտեցում ցուցաբերել լոբբինգի՝ որպես ինստիտուտի կազմակերպված և ռեֆլեկտիվ գործունեության նկատմամբ: Այդ համատեքստում, նկատի ունենալով արդի գլոբալ կառավարման հիմ-

---

<sup>2</sup> **Brown G. W., McLean I., McMillan A.**, The Concise Oxford Dictionary of Politics, Oxford University Press, 2018, p. 600.

նախնդիրները, կարծում ենք, անհրաժեշտ է իրականացնել միջ-գիտակարգային վերլուծություն՝ համակարգային և վարքաբանական մեթոդաբանական հենքի կիրառմամբ՝ առկա մոտեցումները հավելյալ հստակեցնելու և արդի քաղաքական գործընթացներում լրբբինգի ներառականության ողջ ծավալը բացահայտելու համար:

Լոբբինգի դերի շարունակական կարևորումը միջազգային և առհասարակ արդի սոցիալ-քաղաքական հարաբերություններում պայմանավորվում է նաև անդրազգային կորպորացիաների գործունեությամբ: Վերջիններս, հիմնվելով հետադյունաբերական հեղափոխության ձեռքբերումների, մասնավորապես՝ տեղեկատվահաղորդակցական միջոցների բազմաչափ զարգացման վրա, հետամուտ են գլոբալ հաղորդակցությունների և փոխադրումների աճին և առհասարակ աշխարհի առավել ներառական դառնալուն:

Ըստ որոշ հետազոտողների՝ «լոբբինգ» եզրույթն առաջացել է լոբբի բառից, որը նշանակում է կուլուարներ, միջանցք: Ըստ Կալիֆոռնիայի Սթենֆորդի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Բերնստամի՝ եզրույթն առաջին անգամ կիրառվել է 1820-ական թվականներին, երբ ամերիկյան սենատորները խորհրդակցությունների ընդմիջումներին հավաքվում էին Ներկայացուցիչների պալատի լոբբիում՝ սպասասրահում, քննարկում ու որոշումներ կայացնում այս կամ այն հիմնահարցի վերաբերյալ:

Ըստ մեկ այլ տեսակետի՝ «լոբբինգ» եզրույթն առաջին անգամ կիրառվել է XIX դարի երկրորդ կեսին, ԱՄՆ 18-րդ նախագահ Ուիլիս Սիմփսոն Գրանտի (1869–1870 թթ.) նախագահության ժամանակաշրջանում<sup>3</sup>:

Հաշվի առնելով, որ «լոբբինգ» եզրույթի ծագումը լոբբինգի ինստիտուտի շրջանակում ամենաքննարկված թեման է, որը վերաճել է նաև դասագրքային ճշմարտության, նպատակահարմար

---

<sup>3</sup> Lobbying at the Willard Hotel, <https://boundarystones.weta.org/2016/06/24/lobbying-willard-hotel>

չենք համարում հավելյալ անդրադարձ կատարել եզրույթի առաջացման վերաբերյալ առկա վարկածներին:

Լոբբինգի առավել ընդգրկուն սահմանումը փնտրելիս անհրաժեշտ է այն դիտարկել իբրև միջգիտակարգային երևույթ: Դրանով մենք հնարավորություն ենք ստանում բացահայտելու դրա բազմաչափությունը և կիրառելիության խաղային բնույթը գլոբալ կառավարման ցանցային դրսևորման կառուցվածքում: Այդ առումով, գիտության մեջ առկա սահմանումներն անհրաժեշտ է դասակարգել՝ հաշվի առնելով դրանց առաջացման մեթոդաբանական հիմքը, մասնավորապես՝ համակարգային կամ վարքաբանական բնույթը: Կարևոր է ուշադրություն դարձնել, որ լոբբինգի առկա սահմանումները վերաբերում են նաև դրա գործունեության անհատական, համայնքային, միջպետական և անդրազգային ոլորտներին:

Լոբբինգի՝ որպես քաղաքական համակարգի ուրույն ինստիտուտի գործունեության սահմանման շուրջ ևս առկա է տեսակետների որոշակի բազմազանություն: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, այդ տեսակետները ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև կարծես շարունակում են մեկը մյուսին՝ ցուցելով լոբբինգի շուրջ քաղաքագիտական մտքի զարգացման դինամիկան: Խնդիրն ավելի է բարդանում լոբբինգի ինստիտուտի բազմազանության և լոբբիստական խմբերի միջև առկա գործառութային առանձնահատկությունների առկայության պարագայում:

Լոբբինգի վերաբերյալ գիտական առաջնային ուսումնասիրություններ են կատարել Կ. Բեյմեն, Լ. Միլբրաֆը, ավելի ուշ՝ Վ. Շենդելենը, Պ. Կոպլը և ուրիշներ: Ըստ Կ. Բեյմեի՝ լոբբինգ նշանակում է «քաղաքական և բյուրոկրատական հնարավորություններում սոցիալական խմբերի, պալատական շրջանակների և ընկերությունների բազմազան բուռն գործունեություն»<sup>4</sup>:

Լ. Միլբրաֆը դեռևս 1960 թ. սահմանել է. «Հաղորդակցությունը ընկալման վրա ազդելու կամ այն փոխելու միակ միջոցն է: Լոբ-

---

<sup>4</sup> **Charrad K.**, Lobbying the European Union, Munster, 2009, p. 2–3:

բինգը, հետևաբար, ամբողջությամբ հաղորդակցական գործընթաց է»<sup>5</sup>: Ըստ Վ. Շենդելենի՝ «Լոբբինգը նվազագույնը հանրային իշխանությունների հետ տեղեկության ոչ պաշտոնական փոխանակումն է՝ մի կողմից, մյուս կողմից՝ առավելագույնը պետական իշխանությունների վրա ազդելու ոչ պաշտոնական փորձ»<sup>6</sup>:

Ավելի ուշ Պ. Կոպլն առաջարկել է նախորդների համեմատ առավել համընդգրկուն սահմանում. «Լոբբինգը շահագրգիռ ներկայացուցիչների միջոցով պետական մարմինների օրենսդրական-վարչական որոշումների փորձն է կամ հաջող ազդեցությունը: Ազդեցությունը նախատեսում ու ենթադրում է կապի նպատակային օգտագործում օրենսդիր կամ գործադիր մարմինների հետ հարաբերություններում»<sup>7</sup>:

Այսպիսով, ստացվում է, որ լոբբինգը հանրային-քաղաքական համակարգի զարգացած ինստիտուտ է, որը ֆիզիկական անձանց և իրավաբանական կազմակերպությունների միջոցով ճնշում է գործադրում պետական իշխանության մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) վրա՝ իրենց շահերին համահունչ որոշումների ընդունում ապահովելու համար: Այսուհանդերձ, լոբբինգի վերաբերյալ միանշանակ ընդունելի սահմանում չկա: Օրինակ՝ Լիոնել Զեթերի կարծիքով, պարզ և ամբողջական կլինի հետևյալ սահմանումը. «Լոբբինգը հանրային քաղաքականության ձևավորման փնտրտուքի գործընթաց է՝ կառավարության (դրա ինստիտուտների) և օրենսդրական գործընթացի վրա ազդելու նպատակով»: Նրա ձևակերպմամբ՝ դա նաև «քաղաքական համոզման արվեստ է»<sup>8</sup>:

---

<sup>5</sup> **Milbrath L.W.**, Lobbying as a Communication Process, Public Opinion Quarterly 24(1), 1960 p., 32-53:

<sup>6</sup> **Charrad K.**, նշվ. աշխ., էջ 2-3:

<sup>7</sup> **Koeppel P.**, "The acceptance, relevance and dominance of lobbying the EU Commission-A first-time survey of the EU Commission's civil servants". In: Journal of Public Affairs vol.1, 2001:

<sup>8</sup> **Zetter L.**, նշվ. աշխ., էջ 2:

Մ. Բերնստամը, լրբբինգը սահմանելով որպես հանուն սեփական շահերի հանրային քաղաքականության վրա ազդելու մասնավոր խմբերի ջանքեր, նկատում է, որ ժողովրդավարության զարգացումը և օրենքի գերակայության ի հայտ գալը լրբբինգը վերածեցին կազմակերպված և հաջողակ ինստիտուտի<sup>9</sup>: Ելակետ ընդունելով այս մոտեցումը՝ մեր աշխատության տեսական մեկնաբանության հիմքում դնում ենք լրբբինգը որպես ինստիտուտ դիտարկելու և այդ ինստիտուտի իրավաքաղաքական գործունեությունը լեգիտիմ կազմակերպելու մոտեցումը:

Լրբբիստական կազմակերպությունները միավորում են ազգային, կրոնական, մշակութային, ռասայական, սոցիալական միևնույն պատկանելությունն ու հետաքրքրությունն ունեցող մարդկանց:

Լրբբիստական գործունեության կազմակերպա-իրավական ձևերը բազմաթիվ են՝ տարաբնույթ իրավաբանական կազմակերպություններից մինչև անհատ գործիչներ: Այս ընտրությունը պայմանավորվում է օրենսդրաիրավական այն հնարավորություններով, որոնք տվյալ երկիրն առաջարկում է լրբբիստական խմբերի գործունեության համար:

Հ. Նահապետյանը, համակարգելով Ս. Պերեգուդովի<sup>10</sup>, Է. Մինչենկոյի<sup>11</sup> և Թ. Լայնի ու Ջ. Մաքսվելի մոտեցումներն<sup>12</sup> ըստ գործունեության ուղղվածության, առաջարկում է լրբբիստական կազմակերպությունների հետևյալ տարանջատումը՝ **քաղաքական, սոցիալական, տնտեսական, տարածաշրջանային, օտարերկրյա-էթնիկական**

---

<sup>9</sup> Майкл Бернстам, «Музыку в США заказывают лоббисты», 30 октября 2008, [http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid\\_7695000/7695523.stm](http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm)

<sup>10</sup> Перегудов С.П., Семененко М.С., «Лоббизм в политической системе России», Мировая экономика и международные отношения, N 9, 1996, 28–42.

<sup>11</sup> Минченко Е.Н., Студеникин Н.В., «Современные тенденции в технологиях лоббизма», 21 мая, 2004.

<sup>12</sup> Lyon T.P., Maxwell John W., “Astroturf: Interest group Lobbying and Corporate Strategy”. Journal of Economics & Management Strategy, Volume 13, Number 4, 2004, 561–597.



**(Ճնշման խմբեր) և հատուկ<sup>13</sup>:** Թեև այս աշխատանքում մեզ առավելապես հետաքրքրում է լոբբինգի էթնիկական ուղղվածությունը, սակայն ընդգծենք, որ առանց նշված տարատեսակների համակարգված ուսումնասիրության դժվար կլինի բացահայտել էթնիկ լոբբինգի բազմաշերտությունը, ներխմբային ու միջխմբային նպատակադրված կապերը: Այս դիտանկյունից էլ անդրադառնանք լոբբինգի վերոնշյալ ձևերին:

**Քաղաքական լոբբիստական խմբերը,** որպես կանոն, խոշոր կորպորացիաներն ու ֆինանսա-արդյունաբերական հսկաներն են, որոնք, տիրապետելով որոշակի սոցիալ-ֆինանսական կապիտալի, փորձում են հասնել տվյալ երկրի օրենսդիր և գործադիր իշխանության հանդեպ ազդեցության և իրենց համար նպաստավոր քաղաքականության:

**Սոցիալական լոբբիստական խմբերը** մեծ մասամբ արհեստակցական միություններն են, ինչպես նաև հասարակության որոշակի հատվածի կամ սոցիալական խմբերի շահերը ներկայացնող միություններ, որոնց բարձրացրած հարցերը նպաստում են հատկապես տվյալ խմբերի սոցիալական խնդիրների լուծմանը:

**Տնտեսական լոբբիստական խմբերն** իրենց բնույթով նման են քաղաքականին այն առումով, որ այս խմբի մեջ նույնպես դեր ունեն ֆինանսական հսկայական կապիտալի տիրապետող միություններն ու դրանց դուստր կազմակերպությունները, որոնք ձգտում են հասնել քաղաքական ազդեցության:

**Տարածաշրջանային լոբբիստական խմբերը** ձգտում են որոշակի առավելության հասնել լոկալ մակարդակում՝ որոշակի հարցի վերաբերյալ: Լոբբինգի այս տեսակը մասամբ նմանություն ունի հայրենակցության գործոնին, երբ մարդիկ համախմբվում են՝ ելնելով ազգակցական կամ հայրենակցական կապից<sup>14</sup>:

**Էթնիկ լոբբիստական խմբերը** հասարակական-քաղաքական

---

<sup>13</sup> Նահապետյան Հ., Հայ համայնքն ԱՄՆ-ում, Երևան, 2010, էջ 82–83:

<sup>14</sup> Նույն տեղում:

և մեդիա դիսկուրսում, նաև ակադեմիական գրականության մեջ հաճախ նույնացվում են լրբբինգի բազմաշերտ ու բազմոլորտ ինստիտուտի հետ: Սրանք մեծ մասամբ հյուրընկալ պետության տարածքում հայրենի պետության շահերը սպասարկող կազմակերպություններ են, որոնք հիմնականում հանրային քաղաքականության գործիքակազմով ազդում են հյուրընկալ պետության պետական իշխանության թևերի և հասարակական կարծիքի վրա:

Լրբբիստական գործունեության, այսպես կոչված, **հատուկ խմբերը** արհեստավարժ կարողունակության տեր մարդկանց առևտրային կազմակերպություններ են, որոնք օպերատիվ կերպով և թիրախային ազդում են որևէ գործընթացի վրա՝ առևտրային որոշակի պատվերով<sup>15</sup>:

**Էթնիկ լրբբիստական խմբերը** ձևավորվում են ազգային, կրոնական, մշակութային համախմբման միջոցով՝ ի շահ իրենց հայրենի պետության՝ հյուրընկալ երկրի պետական իշխանության թևերի, տարածքային և տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների վրա ուղղակի կամ անուղղակի ճնշումներ գործադրելու, քաղաքական նպատակներ դնելու և դրանց հասնելու համար: Որպես կանոն, էթնիկ լրբբիստական (այսուհետև՝ նաև լրբբիստական) խմբերն իրենց հայրենի երկրների հետ ունեն միջնորդավորված կամ ուղղակի կապեր:

Ինչպես վերը նշվեց, էթնիկ լրբբիստական խմբերն առավել

---

<sup>15</sup> Կարծում ենք, որ Հ. Նահապետյանի առաջարկած մոդելը էթնիկ լրբբիստական խմբերի վերաբերյալ որոշակիորեն խնդրահարույց է, որովհետև այդ խմբերը սահմանվում են որպես «օտարերկրյա» լրբբիստական խմբեր: Խնդիրն այն է, որ էթնիկ լրբբիստական խմբերը հաճախ ներկայանում են որպես համայնքային կազմակերպություններ (grassroots organization), և, որպես կանոն, այդ կազմակերպությունների անդամներ են հանդիսանում տվյալ երկրում ծնված և գործունեություն ծավալող քաղաքացիները, որոնք ընդամենը չեն պատկանում տվյալ պետության տիտղոսակիր էթնոսին: Կարծում ենք, որ տիտղոսակիր էթնոսին չպատկանելու հանգամանքը բավարար չէ էթնիկ լրբբիստական կառույցներն իբրև «օտարերկրյա» սահմանելու համար:

հայտնի են և հաճախ նույնացվում են լոբբինգի ամբողջ ինստիտուտի հետ: Էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունն առավել հաջող է նաև այն պատճառով, որ նրանք հաճախ ուղղակի կամ անուղղակի հովանավորվում են տվյալ պետության ղեկավարության կողմից և կարող են հանդես գալ որպես գործիք որևէ այլ՝ երրորդ պետության դեմ:

Այս առումով կարող ենք պնդել, որ էթնիկ լոբբիստական խմբերն իրենց ուրույն տեղն ունեն նաև հյուրընկալ պետության արտաքին քաղաքականության իրականացման ծիրում՝ ըստ հարկի սպասարկելով նաև հյուրընկալ պետության արտաքին քաղաքական շահը:

Ընդգծենք էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության որոշ առանձնահատկություններ:

**Հիմնահարցի ձևակերպում**, երբ լոբբիստական խմբերը փորձում են ձևակերպել որևէ հիմնական խնդիր և այն դարձնել հյուրընկալ պետության բարձրագույն իշխանության քննարկման և որոշման ենթակա հարց:

**Տեղեկատվության ապահովում**, երբ էթնիկ լոբբիստական խմբերն զգալի աշխատանք են կատարում անհրաժեշտ տեղեկության հայթայթման, վերլուծության, դրանք փորձագիտական կարծիքի վերածելու և իշխանության մարմիններին տրամադրելու համար:

**Քաղաքականության մշտադիտարկում**, երբ էթնիկ լոբբիստական խմբերը մանրամասն մշտադիտարկման են ենթարկում իշխանությունների նախընթաց ու ներկա գործունեությունը և ըստ անհրաժեշտության կիրառում են այն:

Քանի որ իրավական և կառուցակարգային կայացածության առումով ԱՄՆ-ում լոբբինգի ինստիտուտն ամենազարգացածներից է, անդրադառնանք հենց այդ երկրում էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության մի քանի առանձնահատկությունների.

- կառավարության ներկայացուցիչներին և Կոնգրեսի ան-

դամներին համապատասխան տեղեկությունների մատակարարում կոնկրետ հարցի վերաբերյալ,

- մասնակցայնության ապահովում լոբբիստական հետաքրքրություն ներկայացնող հարցի քննարկումներում,
- հասարակական կարծիքի նպատակային ձևավորմանն ուղղված քարոզչական և լրատվական բնույթի մեծածավալ աշխատանք,
- ֆինանսական և քաղաքական աջակցություն լոբբիստական կազմակերպությունների համար ընդունելի կամ նպատակահարմար թեկնածուների քարոզարշավներին<sup>16</sup>:

**Լոբբինգի ինստիտուտն ունի իրեն խիստ բնորոշ տեխնոլոգիական գործիքակազմ, որոնցից են՝**

**1. հասարակական կարծիքի համախմբում՝** տարբեր քաղաքացիական-հասարակական ձեռնարկների, իշխանություններին ուղղված դիմումների, ստորագրահավաքների, քարոզչական ակտիվ գործունեության և դատական գործընթացների նախաձեռնման միջոցով.

**2. ընտրարշավային աջակցում՝** ենթադրում է անհատական կամ խմբային մասնակցություն ընտրություններին՝ դրանց ֆինանսավորման կամ աջակցման միջոցով.

**3. պաշտոնական հնարավորությունների և կապերի կիրառում՝** լոբբիստական կազմակերպություններն օրենքով իրենց վերապահված հնարավորությունների շրջանակում կարողանում են ապահովել մասնակցայնություն պետական ապարատի աշխատանքներում, ինչը տվյալ դեպքում ենթադրում է տարբեր իրավական ակտերի, նախագծերի և դրանց քննարկումների կազմակերպում, իշխանության մարմինների համար խորհրդատվությունների իրականացում, փորձագիտական կարծիքների տրամադրում և այլն.

**4. ոչ պաշտոնական կապերի գործադրում՝** ենթադրում է տարբեր գիտաժողովների, կլոր սեղանների, քննարկումների, սեմինարների և նման այլ միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև

---

<sup>16</sup> Նահապետյան Հ., նշվ. աշխ., էջ 87:

անհատական հանդիպումներ և անձնական կապերի ստեղծում,

**5. պետական իշխանության թևերի և մարմինների վրա հոգե-բանական ճնշման գործադրում,** ինչը կարող է դրսևորվել նամակների, հեռագրերի, զանգերի, հանրային միջոցառումների տեսքով<sup>17</sup>:

Լոբբինգի տեխնոլոգիաներից արևմտյան աշխարհում հայտնի է «Lobbing the grassroots»-ը: Այն ունի ամերիկյան ծագում, բայց ակտիվորեն կիրառվում է Արևմտյան Եվրոպայի զարգացած հասարակություններում:

«Lobbing the grassroots» տեխնոլոգիան հանրային քաղաքականության համալիր գործիքակազմ է, որի ընթացքում լոբբիստը դիմում է ոչ թե պետական հաստատություններին, այլ հասարակության ներկայացուցիչներին, իշխանության այս կամ այն որոշման վրա ազդելու ընդունակ սովորական քաղաքացիներին:

Լոբբինգի այս տեխնոլոգիան, ըստ էության, ենթադրում է հասարակական ներուժի համախմբում որոշակի խնդիր լուծելու համար: Այս ընթացքում քաղաքացիներին հանգամանալի բացատրվում է խնդրի էությունը, նրանց համար շահեկան և ոչ շահեկան կողմերը: Այնուհետև քաղաքացիներին հորդորում են կապվել տվյալ որոշման կայացման համար պատասխանատու ինստիտուտների ու անհատների հետ, նրանց վրա հասարակական ճնշում գործադրել: Այսպես, երբ որոշում կայացնող անհատը կամ մարմինը նույն հարցի վերաբերյալ ստանում են հսկայական քանակությամբ զանգեր կամ գրություններ, ստիպված են լինում հաշվի նստել, ըստ էության, հանրային կարծիքի հետ:

«Lobbing the grassroots» տեխնոլոգիայի իրականացումը ենթադրում է.

1. լոբբիստական կոնկրետ գործունեությունը խթանելու համար զանգվածային միջոցառումների՝ ցույցերի, երթերի, հանրահավաքների կազմակերպում,
2. չընդհատվող հեռախոսազանգերի, գրությունների հաս-

---

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 88–89:

ցեազրման գործընթաց, որն ընդհուպ կարող է հանգեցնել թիրախ դարձած պաշտոնյաների կամ մարմինների՝ արտաքին աշխարհից հեռախոսային և գրագրային մեկուսացման,

3. էլեկտրոնային հասցեի արգելափակում՝ դրան ուղղված մեծաքանակ նամակ-սպամների միջոցով,
4. լոբբիստական գործունեության վերաբերյալ հասարակական իրազեկման ապահովում,
5. հանրային ճանաչում և ազդեցություն վայելող գործիչների ներգրավում տվյալ խնդրի լուծման գործընթացում:

ԱՄՆ-ում հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ այս տեխնոլոգիայով իրականացվող լոբբիստական գործունեությունը կոնկրետ արդյունք է տվել: Օրինակ՝ 1980-ականներին, երբ տապալվեց զենքի վաճառքի արգելման օրենքի ընդունումը ԱՄՆ Կոնգրեսում, ավելի քան 3 մլն. զանգով Կոնգրեսը ենթարկվեց հեռախոսային շրջափակման:

«Lobbing the grassroots» տեխնոլոգիան 1980-ականների վերջում կիրառվել է նաև Ամերիկայի բանկիրների ասոցիացիայի, 1992-ին՝ ամերիկյան առողջապահական բարեփոխումների դեմ<sup>18</sup>:

## **1.2 Էթնիկ լոբբինգի ինստիտուտը՝ որպես անդրազգային քաղաքական դերակատար. սփյուռքյան էլիտաների երկվության մարտահրավերը**

Արդի տուրբուլենտ քաղաքական գործընթացներում, միգրացիոն անկառավարելի հոսքերի և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց աճի պայմաններում մեծացել է սփյուռքի՝ որպես քաղաքական ինստիտուտի դերակատարումը: Այն ակնառու դրսևորվում է հայրենիք-ընդունող պետություն փոխհարաբերություններում: Սփյուռքն աստիճանաբար տեղ է զբա-

---

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 89–91:

ղեցնում և կարևոր դերակատարություն ստանձնում գլոբալ կառավարման համակարգում:

Քաղաքական գործընթացներում սփյուռքի տեղի և դերի հստակեցմանը նպաստելով՝ անդրազգային քաղաքական կառույցներն իրենց դրսևորում են որպես ինքնուրույն խաղացողներ՝ ազդելով պետությունների քաղաքականության վրա: Վիճարկելի է քաղաքական գիտության մեջ ձևավորված այն մոտեցումը, ըստ որի՝ դրանց գործունեության ուղղությունը հիմնականում միակողմանի է և չունի հակադարձ-միջնորդավորված ազդեցություն<sup>19</sup>, քանի որ արդի տուրբուլենտ քաղաքական զարգացումներում աներկբա է անդրազգային քաղաքական դերակատարների բազմաշերտ փոխազդեցությունը:

**Աշխատանքի սույն ենթագլխի նպատակն է բացահայտել սփյուռքի, մասնավորապես դրա քաղաքական գործունեության հիմնական գործառնողի՝ էթնիկ լոբբինգի ինստիտուտի անդրազգային բազմաշերտ քաղաքական դերակատարումը, որը ենթադրում է հայրենիք-ընդունող պետություն երկճյուղ փոխհարաբերություններ՝ ձևավորելով հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն հարաբերությունների ուրույն մի ոլորտ:** Այս պնդմամբ նպատակ ունենք հիմնավորելու, որ էթնիկ լոբբինգի ինստիտուտի գործունեությունը միտված է ոչ միայն ընդունող պետության հետ հայրենի պետության հարաբերությունների զարգացմանը, այլև հայրենի պետության վրա ազդեցություն ունենալուն: Որպես կանոն՝ այս գործընթացում էթնիկ լոբբիստական կազմակերպությունները նաև իրենք են ազդեցության ենթարկվում և հայրենի պետության, և ընդունող պետության կողմից: Այդուհանդերձ, լոբբիստական խմբերը փորձում են հնարավորինս պահպանել իրենց անկախ դերակատարումը և, առաջնորդվելով

---

<sup>19</sup> **Hägel P., Peretz P.**, States and Transnational Actors: Who's Influencing Whom? A Case Study in Jewish Diaspora Politics during the Cold War, *European Journal of International Relations* Copyright, 2005, Vol. 11(4), 467–493.

քաղաքականության «քաղաքացիական» կողմնորոշիչով կամ «քաղաքականությունն ոչ թե պետության ներսում, այլ ժողովրդի ներսում»<sup>20</sup> սկզբունքով (հայրենի պետության հետ հարաբերություններում), փորձում են պահպանել իրենց ուրույն անկախ դերակատարությունը: Իր հերթին, ընդունող պետությունների ազդեցության փորձը լոբբիստական կազմակերպությունների վրա սփյուռքի էլիտաներին կանգնեցնում է ինքնության երկվության մարտահրավերի առջև:

Վերոգրյալից ակնհայտ է, որ էթնիկ լոբբինգը միջազգային հարաբերություններում ունի գլոբալ դրսևորում: Մեր կարծիքով, իբրև սփյուռքյան ֆենոմեն, էթնիկ լոբբինգն ունի ինչպես գլոբալ, այնպես էլ գլոկալ<sup>21</sup> և լոկալ դրսևորումներ: Մասնավորապես այն դեպքում, երբ էթնիկ լոբբինգի ինստիտուտը ստանձնում է հիմնականում ներսփյուռքյան գործունեություն՝ ներգրավված լինելով համայնքային կյանքում և գործունեություն ծավալելով ընդունող երկիր-սփյուռք հարաբերություններում, որոնք ազդեցություն չեն ենթադրում ընդունող պետության արտաքին քաղաքականության վրա: Ընդունող պետության արտաքին քաղաքականության վրա ազդեցություն ունենալով և միջազգային հարաբերություններում ներգրավվելով՝ էթնիկ լոբբիստական կառույցները վերածվում են գլոբալ դրսևորում ունեցող անդրազգային դերակատարների:

Յ. Շեյնն իրավացիորեն նկատել է. «Ազգային պետության գաղափարը, անգամ հաջողությամբ իրացվելիս, ի վիճակի չէ ամուր կայունություն ապահովել ինչպես միջազգային, այնպես էլ ներազգային մակարդակում: Ազգային պետությունների աշխարհակար-

---

<sup>20</sup> **Shain Y.**, “Kinship and Diasporas in International affairs”, The University of Michigan, 2007, p. 7.

<sup>21</sup> Ռոլանդ Ռոբերթսոնի պնդմամբ, գլոբալ և լոկալ մշակույթները միմյանց չեն հակասում, և առհասարակ լոկալը պետք է ընկալել որպես գլոբալի մաս: Վերջիններիս համադրումն էլ ներկայացնելու համար առաջարկվել է «գլոկալ» եզրույթը՝ որպես գլոբալի և լոկալի համադրում: Տես **Beck U.**, “What is globalization?”, translated by Patrick Camiller, Polity Press, 2000, էջ 57:



գը կարծես թե ի վիճակի չէ կանխելու քաղաքացիություն չունեցող փոքրամասնությունների կամ էթնիկ շրջանակների շարունակական ընդվզումը: Այս էթնիկ պատկանելությունը հավերժ պահանջում է նոր միջոցներ՝ արտահայտելու իրենց ազգային ձգտումը որպես անկախ քաղաքական սուբյեկտներ՝ ազգային պետությունների առկայությունից անկախ»<sup>22</sup>: Հետևաբար էթնիկ լոբբինգի ինստիտուտը, իր բազմաշերտ և բազմավեկտոր ազդեցությամբ, հայրենի և ընդունող պետությունների համար և՛ հնարավորություն է, և՛ մարտահրավեր, որը **սփյուռքյան էլիտաներին կանգնեցնում է երկվության մարտահրավերի առջև**: Նման մոտեցումը հիմնավորենք Ս. Հանթինգթոնի այն պնդմամբ, որ «երկքաղաքացիությունը լեգիտիմացնում է երկակի ինքնությունը և երկակի հավատարմությունը»: Հանթինգթոնը նաև նկատում է. «Ժողովրդավարության կենսունակությունը կախված է նրանից, թե որքանով են նրա քաղաքացիները հետաքրքրված քաղաքացիական միավորումներով, հասարակական կյանքով և քաղաքականությամբ»<sup>23</sup>:

Ելակետ ընդունելով հանթինգթոնյան մոտեցումը՝ տեղին է նշել Պ. Հեգելի և Փ. Պերեցի այն նկատառումը, որ անդրազգային քաղաքական դերակատարների ազդեցության մեծացումը պայմանավորված է հենց քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ ոչ կառավարական կազմակերպությունների (NGO), ինչպես նաև, այսպես կոչված, կառավարական հասարակական կազմակերպությունների (Governmentally Organized NGOs-GONGO), կառավարական ուղղորդմամբ և նախաձեռնությամբ ձևավորված հասարակական կազմակերպությունների (Governmentally Regulated and Initiated NGOs-GRINGO) և մանիպուլացված հասարակական կազմակերպությունների (MANNGOs) գործունեությամբ<sup>24</sup>: Դրանով է պայմանավորված այն, որ հենց քաղաքացիական հասարակությ-

---

<sup>22</sup> Shain Y., նշվ. աշխ., էջ 28:

<sup>23</sup> Huntington S., “Who are we?”, p. 212.

<sup>24</sup> Hägel P., Peretz P., նշվ. աշխ., էջ 467–493:

յան կազմակերպություններն են հանդիսանում էթնիկ լոբբիստական կառույցների կազմակերպա-իրավական գործունեության հիմնական ձև: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ոչ համայնքային կազմակերպության նույնականացումը լոբբիստական կազմակերպությունների հետ որոշակի դժվարություններ է ենթադրում ընդունող պետության հետ հարաբերություններում: Բացառություն են կազմում սահմանափակ թվով երկրներ, որտեղ լոբբինգը քաղաքական մշակույթի ուրույն և անբաժան մաս է: Տարբեր երկրների ներքին օրենսդրավական կարգավորումները և քաղաքական մշակույթը յուրահատուկ պայմաններ են ստեղծում լոբբիստական խմբերի գործունեության համար: Հետևաբար կարևոր հանգամանք է սփյուռքի համայնքային կազմակերպությունների՝ ընդունող երկրներում հիմնադրված լինելու փաստը՝ որպես այդ երկրի քաղաքացիների կողմից հիմնադրված քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (grassroots organization): Այս դեպքում էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունները խուսափում են հայրենի պետության կողմից վերջինիս շահերին ծառայելու համար այլ պետության տարածքում հիմնադրված լինելու վերաբերյալ հնարավոր մեղադրանքներից կամ հավելյալ այլ խնդիրներից:

Դեռևս Վեսթֆալյան համակարգով պետությանը տրված է ազգային շահը ձևավորելու, մշակելու և իրականացնելու արտոնություն, ինչպես նաև վերապահված է իր սահմաններում ապրող մարդկանց շահերը ներկայացնելու իրավունք: Հաճախ պետություններն իրենց սփյուռքը դիտում են որպես ներքին քաղաքականության մաս: Ընդունելով այս մոտեցումը՝ ավելացնենք, որ սփյուռքը, որպես այդպիսին, նաև հանրային քաղաքականության կազմակերպման և արդյունքի գրանցման գործոն է: Նման մոտեցմամբ, ավելի մեծ է հավանականությունը, որ սփյուռքյան համայնքները կարող են ազդել հայրենի պետությունների վրա կամ ազդվել նրանց կողմից: Փոխադարձ ազդեցության այս համամասնությունը պայմանավորված է հայրենի պետության և սփյուռքի կազմա-

կերպական միավորումների ֆինանսատնտեսական ու հասարակական-քաղաքական հնարավորություններով:

Ամեն դեպքում, սփյուռքի կողմից հայրենիքի շահերի պաշտպանությունը ներառում է հանրային քաղաքականության արժեքաբանությունը: Սփյուռքյան լոբբիստական կառույցները ներկայացնում են հայրենի շահի իրենց «տարբերակը», որը կարող է տարբերվել պետության դիրքորոշումից՝ առաջացնելով փոխադարձ ազդեցություններ: Փոխադարձ ազդեցության աստիճանը կախված է նաև հայրենիք-սփյուռք հարաբերությունների որակից, երկուստեք քաղաքական վերնախավերի, սփյուռքյան կազմակերպությունների և կուսակցությունների՝ հայրենիքում հաստատված լինելու չափից, պետական քաղաքականության մեջ սփյուռքի ներգրավվածության աստիճանից, պետության անվտանգային համակարգում սփյուռքյան կառույցների դերից, հայրենիք-ընդունող պետություն միջպետական հարաբերությունների որակից և այլն:

Ստորև դիտարկենք սփյուռքում գործող կազմակերպությունների դերակատարությունը: Հայկական, հրեական և այլ դեպքերի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ ընդունող պետության տարածքում ակտիվ սփյուռքը չի կարող դիտարկվել պարզապես որպես «տնային ընտրող»: Հակամարտությունների կարգավորման գործընթացում այն հանդես է գալիս որպես անկախ դերակատար: Այդպիսի սփյուռքը հայրենի երկրի ղեկավարների համար խաղաղ բանակցությունները կարծես վերածել է երեք մակարդակի խաղի: Տուժել են այն առաջնորդները, որոնք փորձել են սահմանափակել բանակցությունները երկու մակարդակով: Ընդունող պետությունները և երրորդ կողմերը գիտակցում են սփյուռքի դերը այնպիսի հակամարտություններում, որոնցում ներգրավված է նրանց հայրենի երկիրը, և փորձում են ազդել դրանց վրա:

Մեր առջև դրված խնդիրների լուծման համար առաջարկում ենք էթնիկ լոբբինգ-հայրենի պետություն-ընդունող պետություն փոխազդեցության շղթայի յուրաքանչյուր օղակ քննարկել առանձին:

**Էթնիկ լոբբինգի բնույթին և ընդունող պետության վրա դրա ազդեցությանն** անդրադառնալիս մեկ անգամ ևս նկատենք, որ էթնիկ լոբբինգը լոբբինգի ընդհանրական ինստիտուտի կառուցվածքային մաս է: Ինչպես ասվեց, երևույթի վերաբերյալ քաղաքական գիտության մեջ առկա են տասնյակ սահմանումներ ինչպես լոբբինգի ընդհանուր ինստիտուտի վերաբերյալ, այնպես էլ դրա տեսակ հանդիսացող էթնիկ լոբբինգի: Դրանք գրեթե բոլորն էլ ի վերջո հանգում են նրան, որ քաղաքականության մեջ էթնիկ լոբբինգն արտահայտվում է ընդունող պետության պետական ու տարածքային իշխանության թևերի և հասարակության հետ կատարվող նպատակադրված աշխատանքով, ինչը ենթադրում է հայրենի պետության, ժողովրդի կամ համայնքի համար նպաստավոր որոշումների ընդունում: Հատկանշական է արդի միջազգային հարաբերություններում սփյուռքի ազդեցության վերաբերյալ Ս. Հանթինգթոնի այն դիտարկումը, որ «**հայրենի կառավարությունների հետ սփյուռքի մոտ հարաբերությունները և համագործակցությունը ժամանակակից միջազգային հարաբերությունների առանցքային երևույթներից է**»<sup>25</sup>: Ի շահ հայրենի պետության՝ սփյուռքի քաղաքական գործունեության համար հաճախ նույնիսկ նշանակություն չի ունենում հայրենիքի՝ անկախ պետականություն ունենալ-չունենալու հանգամանքը: Ավելին՝ սփյուռքի քաղաքական էլիտան կարող է գոյություն ունենալ բնիկ ժողովրդի տեղահանությունից հետո, նույնիսկ դառնալ անկախության վերականգնման միջազգային պայքարի շարժիչ ուժը և հայրենի քաղաքական գործընթացներում կենտրոնական դեր զբաղեցնել արդեն անկախությունից հետո<sup>26</sup>: Այս ֆենոմենը բացատրելի է սփյուռքի համայնքների ղեկավարության՝ հայրենի երկրի քաղաքական վերնախավից տարբեր դիրքորոշումներ ունենալու հանգամանքով և

<sup>25</sup> Huntington S., “Who are we?”, p. 277.

<sup>26</sup> Toloyan Kh., “Exile Governments in the Armenian polity”, Journal of Political Science, V. 18, November 1990, 124–147.

հայրենի շահի տարընկալմամբ: Սրանով է նաև բացատրվում քաղաքական գործընթացում էթնիկ լոբբիստական կառույցների անկախությունը կամ անկախության ձգտումը: Անկախության ձգտումը էթնիկ լոբբիստական կազմակերպությունների գործունեության մարտահրավերներից է, քանի որ վերջիններս ճնշումների են ենթարկվում ոչ միայն հայրենի պետությունների, այլև ընդունող պետությունների կողմից: Երկու բևեռներն էլ, ըստ էության, փորձում են լոբբիստական խմբերին պահել սեփական արտաքին քաղաքական ուղեծրում: Հետևապես, դիվերսիֆիկացված և անկախ քաղաքական գործունեության ձգտումը կենսական անհրաժեշտություն է դառնում էթնիկ լոբբիստական կազմակերպությունների գործունեության պահպանման և իմաստավորման համար: Ասվածը, սակայն, կասկածի տակ չի դնում էթնիկ լոբբիստական կազմակերպությունների համագործակցությունը ինչպես ընդունող, այնպես էլ հայրենի պետությունների հետ, ինչին էլ վերաբերում էր Հանթինգթոնի՝ վերը հիշատակված պնդումը: Միգրացիոն հոսքերից բացի, միջազգային հարաբերություններում սփյուռքի դերը բարձրանում է նաև տնտեսական գլոբալիզացիայի, գլոբալ հաղորդակցությունների և փոխադրումների զարգացման արդյունքում: Այս հանգամանքները հնարավորություն են տալիս սփյուռքին տնտեսապես, սոցիալապես և քաղաքականապես սերտ կապի մեջ մնալու հայրենի կառավարության և հանրության հետ:

Էթնիկ լոբբիստական կառույցներ ձևավորած սփյուռքը, հիմնականում ժողովրդավարական հասարակություններում, առաջին հերթին ազդում է հենց ընդունող երկրի արտաքին, երբեմն նաև ներքին քաղաքական գործընթացների վրա: Այս երևույթը լավագույնս դրսևորվում է Միացյալ Նահանգներում, որտեղ լոբբինգը քաղաքական մշակույթի ուրույն մաս է, և, ինչպես պնդում են մի շարք հայտնի հեղինակներ, տարբեր էթնիկ լոբբիներ հանգեցրել են ամերիկյան արտաքին քաղաքականության ուժի մասնատման: Սամուել Հանթինգթոնը նույնպես բացասական է դիտարկում սփյուռքի ազդեցությունը ընդունող պետության արտաքին

քաղաքականության վրա՝ նշելով դեպքեր, երբ իր հայրենի կառավարությանն աջակցող սփյուռքը Միացյալ Նահանգների դեմ հետախուզական աղբյուր է դառնում և ամերիկյան ընտրական գործընթացի վրա կոռուպցիոն ազդեցություն է գործում: Ինչպես առևտրային շահերի դեպքում, ամերիկյան ազգային շահերն ավելի ու ավելի են քայքայվում ԱՄՆ արտաքին քաղաքականության հետևանքով, որն առաջնորդվում է էթնիկ լոբբիստական խմբերի շահերով<sup>27</sup>:

Ընդունող պետության համար իրական մարտահրավեր է հայրենի պետության կողմից սփյուռքյան համայնքների հնարավորությունների օգտագործումը արտաքին հետախուզության նպատակով: «Լրտեսությունը,- նկատել է սենատոր Դենիել Պատրիկ Մոյնիհանը,- գրեթե միշտ կապված է սփյուռքի քաղաքականության հետ», և, ինչպես 1996 թվականին պաշտպանության դեպարտամենտը հայտնել է Կոնգրեսին, «շատ օտարերկրյա հետախուզական գործակալություններ փորձում են շահագործել ամերիկացիների էթնիկ կամ կրոնական կապերը»: Թոնի Սմիթը պնդում է, որ սփյուռքի ամերիկյան համայնքների «կազմակերպված ղեկավարությունը» գտնվում է «օտարերկրյա կառավարությունների ուժեղ ազդեցության տակ՝ ընդունելու այնպիսի դիրքորոշումներ, որոնք կարող են հակասել տարածաշրջանում ամերիկյան քաղաքականությանը կամ շահերին: Սփյուռքը կարող է ազդեցություն ունենալ Կոնգրեսում, քանի որ կարող է ազդել Կոնգրեսի ընտրությունների վրա՝ փող և կամավորներ տրամադրելով իրենց կողմնակիցներին և եռանդուն քարոզչություն իրականացնելով նրանց դեմ, ովքեր դեմ են իրենց քաղաքականությանը»<sup>28</sup>:

Վիճարկելի է այն տեսակետը, թե էթնիկ լոբբին և անդրազգային կապերը սպառնում են պետությունների ներդաշնակությանը, արտաքին քաղաքականությանը և ազգային անվտանգությանը,

---

<sup>27</sup> **Huntington S.**, “Who are we?”, p. 278–288.

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 278:

քանի որ էթնիկ լոբբինգը արևմտյան բազմակարծության մաս է և հակակշիռ ավանդական քաղաքական էլիտաներին:

Ինչպես նշում է Շեյնը, ընդունող երկիր-էթնիկ փոքրամասնություն հարաբերություններում առկա խնդիրները կարող են դուրս գալ զուտ պետական համակարգի հետ հարաբերությունների շրջանակից և առնչվել ընդունող հասարակությունների հետ. «Իրենց ընդունող պետության լիբերալ «էթոսը» համադրելով համայնքի էթնոֆոկալ ընկալման հետ՝ էթնիկ խմբերը կարող են մարտահրավեր առաջացնել իրենց հյուրընկալող երկրների էթնոֆոկալ ինքնության համար: Այս երևույթի վերջին օրինակները ինքնության և քաղաքացիության վերաբերյալ վեճերն են Գերմանիայում և Ֆրանսիայում»<sup>29</sup>:

Կարելի է եզրակացնել, որ սփյուռքի կողմից էթնիկ լոբբիստական կազմակերպությունների ստեղծումը նպատակ է հետապնդում մեծացնելու սփյուռքի դերակատարությունը հայրենի պետության/ժողովրդի կյանքում և այդպիսով նպաստելու համագգային խնդիրների լուծմանը:

**Հայրենի պետության վրա էթնիկ լոբբինգի ազդեցությունն ու նշանակությունը** վերլուծելիս պետք է հաշվի առնել հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացման երեք հիմնական ուղղությունները: Կառավարություններն իրենց սփյուռքը ավելի հաճախ դիտարկում են որպես օժանդակության կարևոր հնարավորություն, այլ ոչ թե զուտ պատմազգային երևույթ: Երկրորդ, ցանկացած սփյուռք ապահովում է շարունակական տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական ներդրումներ իր հայրենիքում: Երրորդ, սփյուռքը և հայրենիքի կառավարությունը գնալով ավելի սերտ են համագործակցում՝ հայրենի երկրի և կառավարության շահերը հյուրընկալ երկրներում առաջ մղելու համար:

Յ. Շեյնը նույնպես առանձնացնում է ազդեցության երեք մակարդակ՝ նկատելով, որ հայրենիքի արտաքին քաղաքականության

---

<sup>29</sup> Shain Y., նշվ. աշխ., էջ 20:

վրա սփյուռքի ազդեցության չափը որոշվում է հայրենիքի և սփյուռքի միջև ուժի հավասարակշռությունը կազմող երեք բաղադրիչով՝ հայրենի երկրի ներքին քաղաքականության կազմաձևում, ազդեցություն հայրենի պետության արտաքին քաղաքական վարքի վրա, ազգային հավաքականության ներառականության ձևավորում<sup>30</sup>:

Լինելով հայրենի երկրի, հատկապես նորանկախ պետությունների արտասահմանյան հիմնական դոնորը՝ սփյուռքյան կառույցները հայրենի պետություններից առավել մասնակցայնություն են պահանջում: Իր հարցազրույցներից մեկի ժամանակ հայկական սփյուռքի հետազոտող, ականավոր սփյուռքագետ Խ. Թոլոյանը նշել է. «Նրանք (Հայաստանի իշխանությունները-Գ.Ն.) սփյուռքահայերից ծառայություն և փող են ուզում, ոչ թե մտքեր կամ կարծիքներ»<sup>31</sup>:

Հայրենի պետության վրա սփյուռքի ազդեցության եղանակներից մեկն էլ սփյուռքյան էլիտայի ուղղակի ներգրավումն է հայրենի պետությունում որոշումների կայացման գործընթացում: Այս ֆենոմենը մասնավորապես դրսևորվեց հետխորհրդային երկրներում՝ Լիտվայում, Լատվիայում, Չեխիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում, Հայաստանում, երբ տարբեր պաշտոնյաների միջոցով սփյուռքյան կառույցներն ազդեցություն էին ունենում իրենց հայրենի պետությունների վրա: Հատկանշական է Զբիգնև Բժեզինսկու այն միտքը, թե Լեհաստանի նախագահությունը ստանձնելու առաջարկն իրեն ստիպեց քննել իր անձնական ինքնությունը և եզրակացնել, որ թեև ինքը պատմականորեն և մշակութապես լեհ է, բայց քաղաքականապես ամերիկացի է<sup>32</sup>:

Էթնիկ լոբբինգը՝ որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական ինստիտուտ, հայրենի պետության վրա ազդում է վերջինիս համար միջազգային լոբբինգի իրականացման, հա-

---

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 6–7, 53:

<sup>31</sup> Shain Y., նշվ. աշխ., էջ 104:

<sup>32</sup> Huntington S., “Who are we?”, p. 284.



կամարտությունների կարգավորման գործընթացում ներգրավվածության, հայրենիք ուղղվող ֆինանսական միջոցների, հայրենի պետությունների ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության կայացման, պետության արդիականացման<sup>33</sup> և այլ ճանապարհներով, որոնց առանձնաբար կանդրադառնանք ստորև:

Էթնիկ լոբբինգը, որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, շարունակում է մնալ հայրենի պետություններին սփյուռքյան քաղաքատնտեսական օժանդակության գլխավոր ուղին, ինչը միաժամանակ ազդեցության կարևոր գործիք է այլ պետությունների կառավարությունների հետ հարաբերություններում:

Սփյուռքյան կառույցները կարող են վերաճել էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների հիմնականում ազատական բնույթ ունեցող ժողովրդավարական երկրներում, որտեղ խրախուսվում է բազմամշակութայնությունը և կարևորվում քաղաքացիության ինստիտուտը՝ անկախ ազգությունից: Որպես կանոն՝ էթնիկ լոբբիստական խմբերն էլ ներքին բազմամշակութայնությունը արտաքին քաղաքականության մեջ պրոյեկտելու ջատագովներ են, որոնք հաճախ նույնիսկ կարող են ուռճացնել իրենց իրական ուժը՝ ավելի մեծ ազդեցության հասնելու համար<sup>34</sup>: Նրանք ունակ են ժողովրդավարացնելու ավտորիտար հայրենիքների վարչակարգերը<sup>35</sup> և համաշխարհային տնտեսության մեջ հայրենի տնտեսություններ-

---

<sup>33</sup> Քաղաքական զարգացման և արդիականացման գործընթացում էթնիկ լոբբինգի դերակատարության մասին տես, **Ղուկասյան Գ.**, «Էթնիկ լոբբինգի ինստիտուտը՝ որպես ՀՀ քաղաքական զարգացման և արդիականացման դերակատար», ՎԷՄ 3 (75), Երևան, 2021, էջ 241–262:

<sup>34</sup> **Smith T.**, Foreign attachments, the power of ethnic groups in the making of American foreign policy-Harvard University Press, 2002, p. 70.

<sup>35</sup> **Myron W.**, Security, Stability, and International Migration, International Security, Vol. 17, No. 3 (Winter, 1992–1993), p. 91–126.

րին աջակցող ֆինանսական ուժ են<sup>36</sup>: Վերջապես, էթնիկ լոբբիստական կառույցների տիրապետող սփյուռքն ավելի ընդունակ է խթանելու անդրազգային կապերը, կամուրջ հանդիսանալու կամ միջնորդ լինելու հայրենի և ընդունող պետությունների միջպետական հարաբերություններում: Իբրև քաղաքական դերակատարներ՝ նրանք ունակ են նույնիսկ միմյանց կապելու հայրենի պետության միջազգային և ներքին քաղաքականության ոլորտները:

Դեռևս 2000 թ. Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտության արդյունքները թույլ են տվել եզրակացնել, որ որևէ հակամարտությունից հինգ տարի անց հակամարտության վերսկսման ռիսկը վեց անգամ ավելի մեծ է այն հասարակություններում, որոնք Ամերիկայում ունեն խոշոր սփյուռք<sup>37</sup>: Սա միջազգային հարաբերություններում էթնիկ լոբբիստական խմբերի ազդեցության վերաբերյալ շատ կարևոր ցուցիչ է, ինչի տարբեր դրսևորումներին կանդրադառնանք ստորև՝ խուսափելով լոբբինգի ինստիտուտի և դրա առանձին ենթատեսակ հանդիսացող էթնիկ լոբբինգի վերաբերյալ կառուցվածքային ու գործառնական դատողություններից և առավել կենտրոնանալով միջազգային հարաբերություններում դրանց ազդեցության և հիմնական ուղղությունների վրա:

Հայրենիք-սփյուռք քաղաքական հարաբերություններում Շեյնն առաջարկում է դիտարկել չորս չափորոշիչ, որոնց հանրագումարը, ըստ հետազոտողի, պայմանավորում է այդ հարաբերությունների բնույթը. 1) հայրենի պետության/հասարակության թափանցելիություն, 2) հայրենիքի կողմից սփյուռքի ընկալում և հակառակը, 3) սփյուռքի և հայրենի պետության միջև ուժերի հավասարակշռություն, 4) հայրենի պետության արտաքին քաղաքականության շուրջ սփյուռքյան համախմբվածություն<sup>38</sup>: Ինչ վերաբերում է հայրենի պետության արտաքին քաղաքական կյանքում սփյուռքի ներգ-

---

<sup>36</sup> **Naim M.**, “The new Diaspora” Foreign Policy, July-August 2002, p. 95.

<sup>37</sup> **Shain Y.**, նշվ. աշխ., էջ 127:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 130:

րավվածությանը՝ Շեյնն առանձնացնում է միջազգային հարաբերություններում սփյուռքի ակտիվության երեք տիպ: Հաշվի առնելով գիտական գրականության մեջ սփյուռքի քաղաքական ազդեցությանը նվիրված ուսումնասիրությունների խիստ սակավաթիվ լինելը՝ Շեյնի առաջարկած տիպաբանությանն անդրադառնանք ստորև:

Առաջին մակարդակում հեղինակն անդրադառնում է սփյուռքի «պասիվ դերակատար» տեսակին: Խոսքն այն սփյուռքի մասին է, որը միջազգային հարաբերություններում ներգրավվում է իր կամքից անկախ և ոչ որպես իր գործունեության հետևանք: Սփյուռքի միջազգային դերակատարության այս տիպի համար առկա է չորս պատճառ. 1. Սփյուռքն ունի արտաքին (հայրենի պետության) օժանդակության կարիքը՝ իրեն ընդունող երկրին դիմակայելու համար: 2. Հայրենի պետությունները կարող են ձգտել ներկայացնելու պետությունից դուրս բնակվող իրենց հայրենակիցներին՝ երբեմն նույնիսկ անկախ վերջիններիս նման հակվածությունից: Միևնույն ժամանակ, այս մոտեցումը հայրենի պետությունների կողմից հյուրընկալ պետությունների վրա քաղաքական լծակներ կիրառելու նպատակ կարող է ունենալ: 3. Սփյուռքը չի կարողանում վերահսկել իր կարգավիճակը որպես հյուրընկալ երկրի լիարժեք մաս, ուստի ներգրավվում է հայրենիքի միջազգային գործերում: 4. Մյուս պատճառը սփյուռքի մշակութային-քաղաքական և խորհրդանշական ընկալումն է, ինչի լավագույն դրսևորումը Գերմանիայում հրեական սփյուռքի դերակատարությունն է գերմանա-հրեական հարաբերություններում:

Միջազգային հարաբերություններում սփյուռքի դրսևորման՝ Շեյնի առաջարկած երկրորդ տիպը ընդունող պետության արտաքին քաղաքականության վրա ակտիվ ազդեցություն ունեցող սփյուռքն է, ինչին արդեն անդրադարձել ենք սույն աշխատանքի համապատասխան հատվածում:

Երրորդը այն սփյուռքն է, որն իր քաղաքական ու տնտեսական

կապիտալով, ինչպես նաև ազգային ինքնության յուրովի ընկալմամբ էական ազդեցություն է ունենում հայրենի պետության արտաքին քաղաքականության վրա<sup>39</sup>:

Ակադեմիական քննարկման մեկ այլ խնդիր է այն նախադրյալների ու դրդապատճառների համախումբը, ինչը հնարավորություն է ստեղծում և սփյուռքին մղում իրականացնելու էթնիկ լոբբիստական գործողություններ: Մեր եզրահանգմամբ, **նման գործողությունների համար հիմնական նախադրյալը հյուրընկալ պետության ժողովրդավարական բնույթն է, իսկ դրդապատճառները հիմնված են լինում ազգային ինքնության, դրա ընկալման, մեկնաբանման և, ըստ այդմ, հայրենիքին օժանդակելու վրա:**

Հայրենի պետության արտաքին քաղաքականության ազդեցությունը ինչպես հայրենիքում, այնպես էլ դրանից դուրս ապրող հայրենակից-ժողովրդի վրա, արտաքին քաղաքականության առանցքային ազդեցությունը հայրենիքի ապագայի վրա, միջպետական հարաբերությունների համատեքստում սփյուռքի առանձին համայնքների վրա հայրենի պետության արտաքին քաղաքականության ուղղակի ազդեցությունը, ինչպես նաև սփյուռքում գործող կազմակերպությունների նեղ-կազմակերպական շահերի վրա հայրենի պետության արտաքին քաղաքականության ազդեցությունը մասնավոր դրդապատճառներ են սփյուռքյան համայնքների կողմից էթնիկ լոբբիստական կառույցների ձևավորման և միջազգային հարաբերություններում ուրույն դերակատարություն ստանձնելու փորձի համար:

**Հայրենի պետությունների՝ միջէթնիկ հակամարտություններում ներառված լինելու հանգամանքն** էական ազդեցություն ունի հայրենիք-սփյուռք-ընդունող պետություն հարաբերությունների վրա: Թեև սփյուռքի քաղաքական դերակատարության վերաբերյալ մեծածավալ աշխատանքներ կան, սակայն, մասնավորապես

---

<sup>39</sup> Shain Y., նշվ. աշխ., էջ 131–133:

միջէթնիկ հակամարտություններում սփյուռքի ընդգրկվածության վերաբերյալ աշխատանքները սակավաթիվ են: Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել այն ֆենոմենին, որ, անդրադառնալով հայրենի պետության միջէթնիկ հակամարտությանը, սփյուռքը, որպես կանոն, ձևավորում և առաջ է տանում սեփական քաղաքական տեսլականն ու օրակարգը, ինչը նաև բխում է սփյուռքում ձևավորված համայնքների ինքնության պահպանության շահերից և օգնում է բարձրացնելու համայնքի համախմբվածությունը:

Հակամարտությունների կարգավորման վերաբերյալ հայրենի պետության և էթնիկ լոբբիստական խմբերի դիրքորոշումների տարբերությունը կարող է բացատրվել նաև այն հանգամանքով, որ ազգային շահի լավագույնս արտահայտման առումով պետությունները կաշկանդված են միջազգային հարաբերությունների կարգավորումներով, մինչդեռ էթնիկ լոբբիստական խմբերը կաշկանդված չեն աշխարհակարգի պարտադրած սահմանափակումներով: Մասնավորապես, հաճախակի են դեպքերը, երբ հայրենի պետության և սփյուռքի համայնքների միջև վեճեր են առաջանում ոչ միայն ազգային ինքնության սահմանման, այլև հայրենիքի տարածքային սահմանների տեսլականի շուրջ, որոնք որոշակի ազդեցություն են ունենում միջպետական հակամարտությունների կարգավորման գործընթացի վրա՝ որպես կանոն երկարացնելով այդ ընթացքը: Համեմատության մեջ եթե դիտենք, սփյուռքը սովորաբար ավելի մաքսիմալիստական է լինում, քան հայրենի պետության քաղաքական վերնախավը:

Հատկապես հրեական սփյուռքի և հայկական սփյուռքի օրինակով ակնհայտ է, որ, չնայած ծագումնաբանական տարբերությանը և հիմնախնդրի դիսկուրսային էվոլյուցիայի առանձնահատկություններին, իսրայելա-պաղեստինյան և ղարաբաղա-ադրբեջանական հակամարտությունների կարգավորման գործընթացում երկուսն էլ համապատասխանաբար հանդես են գալիս որպես ինքնուրույն խաղացողներ, որոնց քաղաքական գործունեությունը

զուգահեռ է ընթանում հայրենի պետությունների պաշտոնական քաղաքականությանը:

Մասնավորապես, 1992 թ. օգոստոսի 12-ին ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության աջակցության ակտի» 907-րդ ենթաբաժինը (հայտնի որպես 907-րդ բանաձև), որով արգելվում էր ամերիկյան ուղղակի ֆինանսական աջակցությունը Ադրբեջանին, դարաբաղյան առաջին պատերազմի հետևանքով Ամերիկայի հայկական սփյուռքում ձևավորված քաղաքական օրակարգում էր: Այն իրացվեց Ամերիկայի հայ համայնքի և դրա լոբբիստական կառույցների գործունեությամբ, իսկ Հայաստան պետությունը, որպես այդպիսին, այդ հարցում մասնակցություն չունեւ:

Միջպետական հակամարտություններում էթնիկ լոբբիստական կազմակերպությունների քաղաքական վարքն ու ազդեցությունը ցույց են տալիս, որ հակամարտությունների լուծումը հաճախ ոչ թե պարզապես երկու, այլ երեք մակարդակ ունեցող գործընթաց է, որտեղ սփյուռքը դառնում է հայրենիքի ղեկավարների, իրենց հայրենիքի հակառակորդների, հյուրընկալող պետությունների կառավարությունների և վերջիններիս միջազգային դիվանագիտական գործունեության միջոցով խաղաղության գործընթացի դերակատար: Սփյուռքի՝ ինքնուրույն քաղաքական դերակատարության հանգամանքն էլ նրանց հնարավորություն է տալիս հանդես գալու որպես անկախ դերակատարներ՝ չնույնանալով հայրենի պետության հետ և թույլ տալով կատարել դիվանագիտական մանևրումներ:

Հարցը, թե արդյոք սփյուռքյան շրջանակներն իրավունք ունեն հրապարակավ դեմ արտահայտվելու հայրենի կառավարությունների պաշտոնական դիրքորոշմանը՝ կապված պատերազմի կամ արտաքին թշնամիների հետ խաղաղության գործարքի գնալու վերաբերյալ, բավական վիճելի է: Բենեդիկտ Անդերսոնի դիտարկմամբ, չնայած սփյուռքն իր հայրենի պետության համար «գայթակղիչ է համարում ինքնության քաղաքականություն վարելը», սակայն «քաղաքացիություն չունեցող խմբերի մասնակցությունը չի

ենթադրում այդ խմբերի կողմից իրականացվող հեռահար քաղաքականություն»<sup>40</sup>:

Չնայած սփյուռքի և հայրենի պետությունների օրինաչափորեն առկա խնդիրներին՝ սփյուռքը, որպես կանոն, հայրենի պետության համար շարունակում է մնալ վստահելի գործընկեր միջազգային հարաբերություններում: Ընդ որում, այդ գործընկերության մեջ սփյուռքյան համայնքների պահանջը դրսևորվում է ազգային ինքնության ամրապնդման, հայրենի պետության գործերում սփյուռքի մասնակցայնության մեծացման և այլ ձևերով, ինչը հայրենի պետության համար առավել նպաստավոր է, քան տարաբնույթ այլ շահերի վրա հիմնված միջպետական համագործակցությունները: Հայրենիք-սփյուռք հարաբերություններն առավել են սերտանում, իսկ առկա խնդիրներից ուշադրությունն առժամանակ շեղվում է, երբ հակամարտությունները սրվում են, և վտանգվում է հայրենիքի գոյությունը: Այդ պարագայում սփյուռքի աջակցությունը կարող է կարևոր նշանակություն ունենալ հայրենիքի բարեկեցության և անվտանգ գոյության համար, ապահովել ռեսուրսներով և զենքով, ծառայել որպես կամավորականների աղբյուր, հանդես գալ որպես քարոզչական հարթակ, լոբբինգով ազդել ընդունող կառավարությունների և միջազգային այլ խաղացողների վրա:

Լինելով շատ ավելի հարուստ, քան իր հարազատ երկրում բնակվող բնակչությունն է, սփյուռքը, ոչ բոլոր դեպքերում, բայց հաճախ ավելի լավ է կարողանում ֆինանսավորել հակամարտություններում ներառված հայրենի պետության կարիքները<sup>41</sup>: Ուշագրավ է Փոլ Քոլլերի այն դիտարկումը, որ միջազգային կայունության տեսանկյունից «ոչ միայն քաղաքացիական պատերազմները զսպելու համաշխարհային ջանքերը պետք է կենտրոնանան սոսկ ապստամբության հիմնավորվածությունը նվազեցնելու վրա», այլև «հարուստ պետությունների կառավարությունները պետք է օրինա-

---

<sup>40</sup> **Anderson B.**, “The New World Disorder,” *New Left Review* 193, 1992, p. 3–13.

<sup>41</sup> **Shain Y.**, նշվ. աշխ., էջ 115:

կանության սահմաններում պահեն սփյուռքյան կազմակերպությունների վարքագիծը»<sup>42</sup>:

Այն հակամարտություններում, որոնցում ներգրավված է հայրենի պետությունը, սփյուռքի քաղաքական վարքը որոշվում է վերջինիս կառուցվածքում առկա համայնքների հետաքրքրություններով և արժեշահային համակարգով: Հիմնական գործոնն իհարկե ինքնության պահպանման մտահոգությունն է, իսկ արտաքին վտանգը ինքնության պահպանման կարևոր խթան է: Այլ մտահոգությունների շարքը կարելի է դասել, օրինակ, սփյուռքյան կազմակերպությունների քաղաքական հետաքրքրությունները հատկապես հայրենի կառավարությունների հետ հարաբերություններում, ինչպես նաև հակամարտությունների ազդեցությունը սփյուռքի ֆինանսական միջոցների գոյացման վրա:

Այսպիսով, միջպետական հակամարտությունների լուծման ժամանակ հայրենի պետությունները կարող են դիմել ինչպես սեփական, այնպես էլ օտար-համախոհ ազգակցական դերակատարների, որոնք կարող են նպաստել հակամարտության քաղաքական կարգավորմանը կամ խոչընդոտել այն, և որոնք հետաքրքրված են հակամարտությամբ և դրա արդյունքներով:

Ակնհայտ է, որ սփյուռքի դերը հակամարտությունների շարունակականության և լուծման գործում կարող է այնքան հզոր լինել, որ հայրենի պետության ղեկավարները չկարողանան անտեսել այն: Ավելին, պետք է լրջորեն հաշվի առնել, որ սփյուռքը և դրա ղեկավարները պարզապես իրականությունից կտրված ազգայնականներ չեն: Նրանք կարող են առավել նպաստավոր դիտանկյունից տեսնել հակամարտության բազմաբնույթ ծալքերը՝ իրենց հեռավորության և միջազգային ներգրավվածության շնորհիվ:

**Սփյուռքից հայրենիք ուղղվող ֆինանսական հոսքերի** նույնիսկ առավել մակերեսային ուսումնասիրությունը բացահայտում է

---

<sup>42</sup> **Collier P.**, “Policy of Post-conflict Societies: Reducing the Risk of Renewed Conflict”, Paper at the Economics of Political Violence Conference, March 18–19, 2000, Princeton University.



այն հսկայական նշանակությունը, որ դրանք ունեն ինչպես հայրենի, այնպես էլ ընդունող երկրների, ինչպես նաև ընդհանրապես միջազգային հարաբերությունների համար՝ տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային զարգացումների առումով: Գլոբալիզացիայի և հետադյուրացման տեխնոլոգիաների արդի աճի պայմաններում, այնուամենայնիվ, մարդիկ շարունակում են հուզականորեն և քաղաքականապես նվիրված մնալ իրենց հայրենակիցների համայնքային կյանքին ու կացությանը: Հայրենիքի հետ սփյուռքի կապը շարունակում է մնալ միջազգային հարաբերությունների առանցքային գործոններից մեկը: Այն սովորաբար արտահայտվում է բացահայտ, հիմնականում ժամանակակից լիբերալ պետություններում, որտեղ ծագման երկրի նկատմամբ հավատարմությունը հաջողությամբ համատեղվում է ընդունող երկրի հանդեպ հավատարմության հետ: Ինչպես կոտեսենք սույն ենթագլխի վերջին բաժնում, աշխարհն ավելի հյուրընկալ է դարձել «բազմակի հավատարմությունների» հանդեպ: Հայրենի երկրները, որոնք նախկինում իրենց քաղաքացիներին սահմանափակում էին միայն մեկ քաղաքացիություն ունենալու իրավունքով, այժմ նրանց երկքաղաքացիության հնարավորություն են տալիս: Այդպիսով հյուրընկալ երկրներն իրենց տարածքում ձևավորված սփյուռքին հնարավորություն են տալիս լայնորեն պահպանելու տնտեսական և քաղաքական կապերը հայրենի երկրի հետ: Ավելին, «երբ միջազգային ֆինանսական շուկաների սահմանափակումների վերացումը զուգորդվում է նոր տեխնոլոգիաների զարգացմամբ, փողը տուն ուղարկելն ավելի հեշտ և ավելի էժան է դառնում, քան երբևէ»<sup>43</sup>: Հետևաբար, սփյուռքի ֆինանսական հոսքերը հայրենի երկրների համար դարձել են կարևոր տնտեսական ներուժ:

Շեյնն առանձնացնում է սփյուռքի համայնքներին առնչվող ֆինանսական փոխանցումների երեք մակարդակ՝ 1) էթնիկ համայնքներից ֆինանսական փոխանցումներ դեպի հայրենիք,

---

<sup>43</sup> Naim M., նշվ. աշխ., էջ 95–96:

2) փոխանցումներ հայրենիքից դեպի հյուրընկալ պետության էթնիկ համայնքներ, 3) ցանցային փոխանցումներ սփյուռքի ներսում: Մեզ հետաքրքրող առաջին կետը հեղինակն անվանում է ներէթնիկ-միջպետական փոխանցումներ<sup>44</sup>:

Սփյուռքը, ֆինանսական միջոցներ ուղարկելով հայրենիք, ձգտում է իրեն զգալ հայրենիքի մաս և հայրենիքի հետ հարաբերություններում վանել երկվության զգացումը: Նկատենք, որ հայրենի պետության վրա սփյուռքի տնտեսական ազդեցությունը պետք է տարանջատել էթնիկ լոբբինգի ֆինանսական ազդեցությունից կամ վերջինս դիտել իբրև առաջինի ենթատեսակ: Ըստ այդմ՝ առաջարկում ենք առանձնացնել էթնիկ լոբբինգի ֆինանսատնտեսական դերակատարության երկու մակարդակ՝ 1) այլ պետությունների և հայրենի երկրների հետ ֆինանսական կապերի ուժեղացում, օժանդակությունների, հատկացումների, գործարար շրջանակների ներգրավում, 2) սփյուռքի համայնքներում էթնիկ լոբբինգ իրականացնող խմբերի ազդեցությունների օգտագործում ուղղակի սփյուռքյան ներգրավումների համար, որոնք հիմնականում ունեն եռամաս կառուցվածք՝ սփյուռքին կապակցված ներդրողներ, սփյուռքին կապակցված կազմակերպությունների ներդրումներ, սփյուռքին կապակցված արտաքին ուղղակի ներդրումներ: Մասնավորապես, ԱՄՆ-ում ամենաակտիվ հայկական և հրեական էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության արդյունք է այն, որ գոնե մինչև 2000-ականների սկիզբը Հայաստանն ու Իսրայելը մեկ շնչի բաժնով ԱՄՆ ամենամեծ արտաքին օժանդակություն ստացող երկրներն էին: Նման ֆինանսական օժանդակություն հնարավոր է լինում ստանալ նաև սփյուռքյան գործիչների՝ խոշոր կորպորացիաների որոշումների կայացման մարմիններում ներգրավված լինելու արդյունքում:

Հայրենիքի վրա սփյուռքի ֆինանսա-քաղաքական ազդեցության ամենաազդեցիկ գործոնը հատուկ սփյուռքի համար նախա-

---

<sup>44</sup> Shain Y., նշվ. աշխ., էջ 36:

տեսված պետական պարտատոմսերի (diaspora bonds) թողարկումն է: Այս գործընթացի նախաձեռնությունը, որպես կանոն, գալիս է հենց հայրենի պետություններից, որոնք հրատապ կամ հատուկ ֆինանսական օժանդակություն ստանալու համար դիմում են իրենց սփյուռքին:

Սփյուռքի պարտատոմսերի հարուստ պատմությունը սկսվում է 1930-ական թվականներից՝ Ճապոնիայի և Չինաստանի կողմից արտասահմանում առաջարկվող պարտատոմսերից, ապա շարունակվում Իսրայելի Պետության կողմից 1951 թ. առաջարկվող պարտատոմսերով և դարավերջին հասնում հնդկական պարտատոմսերին: Սփյուռքյան պարտատոմսեր են թողարկել նաև Բանգլադեշը, Ֆիլիպինները, Մեքսիկան, ինչպես նաև Աֆրիկայի, Կենտրոնական և Հարավարևելյան Ասիայի, Եվրոպայի շատ այլ երկրներ: Ա. Չենդերը նույնիսկ առաջարկում է սփյուռքյան պարտատոմսերի ակադեմիական ուսումնասիրությունն առհասարակ օգտագործել սփյուռքյան մոդելների հետազոտությունների համար: Հեղինակը, ընդգծելով խնդրի իրավաքաղաքական վերլուծության կարևորությունը, սփյուռքի պարտատոմսերը ներկայացնում է որպես կարևոր մեխանիզմ, որով ֆինանսական խնդիրներ ունեցող ժողովուրդները կարող են օգտվել իրենց համեմատաբար հարուստ սփյուռքի հնարավորություններից<sup>45</sup>:

Այդպես, 1998 թ. Հնդկաստանի կառավարության կողմից հինգ միջուկային զենքերի փորձարկմանը հետևեց այդ երկրի նկատմամբ ԱՄՆ գլխավորած միջազգային պատժամիջոցների արշավը, ինչի հետևանքով հնդկական տնտեսության վիճակը էականորեն վատթարացավ: Ստեղծված իրավիճակի հաղթահարման համար հնդկական կառավարությունը թողարկեց «Վերածնվող Հնդկաստան» անվանումը կրող պետական պարտատոմսեր, որոնք հատուկ նախատեսված էին Եվրոպայի և Միացյալ Նահանգների

---

<sup>45</sup> **Chander A.**, “Diaspora Bonds”, New York University Law Review 76, 2001, p. 1013–1014.

հնդկական սփյուռքի համար: Արդյունքում հավաքվեց ավելի քան 4 մլրդ դոլար, ինչը մեղմացուցիչ նշանակություն ունեցավ տնտեսական ճգնաժամի համար<sup>46</sup>:

Լիովին հաջողված էր նաև Իսրայելական Պետության 1950-ական թթ. պարտատոմսային քաղաքականությունը՝ վարչապետ Դավիթ բեն Գուրիոնի առաջնորդությամբ: Իսրայելի անկախությունն ու ինքնիշխանությունը բարձրացնելու համար 1950 թ. սեպտեմբերի 3-ին վարչապետը ամերիկա-հրեական առաջնորդներին և իսրայելցի ղեկավարներին ներկայացրեց կառավարության պարտատոմսային քաղաքականությունը, որը, Կենսեթի կողմից օրենսդրական ուժ ստանալուց հետո, մեկնարկեց 1951 թ. մայիսին: Վաճառքի արդյունքը 52 մլն դոլար էր: Մինչև 1967 թվականը Ամերիկյան գնել էր 850 միլիոն դոլարի պարտատոմս, իսկ Ամերիկայի հրեական համայնքը «Միացյալ հրեական կոչ» կազմակերպության միջոցով գնել էր 1 մլրդ դոլարի պարտատոմս<sup>47</sup>:

Այսպիսով, ակնհայտ է, որ հայրենիք ուղղվող սփյուռքյան ֆինանսական միջոցները էական ազդեցություն կարող են ունենալ ազգային ինքնության զարգացման, հայրենի պետության անկախության ու ինքնիշխանության բարձրացման և միջազգային հարաբերությունների խթանման առումով: Այս դեպքում սփյուռքի ֆինանսական հոսքերը նաև հանդիսանում են միջազգային հարաբերությունների որոշակի գործոն:

Սփյուռքի ֆինանսական հոսքերն իրենց բնույթով գլոբալիստական ֆենոմեն են, սակայն հաճախ հակառակ ազդեցություն են ունենում հայրենի պետությունների վրա՝ խթանելով ազգային ինքնության զարթոնք՝ դրանով իսկ փաստելով սփյուռքի կայուն դերն ու ազդեցությունը ազգային պետության պետական կառավարման համակարգում:

Հայրենի պետության վրա սփյուռքի քաղաքական ազդեցությո-

---

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 1064:

<sup>47</sup> **Shain Y.**, նշվ. աշխ., էջ 56:

յան գործոններից մեկն էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով հայրենի պետության հասարակության վրա ազդեցության փորձերն են՝ վերջինիս շրջանում սփյուռքյան տրամադրություններ և հույզեր սերմանելու համար: Այս գործընթացը մեծ մասամբ իրականացվում է սփյուռքի ֆինանսական միջոցները և մարդկային ներուժը հայրենիք ուղղորդելով: Մանավանդ քաղաքական ներկա զարգացումներում, երբ քաղաքացիական հասարակության ինստիտուտները հաճախ մարտահրավեր են նետում պետական կենտրոնաձիգ կառավարման համակարգին, քաղաքացիական հասարակության միջոցով սփյուռքի ազդեցության ընդլայնման գործընթացը զարգացման միտում է դրսևորում: Նկատենք, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտները էթնիկ լոբբիստական կազմակերպություններին կազմակերպա-իրավական գործունեության հնարավորություն են ընձեռում և՛ ընդունող երկրում, և՛ հայրենի պետությունում: **Դրանով էթնիկ լոբբինգն իրեն լիարժեք դրսևորում է որպես հանրային քաղաքականության անբաժան մաս:**

Տարածվելով արևմտյան ժողովրդավարական երկրներում՝ սփյուռքի համայնքները դառնում են ժողովրդավարացման պոտենցիալ գործակալներ: Եթե արևմտյան հասարակություններում սփյուռքի համայնքները սոցիալիզացվեն ժողովրդավարական արժեքներով, ապա կարելի է ակնկալել, որ նույն արժեքները նրանք կփորձեն արտահանել իրենց հայրենի երկրներ, ժողովրդավարացնել դրանք: Այնուամենայնիվ, այդ գործընթացը բազմաբովանդակ է: Սփյուռքի որոշ համայնքներ խիստ ազգայնական են, մյուսները՝ համակրանք ունեն ոչ լիբերալ ռեժիմների նկատմամբ, ոմանք լիբերալ ժողովրդավարության վճռական կողմնակիցներ են, իսկ մյուսները լուռ աջակցում են ընտրական բազմակարծությանը, բայց ոչ լիբերալիզմին<sup>48</sup>:

---

<sup>48</sup> Koinova M., “Diasporas and democratization in the post-communist world”, *Communist and Post-Communist Studies* 42, 2009, p. 42.

Սփյուռքը կարող է միջոցներ փոխանցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և դառնալ իր հայրենիքում ժողովրդավարական քաղաքական արշավներ վարելու կարևոր գործոն:

**Հայրենի պետությունների ազդեցությունը ընդհանուր սփյուռքի վրա** ավելի մեծ է, քան սփյուռքի՝ էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների, քանի որ վերջիններս ունեն իրենց քաղաքական օրակարգն ու ռազմավարական նպատակները, որոնք կարող են տարբերվել հայրենի երկրի կառավարության քաղաքականությունից: Օրինակ՝ սփյուռքի վրա հայրենի պետության ազդեցության գործիք կարող է լինել սփյուռքի կազմակերպությունների խորախուսումը՝ հայրենի երկրի հետ կապերը պահպանելու, դրամական փոխանցումներ ապահովելու կամ հյուրընկալ պետության քաղաքացիներ դառնալու առումով: Նման գործողությունները որքան էլ ազդեցություն ունենան սփյուռքի համայնքների վրա, այնուամենայնիվ, նույն արդյունքը չեն կարող ունենալ էթնիկ լոբբինգի վրա:

Որոշ դեպքերում հայրենիքի կառավարությունը (օրինակ՝ Չինաստանի, Մեքսիկայի և Հնդկաստանի) խթանում է տնտեսության ազատական զարգացումը և ձգտում ավելի ներգրավվելու համաշխարհային տնտեսության մեջ: Դա մեծացնում է այդ երկրի սփյուռքի կարևորությունը և սփյուռքի ու հայրենի երկրի միջև ձևավորում առարկայական տնտեսական շահ<sup>49</sup>:

Էթնիկ համայնքների ազդեցությամբ ի շահ հայրենի երկրի ընդունված որոշումներն ընդունող պետություններին դրդում են նույն խողովակով ազդեցություն ունենալու նաև այլ պետությունների վրա: Մասնավորապես, ինչպես նկատեցինք սույն աշխատանքի համապատասխան բաժնում, արտաքին ուղղակի ֆինանսական աջակցության մասով, շնորհիվ հայկական ու հրեական համայնքների, Հայաստանն ու Ադրբեջանը բնակչության մեկ շնչին բաժին

---

<sup>49</sup> Huntington S., “Who are we?”, p. 277–278.

ընկնող ծավալով ամերիկյան օժանդակության խոշորագույն շահառուներն են: Տրամաբանական է, որ նման օժանդակությունների, առավել ևս քաղաքական օժանդակությունների պարագայում ընդունող պետությունը պետք է փորձի մեծացնել իր ազդեցությունը այլ պետությունների վրա նաև համայնքային ղեկավարության ճանապարհով: Պատահական չէ, որ միջազգային առաջնորդների ելույթներում պարբերաբար հիշատակվում է ընդունող երկրում այս կամ այն համայնքի դերն ու պատմությունը: Նման ելույթները կամ հրապարակային տեքստերը հատկապես վերաբերում են Հայաստանին, Իսրայելին և այն երկրներին, որոնք ընդունող պետություններում ունեն կայացած սփյուռք:

Գ. Շեֆերը սփյուռքում առանձնացնում է մասնակցայնության հետևյալ խմբերը՝ առանցքային, մարգինալ և քնած<sup>50</sup>: Իր հերթին, Յ. Շեյնն առանձնացնում է՝ հիմնական անդամներ, պասիվ անդամներ և լուռ անդամներ<sup>51</sup>: Հստակ է, որ էթնիկ լոբբինգի պարագայում գործ ունենք սփյուռքի առանցքային կամ հիմնական անդամների հետ, որոնք էլ ձևավորում են սփյուռքի էլիտա կոչվածը: Այսպիսով, էթնիկ լոբբինգ իրականացնող անձանց պարագայում գործ ունենք սփյուռքի էլիտաների հետ, որոնց **երկվության մարտահրավերը** կքննարկենք ստորև:

Ռ. Բրուքեյքերը նկատում է, որ սփյուռքը հաճախ հանդես է գալիս որպես պատկանելիության էութենականացման այլընտրանք: Այն նաև հնարավորություն է տալիս ապատարածականացնելու ինքնությունը<sup>52</sup>: Սա առավել խիստ է արտացոլվում սփյուռքյան էլիտաների պարագայում՝ վերջիններիս կանգնեցնելով ինքնության երկվության մարտահրավերի առջև: Դա էլ նախևառաջ բխում է երկակի քաղաքացիության (dual citizenship) փաստից, ինչի հետևանքով մեծացել են

---

<sup>50</sup> Sheffer G., Diaspora Politics at Home Abroad, 2006, p. 100:

<sup>51</sup> Shain Y., նշվ. աշխ., էջ 130:

<sup>52</sup> Brubaker R., The “diaspora” diaspora, Ethnic and Racial Studies, vol. 28 No. 1 January, 2005, p. 12:

քաղաքացիության բնորոշ հատկանիշների անորոշությունները: Քաղաքացիությունը ոչ թե պետության կողմից անհատներին շնորհվող ազգային կարգավիճակ է, այլ վերազգային իրավունք: Բացի այդ, էլիտաներն ունեն ավելի մեծ անդրազգային հետաքրքրություններ, քան ոչ էլիտաները: Այս հանգամանքը նույնպես կարող է ազեցություն ունենալ էլիտաների ազգային հանձնառությունների և հետաքրքրությունների վրա: Որոշակի վերապահումներով կարելի է համաձայնել Հանթինգթոնի այն պնդմանը, որ անդրազգային ինստիտուտներում և ցանցերում ներգրավվածությունը ոչ միայն ձևավորում է համաշխարհային վերնախավը, այլև կարևոր է ազգերի ներսում էլիտար կարգավիճակ ձեռք բերելու համար: Ավելի քիչ հավանական է, որ զուտ ազգային ինքնությանը հավատարիմ մեկն իր անձնական և խմբային շահերի տեսանկյունից կարողանա իրեն դրսևորել բիզնեսում, ակադեմիական կյանքում, մեդիա դաշտում, մասնագիտության մեջ, քան մեկը, ով անցնում է այդ սահմանները: Երկակի քաղաքացիությունը ծառայում է այն երկրների շահերին, որոնց հետ անհատները կապված են քաղաքացիա-իրավական հարաբերություններով: Այն լեգիտիմացնում է երկակի ինքնությունը և երկակի լոյալությունը: Քաղաքացիության ինստիտուտը քիչ կարևորություն է տալիս ինքնությանը և ավելի կարևոր է համարում հանրային ծառայությունը: Երկքաղաքացիությունն ունի նաև ավելի գործնական հետևանքներ: Այն խրախուսում է քաղաքացիներին՝ հայրենի երկրներում պահպանելու և, հնարավոր է, ընդլայնելու իրենց պարտավորություններն ու ներգրավվածությունը, այդ թվում՝ տասնյակ միլիարդավոր դոլարների տրանսֆերները, որոնք ուղարկվում են հարազատներին՝ բիզնեսին և զարգացման ծրագրերին աջակցելու նպատակով: Հանթինգթոնը, ի թիվս այլ հանգամանքների, նաև երկքաղաքացիության աճն է համարում էթնիկ լոբբինգի իրականացման հնարավորություն<sup>53</sup>:

Այսպիսով, էթնիկ լոբբինգը արդի քաղաքական գործընթացնե-

---

<sup>53</sup> **Huntington S.**, “Who are we?”, p. 205–213.



րում սփյուռքի քաղաքական գործունեության գործառնողն է: Ըստ այդմ՝ այն հանդես է գալիս իբրև քաղաքական գործընթացի մակրոմակարդակի դերակատար, ինչն ամրապնդվում և զարգանում է անդրազգային քաղաքական կազմավորումների աճող ազդեցության, գլոբալիզացիայի և տեղեկատվահաղորդակցական հնարավորությունների ընդլայնման պարագայում: Հայրենի պետությունների՝ սփյուռքի համայնքներին քաղաքականապես ապավինելու միտումները շարունակական աճ են գրանցում, զուգահեռաբար աճում է ընդունող պետությունների հետաքրքրությունը՝ էթնիկ համայնքների միջոցով վերջիններիս հայրենի կառավարությունների վրա ազդեցություն գործելու առումով: Հայրենի պետությունները հաճախ միջամտում են այլ պետությունների ներքին գործերին՝ փորձելով վերջիններիս տարածքում ունենալ կայուն, կազմակերպված և քաղաքական կշիռ ունեցող համայնքներ: Այսպիսով, միջազգային հարաբերությունների սփյուռքյան ոլորտը բավական բազմաշերտ տարածություն է, որտեղ խաչաձևվում են պետությունների ներքին ու արտաքին շահերը:

Այնուամենայնիվ, անկախ քաղաքակրթական միջավայրից, ընդունող պետության հասարակական-քաղաքական հարաբերություններից և քաղաքական մշակույթից՝ էթնիկ համայնքները պահպանում են հավաքական ինքնության օբյեկտիվ բաղադրիչներ՝ ընդհանուր պատմություն, հիշողություն և ամենակարևորը՝ հայրենիքի օբյեկտիվ իրականություն: Հայրենիքը ծառայում է որպես ընդհանուր ազգային ինքնության ֆիզիկական մարմնավորում, և նրա քաղաքական ու տարածքային ճակատագիրը խոր ազդեցություն ունի սփյուռքի սուբյեկտիվ ինքնության վրա: Այսպիսով, և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ գործոնները համատեղվում են ազգային ինքնության և անդրազգային համայնքային քաղաքականության ձևավորման համար:

Հետաքրքիր է, որ ինքնության երկվության զգայականի կառավարումը գլխավորապես դրսևորվում է հայրենի պետությունների հետ հարաբերություններում, մինչդեռ ընդունող երկրի հետ հարաբերություններում այն կամ չի դրսևորվում, կամ հակառակ դրսևորումն է ունենում:

Ափյուռքյան էլիտաների ինքնության երկվությունը անխուսափելի մարտահրավեր է, որի հաղթահարումը հնարավոր է երկու ինքնությունների ոչ թե դիֆուստմիայի, այլ կոնվերգենցիայի միջոցով, ինչը հնարավորություն կտա հավասարապես բավարարելու երկու ինքնությունների պահանջմունքները և սպասարկելու դրանք՝ չօտարվելով ո՛չ հայրենի և ո՛չ ընդունող պետություններից:

### **1.3 Էթնիկ լոբբինգը՝ որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ և ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման դերակատար**

Քաղաքական գիտության մեջ արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և ցանցային փոփոխությունների ու անորոշության պայմաններում հասունացել է դեռևս 20-րդ դարի 50-ական թվականներին մեկնարկած և այժմ էլ շարունակվող քաղաքական զարգացման ու արդիականացման՝ լատինա-ամերիկյան, աֆրիկյան և հետխորհրդային փորձի համակարգման անհրաժեշտությունը, քանի որ քաղաքական գործընթացում էթնոմշակութային առանձնահատկությունների անտեսման պատճառով շատ երկրները կանգնել են քաղաքական զարգացման ճգնաժամերի առաջ: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ քաղաքական արդիականացման գործընթացում չի կարևորվել քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման հիմք:

«Արդիականացում» հասկացությունը ներառում է անցումը ավանդական տիպի պետությունից դեպի արդիական պետություն՝ ապահովելու համար քաղաքական համակարգի հաստատությունների ժողովրդավարական կառավարման որակական զարգացումը<sup>54</sup>: Քաղաքական արդիականացման գլխավոր նախադրյալներն են իր խորհրդանիշներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի և արդյունավետ վարչական մեքենայի ստեղծումն ու

---

<sup>54</sup> Kaarbo J., James R.L., Global politics, 9<sup>th</sup> edition. New York, 2008, p. 386.

քաղաքական գործընթացի կանխատեսելի ընթացքը: Պատմականորեն արդիականացումը ենթադրում է քաղաքական կառուցվածքի և մշակույթի փոփոխություններ, որոնք, որպես հասարակության համընդհանուր կերպափոխություն, ընդգրկում են աշխարհիկացման (սեկուլյարիզացիա), ինդուստրացման, սոցիալական շարժունակության, կենսամակարդակի աճի, գրագիտության, կրթության և ԶԼՄ-ների տարածման, ազգային համախմբվածության, բնակչության քաղաքական մասնակցայնության ընդլայնման երևույթները:

Համադրելով Լատինական Ամերիկայում, Հարավային Եվրոպայում և Աֆրիկայում քաղաքական գործընթացների արդյունքները՝ արդեն 1970–1980-ական թվականներին քաղաքական արդիականացման տեսաբանները եզրակացրին, որ արդիականացումը պայմանավորված է սոցիալ-մշակութային գործոններով (մարդաբանական տիպ, ազգային ինքնություն, համընդհանուր նորմերի ընդունման աստիճան, քաղաքական զարգացման նպատակ): Փաստորեն, արդիականացումը կարող էր տեղի ունենալ միայն սոցիալական շերտերի արժեքային կողմնորոշումների փոփոխության և հասարակության քաղաքական մշակույթի շարունակական զարգացման պայմաններում: Մինչդեռ նշված նպատակների համար իրականացված փոփոխությունները որպես վեկտորային՝ անընդհատ վերընթաց ու անշրջելի ազատականացման գործընթաց դիտարկելու հետևանքով դուրս մղեցին արդիականացման քաղաքակրթական ասպեկտի և սոցիալական արժեքի հարցերը: Արդեն 1970-ականների կեսերից բացահայտվեց քաղաքական արդիականացումը՝ որպես արդյունքի կառավարում և խմբային արժեքաշահային համակարգի բնականոն ազատականացման վեկտորային մոդելի անտեսման փորձ: Արդիականացման հիմնադրույթները կոշտ քննադատության ենթարկվեցին հատկապես ավանդույթ-արդիություն համատեքստում<sup>55</sup>: Հետխորհրդային տարած-

---

<sup>55</sup> Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, էջ 7:

քում ժողովրդավարության անցման արդյունքներն ակնհայտորեն վկայում են, որ վեկտորայնությունը (գծային ազատականացում) հանգեցրել է քաղաքական զարգացման ճգնաժամերի<sup>56</sup>:

Այդ ամենի հետևանքով հետխորհրդային երկրներում քաղաքացիների ակնկալիքները չեն արդարացել, այսինքն՝ տեղի է ունեցել «սպասումների հիասթափություն», ինչն էլ դրդել է քաղաքացիներին օտարվելու սեփական պետությունից և համայրելու կամ ձևավորելու տարբեր երկրներում սեփական էթնիկ համայնքները: **Բայց սփյուռքի քաղաքական դերակատարության շարունակական աճի պարագայում սեփական պետությունից օտարված քաղաքացիները հնարավորություն ունեն բազմամշակութայնության ներկա դարաշրջանում վերագտնելու սեփական ինքնությունն ու պաշտպանելու այն:**

Փաստորեն, քաղաքական արդիականացումը մի մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է արժեքների ու շահերի իր համակարգի, քաղաքական գիտակցությանը համապատասխանող ընտրությունների և քաղաքական ու քաղաքացիական հաստատությունների կայացմամբ:

Աշխատանքի սույն ենթագլխի նպատակն է գիտավերլուծական հարացույցի շրջանակներում վերլուծել քաղաքական արդիականացման ու զարգացման հայաստանյան դրսևորումները և բացահայտել հայկական սփյուռքի էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարության հնարավորությունը խնդրո առարկա գործընթացներում: Ակնհայտ է, որ քաղաքակրթական և ազգային առանձնահատկությունները հաշվի չառնելու դեպքում քաղաքական զարգացման ճգնաժամերը պարբերաբար կրկնվելու հնարավորություն ունեն, և դրանց անտեսումը նպաստում է «չհաջողված» և «փխրուն» պետության առաջացմանը:

Ինչպես նշեցինք, սփյուռքի քաղաքական դերակատարության

---

<sup>56</sup> **Մարգարյան Մ.**, Ժողովրդավարացման երրորդ փլիք. անցումային հասարակությունների գծային զարգացման բնույթը, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2005, N 2, էջ 126–140:

հիմնական գործառնողը էթնիկ լոբբինգի ինստիտուտն է: Հետևաբար, ի դեմս սփյուռքի և դրա քաղաքական դերակատարությունն ապահովող հիմնական ինստիտուտի, գործ ունենք ազգային-պետական ռեսուրսի հետ, որը կարող է քաղաքական դերակատարություն ստանձնել հայրենի պետության քաղաքական արդիականացման և զարգացման գործում: Որպես այդպիսին՝ քաղաքական արդիականացման և զարգացման հիմքի վրա տեղի ունեցող գործընթացներն անհրաժեշտ է ենթարկել տեսամեթոդաբանական վերլուծության, որը հնարավորություն կտա կարևորելու դերակատարների, քաղաքական միջերի և սիմվոլների միջոցով կազմակերպվող լոբբիստական գործունեության ռացիոնալի և իռացիոնալի փոխհարաբերությունները:

Այսպիսով, քաղաքական գործընթացը քաղաքականության տեղակայումն է ժամանակի և տարածության մեջ՝ իբրև դերակատարների ռազմավարական և իրավիճակային գործողությունների ու փոխազդեցությունների հաջորդականություն, ինչը պայմանավորված է որոշակի շահերի և արժեքների իմաստային փոփոխություններով: Հետևաբար, առանց քաղաքական փոփոխության հնարավոր չէ վերլուծել և կանխատեսել քաղաքական դերակատարների ազդեցությունը քաղաքական համակարգի ինստիտուտների զարգացման, ինչպես նաև արտաքին միջավայրի փոխգործակցության վրա: Քաղաքական զարգացումը քաղաքական որակական փոփոխությունների կուտակման գործընթաց է, որը վերաբերում է քաղաքական գործընթացի դերակատարների, հատկապես շահային խմբերի արժեշահային համակարգի էվոլյուցիային:

Քաղաքական գիտության մեջ քաղաքական զարգացման վրա ազդող հիմնական գործոնների և դրանց շարժիչ ուժերի գործունեության վերաբերյալ մոտեցումները կարևորում են քաղաքական համակարգի կառուցվածքագործառնական գրեթե բոլոր դերակատարներին: Մեր աշխատանքի շրջանակներում հատկապես հետաքրքիր է Կ. Դոյչի՝ դեռևս 1960-ական թթ. առաջ քաշած այն տեսակետը, որ **քաղաքական զարգացման հիմնական գործո-**

նը բնակչության մոբիլիզացումն է՝ քաղաքացիների (հատկապես էթնիկ խմբերի) զուգամիտված ներգրավումը քաղաքական զարգացման գործընթացներում՝ որպես ակտիվ դերակատարներ տնտեսական նորարարություններում, սոցիալական կառուցվածքի և արժեքների ու մոդելների համակարգի փոփոխություններում<sup>57</sup>: Ուշագրավ է, որ դերակատարների արժեհամակարգային և վարքաբանական փոփոխությունները որպես քաղաքական զարգացման գործոն են դիտարկում նաև Ֆ. Ֆուկույաման<sup>58</sup>, Դ. Ափթերը, Ա. Ինկելսը, Ռ. Ինգլեհարթը և ուրիշներ<sup>59</sup>:

Կարևորելով արդի քաղաքական զարգացումների տրամաբանության և դինամիկայի ընկալման պատմական ենթատեքստը՝ անհրաժեշտ ենք համարում շեշտադրել պետության՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտի կողմից էթնիկ լուրբինգի շահերի հաշվետվողական կառավարման ու կանխատեսման շահագրգռվածությունը: Անդրադառնալով պետության ինստիտուտի կենսունակության խնդրին՝ Ֆուկույաման ընդգծում է, որ քաղաքական զարգացման պատմության մեջ կատարված խոշոր փոփոխություններից մեկն էլ այն է, որ մեծանում է արտաքին ազդեցությունը ազգային ինստիտուտների վրա<sup>60</sup>:

Ֆուկույաման, հենվելով Ս. Հանթինգթոնի «Քաղաքական կարգը փոփոխվող հասարակություններում» գրքի<sup>61</sup> հիմնական գաղափարների վրա, շաղկապում է քաղաքական զարգացումն ու քաղաքական արդիականացումը: Նախ հեղինակը նկատում է, որ քաղաքական զարգացումն ունի իր տրամաբանությունը, որը թեև կապված է զարգացման տնտեսական և սոցիալական հարթությունների տրամաբանությանը, սակայն նաև տարբերվում է դրան-

<sup>57</sup> **Deutsch K.W.**, Social Mobilization and political development, The American Political Science Review, Vol. 55, No. 3, 1961, p. 493–514:

<sup>58</sup> **Fukuyama F.**, The origins of political order, New York, 2011, p. 438–439.

<sup>59</sup> **Мелешкина Е.**, Политический процесс, М., 2001, с. 238.

<sup>60</sup> **Fukuyama F.**, նշվ. աշխ., էջ 476:

<sup>61</sup> **Huntington S.**, Political Order in Changing Societies, 1968., Yele University, 1986.

ցից: Քաղաքական անկումը լինում է այն դեպքերում, երբ տնտեսական և սոցիալական զարգացումն ու արդիականացումը գերազանցում են քաղաքական զարգացմանը<sup>62</sup>:

Քաղաքական տեսաբանների զգալի մասը քաղաքական զարգացում և արդիականացում երևույթները գրեթե նույնական է համարում: Այնուամենայնիվ, քաղաքագիտական այս կատեգորիաները, գործընթացային առումով նույնական լինելով, տարբեր են գործընթացի որոշակիության կամ նպատակայնության առումով: Եթե քաղաքական զարգացումը ենթադրում է որակական փոփոխություն, որի արդյունքը, սակայն, երաշխավորված չէ, ապա արդիականացումը գիտական արդի սահմանումներում ռազմավարական էլիտայի առաջնորդությամբ և սոցիալական տարբեր խմբերի կողմից որդեգրված մի բազմաչափ գործընթաց է, որը ենթադրում է իր խորհրդանիշներով ու արժեքներով ճկուն քաղաքական համակարգի ձևավորում, վարչական մեքենայի արդյունավետ գործարկում, պետականաշինության մշակույթի զարգացում և ազգային անվտանգության համակարգային ապահովում<sup>63</sup>: Այս սահմանումը, ըստ էության, տարբերվում է արդիականացման առաջին երկու փուլերի ընկալումներից:

Քաղաքական արդիականացման հիմքում քաղաքական կառավարման համընդհանուր (ունիվերսալ) մոդելի կիրառության հիմնավորման գաղափարն է: Այս մոդելի հաստատման և արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է ավանդական (փակ) հասարակությունից անցում կատարել արդիական (բաց) հասարակության, որը գիտատեխնիկական առաջընթացի, սոցիալական շարժունակության, արժեքային և նորմատիվ համակարգերի էվոլյուցիայի, վերակառուցման կամ արմատական փոփոխության արդյունք է<sup>64</sup>: Ըստ այդմ՝ քաղաքագիտության մեջ մշակվել և ու-

---

<sup>62</sup> Fukuyama F., նշվ. աշխ., էջ 438–439:

<sup>63</sup> Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, էջ 10:

<sup>64</sup> Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, էջ 6:

սումնասիրվում են քաղաքական արդիականացման մի քանի տիպ:

Առաջինն առանձնացնում է երկու մոդել՝ ինքնաբուխ (շիթային) արդիականացում, որը բնորոշվում է ներքին ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, սոցիալ-մշակութային, տնտեսական և քաղաքական զարգացման միջոցով նոր ժամանակների անցման կամ ժամանակակից տարածությունների ստեղծման դրսևորումներով, և երկրորդական կամ արտացոլված արդիականացում, որը բնորոշվում է ժամանակակից պայմանների (տարածությունների) ստեղծմամբ՝ տեխնոլոգիաների, ներդրումների, մարդկային ռեսուրսների և արտաքին փոխառությունների միջոցով:

Ըստ երկրորդ տիպաբանության՝ առանձնացվում է արդիականացման երեք մոդել՝

- ✓ ներծին (էնդոգեն) – սեփական ռեսուրսների միջոցով արդիականացում,
- ✓ արտածին (էկզոգեն) – փոխառությունների միջոցով արդիականացում սեփական ռեսուրսների բացակայության կամ մերժման պայմաններում,
- ✓ ներծին-արտածին – սեփական ռեսուրսների և փոխառությունների միջոցով արդիականացում<sup>65</sup>:

Ըստ քաղաքական գործընթացի արագության՝ առանձնացվում են «քայլող» կամ առաջնային քաղաքական արդիականացում և «վազող» կամ «հասնող» քաղաքական արդիականացում<sup>66</sup>:

«Քայլող» կամ առաջնային քաղաքական արդիականացումը սկսվեց 16-րդ դարում Եվրոպայում տեղի ունեցած ռեֆորմացիայով և իր ավարտին հասավ 17–18-րդ դարերում՝ Լուսավորության դարաշրջանում: Այս դեպքում կերպափոխման բնութագրիչներն են ռացիոնալ ինստիտուտների ստեղծումը, քաղաքական իշխանության

---

<sup>65</sup> Федотова В. Г., Колпаков В. А., История модернизации как предмет социально-философского анализа, отв. ред. «ИФРАН», 2014, с. 233.

<sup>66</sup> Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում, էջ 11:



աշխարհիկացումը, բարձր սոցիալական շարժունակությունը, իրավունքի գերակայությունը, ժողովրդական կառավարման ձևը և այլն:

«Վազդդ» կամ «հասնող» քաղաքական արդիականացումը ձևավորվեց և տարածվեց զարգացող երկրներում ու տարածաշրջաններում (Լատինական Ամերիկա, Ասիա, Աֆրիկա և իհարկե՝ հետխորհրդային երկրներ): Այդ առումով ուշագրավ է արդիականացման տեսաբաններից Շ. Էյզենշտատի մոտեցումն առ այն, որ արդիականացող հասարակությունն անցնում է փոփոխության այն գծային գործընթացները, որոնք իրենց հեղափոխականացնող բնույթով հաստատվել են Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում դեռ 17–19-րդ դարերում, ապա 19–20-րդ դարերում տարածվել են Հարավային Ամերիկայում, Ասիայում և Աֆրիկայում<sup>67</sup>:

Հենվելով արդիականացման տեսության տեսամեթոդաբանական վերլուծության վրա՝ նպատակահարմար ենք համարում հիմնավորել **Եվրոպական միությունում հայկական էթնիկ լոբբինգի դերակատարության հնարավորությունը ՀՀ քաղաքական բնականոն արդիականացման գործում:**

Արդիականացման տեսաբաններից Շ. Էյզենշտատը նկատում է, որ արդիականացումը մարտահրավեր է, որին յուրաքանչյուր հասարակություն պատասխանում է երկարատև զարգացման արդյունքում իր հիմքում ձևավորված սկզբունքների, կառույցների և խորհրդանիշների համակարգերին համապատասխան: Իսկ Կ. Դոյչը նշում է, որ **արդիականացումը, անխուսափելիորեն ակտիվացնելով էթնիկական գիտակցությունը, նպաստում է ազգային ինքնավարության հասնելու քաղաքական նպատակադրման ձևավորմանը**<sup>68</sup>:

Այս առումով Հայաստանում քաղաքական արդիականացումը

---

<sup>67</sup> Эйзенштадт Ш., Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций, Пер. с англ. А.В. Гордона, под ред. Б.С. Ерасова, М., «Аспект Пресс», 1999, с. 13–14.

<sup>68</sup> Մարգարյան Մ., Քաղաքական արդիականացման և զարգացման հիմնահարցեր, էջ 7–8:

քաղաքականության դերակատարների, նոր արժեքներ կրողների ու արտացոլողների և իշխանության հաստատությունների միջև քաղաքական փոխազդեցությունների մի ընդարձակ ու բարդ խճանկար է: Նրանք գործում են ըստ այն դերերի և գործառույթների, որոնք թելադրում են հայոց մշակութաքաղաքակրթական արժեհամակարգը, ավանդույթները, կրոնադավանական միջավայրը, ազգի մտահայեցողությունը, պատմական զարգացման առանձնահատկությունները, հանրային ու ազգային շահերը և այլն: Դա է պատճառը, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

**առաջին՝** արդիականացման մասնակիցների միջև նպատակների ու քաղաքական գործողությունների քննարկումների անբավարարություն,

**երկրորդ՝** քաղաքացիական վերահսկողության համակարգի անբավարար զարգացածություն,

**երրորդ՝** հաստատութենական կարգի ու քաղաքական դերերի որոշակի չափով համատեղվածություն ու եզրահանգված փոխակերպում,

**չորրորդ՝** քաղաքական արդիականացման մասնակիցների շրջանում առկա «սպասումների հիասթափություն»,

**հինգերորդ՝** քաղաքական արդիականացման հիմքում դրված ակտիվ քաղաքական ոճ՝ կազմված հասարակությանը պարտադրված նորամուծություններից,

**վեցերորդ՝** քաղաքական զարգացման (բաշխում, շարժունակություն, մասնակցություն, ինքնություն, օրինականություն) ճգնաժամերի հաղթահարման ձգձգում, ինչի հետևանքով հակընտրանին հանդես է գալիս ոչ թե որպես քաղաքական ընդդիմախոս, այլ հակամարտային շարժում: Այդ պատճառով կառավարող ընտրանու և հակընտրանու միջև բանավեճը ծավալվում է ոչ թե ռացիոնալ, այլ զգացմունքային և խորհրդանշական հիմունքով<sup>69</sup>:

---

<sup>69</sup> **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, էջ 21-32:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ՀՀ-ում քաղաքական արդիականացումը տարանջատական մշակույթի ազդեցության հետևանքով բազմաթիվ խոչընդոտների է բախվել ոչ միայն քաղաքական մասնակցության մակարդակի աճի, այլև սոցիալ-պատմական տեքստի համակարգային զարգացման անհրաժեշտության բերումով:

**Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքական արդիականացման հրամայականներին և էթնիկ լոբբինգի ինստիտուտի դերակատարությանը,** նկատենք, որ Հայաստանի առջև ծառացել է պատմական խնդիր՝ հղկել քաղաքական արդիականացման «քառանկյուն անիվի» եզրագծերը և անցում կատարել բնականոն զարգացման: Դա հնարավորություն կտա բնականոն կերպով արդիականացնելու կառավարումը և հայկական մշակույթին բնորոշ ոգեղենության, արարչականության, կենսասիրության և հանրային համախմբման զարգացմամբ ապահովելու ազգային անվտանգությունը<sup>70</sup>:

**Կարծում ենք, որ Հայաստանի զարգացմանն օժանդակելու՝ եվրոպահայ էթնիկ լոբբինգի քաղաքական առաջնահերթությունը պետք է վերաձևակերպել որպես օժանդակություն Հայաստանի բնականոն արդիականացմանը:** Քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ենթադրում է ոչ միայն արժեքների բնականոն արդիականացում՝ համաձայն արևմտյան ձևաչափի, այլև սոցիալ-մշակութային և էթնոմշակութային արժեքների զուգամիտում: Հետևաբար սփյուռքը Հայաստանի հետ իր հարաբերությունները պետք է կառուցի՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքական արդիականացման մարտահրավերները, իսկ Հայաստանն իր հերթին պետք է հաշվի առնի սփյուռքի բազմամշակութային բնույթը, նրա ընձեռած հնարավորություններն ու մարտահրավերները:

Հայաստանի Հանրապետության քաղաքական արդիականացման գործում հայկական էթնիկ լոբբինգի հնարավորությունների

---

<sup>70</sup> Նույն տեղում:

ներդրման խնդիրը դիտարկենք քաղաքական արդիականացման տիպաբանության առկա մոդելների, ինչպես նաև մարտահրավերների շրջանակում:

Եթե առաջնորդվենք արդիականացման տիպաբանության վազող (շիթային) և երկրորդային (արտացոլված) մոդելներով, ապա էթնիկ լոբբինգի ինստիտուտը կարող է դիտարկվել երկու պարագայում էլ: Մասնավորապես, եթե վազող արդիականացման համար առաջնային է ներքին ռեսուրսների օգտագործումը, իսկ երկրորդային արդիականացումը բնորոշվում է ժամանակակից պայմանների ստեղծմամբ (տեխնոլոգիաների ներդրում, մարդկային ռեսուրսներ, արտաքին փոխառություններ), ապա էթնիկ լոբբինգը երկու դեպքում էլ կարող է ունենալ քաղաքական կոնկրետ դերակատարություն: Վազող արդիականացման դեպքում էթնիկ համայնքներում բնակվողները, խոշոր հաշվով, թեև չեն գտնվում հայրենի երկրի իրավազորության տիրույթում, այնուամենայնիվ, համազգային ներուժի մաս են: Երկրորդային արդիականացման պարագայում էթնիկ համայնքներում բնակվողները կարող են հանդես գալ որպես հայրենի երկրի արդիականացման գործում մարդկային ռեսուրսների, արտաքին ներդրումների ու փոխառությունների և ազգային մակարդակում դրանց տեղայնացման երաշխավորներ:

Էթնիկ լոբբինգի ինստիտուտի ազդեցությունը հնարավոր է դիտարկել նաև քաղաքական արդիականացման եռամաս (ներծին, արտածին և ներծին-արտածին) մոդելի շրջանակում: Այսպես՝ մի դեպքում էթնիկ լոբբինգի ռեսուրսը կարող է դիտվել որպես սեփական ռեսուրս, մյուս դեպքում՝ որպես փոխառություն ապահովող, և վերջապես, որն ամենաարդյունավետը կարող է լինել, **այն կարող է ազգի սեփական ռեսուրսը զուգամիտել արտաքին փոխառության հետ:**

Ամփոփելով նշենք, որ էթնիկ լոբբինգի ինստիտուտը և քաղաքական արդիականացումն ունեն տեսամեթոդաբանական ընդգծված համատեղումներ:

Ինչ վերաբերում է Եվրոպայի հայկական սփյուռքի էթնիկ լոբբինգին, ապա այն կարող է ակտիվ դերակատարություն ունենալ

քաղաքական արդիականացմանը բնականոն ձևով և ազգային յուրահատուկ մոտեցմամբ արձագանքելու գործում: Ելակետ ընդունելով Մ. Մարգարյանի կողմից առաջարկված՝ արդիականացման գործընթացի խնդիրները<sup>71</sup>՝ առաջարկում ենք նկատի առնել այն հանգամանքը, որ Եվրոպայի հայկական լրբքին ի գորու է՝

- կոնվերգենցիայի ենթարկելու ազգային և ունիվերսալ ազգային համակարգերը,
- բնականոն ճանապարհով արդիականացնելու քաղաքական և քաղաքակրթական ինքնությունները,
- տնտեսական կապիտալն օրինականացնելու և ժողովրդականացնելու նպատակով այն դուրս բերելու քաղաքական վերահսկողությունից, ինչը համագործակցության մշակութային զարգացման շնորհիվ կնպաստի տնտեսության ազատ մրցակցային դաշտի արդյունավետ գործառմանը,
- ստեղծելու անցումային հասարակություններին բնորոշ քաղաքականության և ժողովրդավարական համախմբումը խթանող զարգացման մոդելներ,
- նպաստելու ազգ-պետություն ցանցային գործունեության կազմակերպական ձևի գործարկմանը,
- խթանելու զանգվածային շարժունակությունն ու ազգային մասնակցայնությունը,
- մարդկանց ինքնահաստատման, ինքնադրսևորման ճանապարհով ձևավորելու բաց սոցիալական կառուցվածք,
- նպաստելու քաղաքական և քաղաքացիական հաստատությունների միջև բաց քաղաքական մրցակցություն ապահովող երկխոսության ծավալմանը,
- նպաստելու տեղական ինքնակառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը:

---

<sup>71</sup> **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման քաղաքակրթական չափումը՝ որպես ռազմավարական կառավարման ապահովման հիմք, էջ 21–32:

## **ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԷԹՆԻԿ ԼՈՐԲԻՆԳՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

### **2.1 Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրն ու քաղաքական աշխարհագրությունը**

Պայմանավորված իր բազմաշերտությամբ, բարդ կազմությամբ ու զարգացման դինամիկայով՝ «սփյուռք» հասկացության տեսամեթոդաբանական ընկալումները տարաբնույթ են: Այնուամենայնիվ, նախորդ տասնամյակների ընթացքում սփյուռքի վերաբերյալ արժեքավոր աշխատանքներ են հրատարակվել, որոնք թեև վերջնականորեն չեն ձևավորել սփյուռքի՝ միարժեքորեն ընդունված սահմանում, սակայն տեսական հետազոտությունների առումով չափազանց կարևոր են, մանավանդ, համեմատական վերլուծության և դրանց համալիր կիրառման տեսանկյունից:

Ի. Լոշկարյովը 2017 թվականին հրատարակված իր «Սփյուռք հասկացության էվոլյուցիան քաղաքական գիտության մեջ» հոդվածում առաջարկում է սփյուռքի սահմանման և բնորոշման մոտեցումները դասակարգել ըստ հետևյալ երեք խմբերի<sup>72</sup>

- 1) դասական (Վ. Սաֆրան, Գ. Շեֆֆեր, Ռ. Կոհեն),
- 2) կոնստրուկտիվիստական (Ռ. Բրուքեյքեր),
- 3) պոստմոդեռնիստական (Պ. Գիլրոյ, Զ. Քլիֆորդ):

Դասական մոտեցման դեպքում շեշտը դրվում էր սփյուռքի էտալոնային մոդելներով ուսումնասիրությունների վրա, ինչի ընթացքում կիրառվում էր էտալոնային սփյուռքի ձևավորման պատմական փորձը<sup>73</sup>:

Սփյուռքի բնորոշման ու սահմանման դասական մեթոդը ենթադրում էր սահմանում և բնորոշում՝ առանց տեսական դատո-

---

<sup>72</sup> **Лощкарёв И.**, Эволюция понятия «диаспора» в политической науке, «Этносоциум и межнациональная культура», М., 2017, № 4 (106), с. 70–78.

<sup>73</sup> **Տ., Սարադյան Մ.**, էջ 19:

ղությունների մեջ խորանալու և առանց հատուկ քաղաքագիտական ու միջգիտակարգային հավելյալ ուսումնասիրությունների:

Կոնստրուկտիվիստական մեթոդը որպես գիտական հետաքրքրության օբյեկտ է դիտում ազգը և ազգայնականությունը, ինչպես նաև սփյուռքի ձևավորման գործընթացը:

Իրենց հերթին պոստմոդեռնիստները կարծում են, որ սփյուռքը կրողն է մի շարք հակասությունների՝ կենտրոնացում և գլոբալացում, արմատավորվածություն և վերաբնակեցում, փոփոխականություն և կայունություն: Այս մոտեցման համաձայն՝ սփյուռքը կապող օղակ է անցյալի և ներկայի, ծագման երկրի և ընդունող երկրի միջև<sup>74</sup>: Ուստի այս մոտեցման ակադեմիական առաջնահերթություններն ամենահամապատասխան են սփյուռքի և դրան ուղղակիորեն առնչակից հիմնախնդիրների ուսումնասիրության արդի պահանջներին:

Ի. Լոշկարյովի առաջարկած մոդելն ինքնին խոցելի է, քանի որ սփյուռքի ուսումնասիրությունը հընթացս զարգացող միջգիտակարգային երևույթ է, որտեղ նաև անհրաժեշտ են միջգիտակարգային ուսումնասիրություններ: Բացի այդ, առաջարկվող լուծումների, սահմանումների ու բնորոշումների վերաբերյալ չկա ձևավորված ակադեմիական վերջնական կարծիք, բազմաթիվ հեղինակներ (օրինակ՝ Գ. Շեֆֆերը) տարիների ընթացքում փոփոխել են սեփական ակադեմիական կարծիքը: Հետևաբար դեռևս վաղ է փորձել վերջնականապես դասակարգել սփյուռքի բնորոշիչներն ու սահմանումները: Այնուամենայնիվ, Լոշկարյովի առաջարկած տարբերակը կարող է օգտակար լինել առկա գրականության համեմատական վերլուծության և բովանդակային դասակարգման տեսանկյունից:

Սփյուռքի հետազոտողներից Վ. Սաֆրանն առանձնացնում է հետևյալ բնութագրիչները՝ հեռացում հայրենիքից, հայրենիքի վերաբերյալ հավաքական հիշողության պահպանում, ընդունող հա-

---

<sup>74</sup> Նույն տեղում:

սարակության կողմից անվերապահ ընդունման անհնարինության գիտակցում, պայմանների բարելավման դեպքում՝ հայրենիք վերադարձի հանձնառության պահպանում, հայրենի երկրի՝ իբրև միակ ճշմարիտ տան ընկալում, հավաքական նվիրում հայրենիքի վերականգնմանն ու պահպանմանը, ապահովությանն ու բարգավաճմանը, հայրենիքի հետ անձնապես կամ միջնորդավորված շարունակական կապի ապահովում<sup>75</sup>:

Իր հերթին, Ռ. Կոհենն առաջարկում է Վ. Սաֆրանի ներկայացրած բնորոշիչները համալրել ևս չորսով՝ առավել համընդգրկուն արդյունք ունենալու համար: Նա առաջարկում է նկատի ունենալ աշխատանքային և առևտրային գործունեության արդյունքում ձևավորված սփյուռքը, հաշվի առնել ժամանակային այն ընդգրկումը, որի արդյունքում էթնիկ համայնքը վերածվում է սփյուռքի, ներառել սփյուռքի և վերջինիս շրջանակներում ձևավորված ինքնության առանձնահատկությունները, ինչպես նաև ընդունել, որ սփյուռքը ոչ միայն հավաքական ինքնություն է ձևավորում, այլև ունի ընդհանուր ինքնություն այլ երկրներում ապրող նույնաէթնիկ խմբերի հետ<sup>76</sup>:

Գ. Շեֆֆերն առանձնացրել է երեք բնորոշիչ, որոնք միասին կարող են դիտվել իբրև սփյուռքի սահմանում. 1. սփյուռքի հավաքական ինքնության պահպանում և զարգացում, 2. հայրենիքի և ընդունող երկրի ինստիտուցիոնալ միավորներից գատ՝ ներքին կազմակերպվածության առկայություն, 3. հայրենիքի հետ իրական և նշանակալի փոխհարաբերություններ: Ավելի ուշ Շեֆֆերն առաջարկել է սփյուռքի առավել ամբողջական դասակարգում՝ խոր պատմական արմատներ ունեցող սփյուռք, «ննջող» սփյուռք, «երիտասարդ» սփյուռք, «ծնվող» սփյուռք, էթնոազգային սփյուռք, սփռված և հավաք ապրող սփյուռք<sup>77</sup>:

---

<sup>75</sup> **Safran W.**, *Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return*, *Diaspora*, No. 1, Toronto 1991, 83-99:

<sup>76</sup> **Cohen R.**, *Global Diasporas: An Introduction*. Second edition, Routledge, 2008, p. 7:

<sup>77</sup> **Թորոսյան Տ., Սարադյան Մ.**, նշվ. աշխ., էջ 28–35:



Հաշվի առնելով սույն աշխատանքի առջև դրված խնդիրների շրջանակը՝ կարծում ենք, կարելի է սահմանափակվել սփյուռքի վերաբերյալ վերը բերված սահմանումների ու դասակարգումների քննարկմամբ:

Ինչ վերաբերում է Եվրոպայի հայկական սփյուռքին, ապա հիշյալ սահմանումների և բնորոշումների հետ մեկտեղ նախ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ հայկական սփյուռքը ոչ միայն Եվրոպայում, այլև ամենուր, որպես այդպիսին, միատարր երևույթ չէ, և ինքնին չի կարող հավակնել մեկ գիտական բնորոշման: Տարբեր են և՛ հայկական սփյուռքի համայնքները, և՛ հասարակական, սոցիալ-տնտեսական և քաղաքակրթական այն տարածքները, որտեղ ձևավորվել են դրանք:

Պատահական չէ, որ Խ. Թուլոյանը գրում է. «Նախկինում մենք գործածում էինք սփյուռք եզրույթը՝ նկարագրելու համար հրեաների, հույների, հայերի ցրվածությունն աշխարհով մեկ, այժմ այն ունի առավել մեծ իմաստաբանական տիրույթ՝ ներառելով ներգաղթյալներին, ոչ տիտղոսակիր քաղաքացիներին, փախստականներին, ժամանակավոր աշխատուժին, աքսորյալներին, առևտրային ու էթնիկ համայնքներին և այլն»<sup>78</sup>:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Եվրոպայում հայկական սփյուռքի համայնքները ենթակա չեն միարժեք բնորոշման, առավել ևս՝ դասակարգման: Այդ համայնքների միջև տարբերություններ կան՝ սկսած կազմավորման գործընթացից մինչև արդի սոցիալական, հասարակական կամ քաղաքական ակտիվություն: Ընդհանրապես, Եվրոպայում հայկական էթնիկ լոբբինգի ինստիտուտի էությունը հասկանալու համար կարևոր է մի կողմից կոնկրետ համայնքի դերը լոբբիստական գործունեության արդյունավետության առումով չգերազնահատելը, մյուս կողմից՝ չթերազնահատելը, քանի որ սփյուռքյան համայնքների լոբբիստական գործու-

---

<sup>78</sup> Tololyan Kh., The Nation-State and its others: In Lieu of a Preface, Diaspora, Spring 1991, p. 4.

ներությունը պայմանավորող գործոնները խիստ բազմաշերտ են՝ կախված ինչպես համայնքի կազմակերպական վիճակից, այնպես էլ ընդունող երկրի օրենսդրաիրավական առանձնահատկություններից, քաղաքական համակարգից և այս ոլորտում առկա ավանդույթներից:

ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի տվյալներով, ներկայումս եվրոպական աշխարհամասում ապրող հայերի ընդհանուր թիվը գերազանցում է 1.505.000-ը<sup>79</sup>: Հայության առավել խոշոր համայնքներ կան Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսպանիայում, Նիդեռլանդներում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում և այլուր: Ինչ վերաբերում է համայնքային կազմակերպություններին, ապա Արևմտյան Եվրոպայում դրանց ընդհանուր թիվը 153 է, Հյուսիսային Եվրոպայի և Մերձբալթյան երկրների հայկական համայնքներում՝ 31, Արևելյան Եվրոպայի և Բալկանյան երկրներում՝ 1103<sup>80</sup>:

Սույն աշխատանքում մեզ հետաքրքրող խնդրի շրջանակում պետք է նկատել, որ ոչ բոլոր հայկական համայնքային կազմակերպությունները կարելի է լրբիստական համարել: Տարբեր երկրների ներքին օրենսդրաիրավական կարգավորումները և քաղաքական մշակույթը յուրահատուկ պայմաններ են ստեղծում լրբիստական խմբերի գործունեության համար: Պարզապես շատ փոքր է այն լրբիստական կազմակերպությունների քանակը, որոնց նպատակը հայկական շրջանակների և Հայաստանի Հանրապետության շահի պաշտպանությունն է՝ էթնիկ լրբինգի ինստիտուտին վերաբերող կոնկրետ գործիքակազմ օգտագործելով: Պետք է փաստել, որ այդպիսի աշխատանք իրականացնող կազմակերպությունները հիմնականում Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակներն են:

---

<sup>79</sup> ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ, <http://diaspora.gov.am/hy/diasporas>

<sup>80</sup> Հակոբյան Հ., նշվ. աշխ., էջ 97-120:

## **2.2 Եվրոպայի հայկական լոբբիի քաղաքական գործունեության առաջնահերթությունները. «փափուկ ուժի» կիրառելիության գնահատում**

ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության վերականգնումից հետո Հապես փոխվեց հայրենիք-սփյուռք հարաբերությունների բնույթը, ինչն աստիճանաբար արտահայտվեց նորանկախ պետության հասարակական, սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում: Սփյուռքի՝ Հայաստանի կյանքի բոլոր ոլորտներում ներգրավվելու ցանկությունը և Հայաստանի՝ սոցիալ-տնտեսական և քաղաքական դժվարություններին դիմագրավելու գործում սփյուռքին ապավինելը հանգեցրին նրան, որ նախապատրաստվի օրենսդրական հենք՝ հայրենիք-սփյուռք հարաբերությունները կառուցակարգային փուլ տեղափոխելու համար: Արտերկրի հայերի վերաբերյալ առաջին իրավական հիշատակումը տեղ գտավ հենց Անկախության հռչակագրում<sup>81</sup>՝ արտերկրի հայության համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունքի երաշխավորմամբ: 1995 թ. ընդունված Սահմանադրությունը<sup>82</sup> առանձին դրույթ չպարունակեց հայրենիք-սփյուռք հարաբերությունների, դրանցում ՀՀ դերի վերաբերյալ: Միայն, ի կատարումն Անկախության հռչակագրում ամրագրվածի, Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանեց. «Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»: Արդեն Սահմանադրության 2005 թ. խմբագրությամբ տեքստը<sup>83</sup> 11-րդ հոդվածով հստակորեն սահմանեց պետության դերն ու պատասխանատվությունը հայրենիք-սփյուռք հարաբերություններում՝ ամրագրելով. «Հայաստանի Հան-

<sup>81</sup> ՀՀ Անկախության հռչակագիր, 23 օգոստոսի 1990 թ., Երևան:

<sup>82</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 1995 թ. հուլիսի 5-ին):

<sup>83</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 2005 թ. նոյեմբերի 27-ին):

րապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը, այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»։ Սահմանադրության 2015 թ. խմբագրությամբ<sup>84</sup> տեքստում 19-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում էր հայկական սփյուռքի հետ պետության կապերին և ամրագրում էր. «1. Հայաստանի Հանրապետությունը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացմանը և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը։ 2. Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը»։

Իրավաստեղծ բնույթ ունեցող Անկախության հռչակագրի և ՀՀ Սահմանադրության տարբեր խմբագրություններում արտացոլված դրույթները հիմք հանդիսացան հայրենիք-սփյուռք քաղաքականության իրականացման, օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի ստեղծման համար։ Սույն աշխատանքի առջև դրված նպատակներից ելնելով՝ նպատակահարմար չէ առանձին վերլուծության ենթարկել Հայաստան-սփյուռք հարաբերությունների իրավակարգավորումներն ու կառուցակարգային խնդիրները։ Միայն նկատենք, որ Հայաստանի երրորդ Հանրապետության կյանքում հայրենիք-սփյուռք հարաբերությունները օրենսդրական և քաղաքական առումով երկրորդական չեն եղել։ Հայկական սփյուռքի էվոլյուցիան որոշակիորեն պայմանավորված է Հայաստանում հետագա տարիներին քաղաքական իրողության և իշխանության փոփոխությամբ։

Անդրադառնալով սփյուռքի լրբիստական խնդիրների վեր-

---

<sup>84</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 2015 թ. դեկտեմբերի 6-ին)։

հանման ակադեմիական խնդրին՝ նշենք, որ այն ենթադրում է միջգիտակարգային համալիր մոտեցում: Համադրելով սփյուռքի առաջացման ու գործունեության բնութագրիչները և էթնիկ լոբբինգի ինստիտուտի առանձնահատկություններն ու տեխնոլոգիական օրինաչափությունները՝ փորձենք վեր հանել Եվրոպայի հայկական էթնիկ լոբբինգի մոտավոր պատկերը, մասնավոր գործառության ինստիտուտի առանձնահատկություններն ու տեխնոլոգիական մոտեցումները, ինչպես նաև «փափուկ ուժի» կիրառման հնարավորությունները:

Վերոհիշյալ առաջադրանքի կատարման համար առաջարկում ենք պայմանականորեն երկու հարթության մեջ՝ **լոբբիստական և մերձլոբբիստական**, դիտել եվրոպական երկրներում գործող հայկական համայնքային այն կազմակերպությունները, որոնք իրենց գործունեությամբ այս կամ այն կերպ նպաստում են հայկական պետությունների շահի սպասարկմանը: Միևնույն ժամանակ պետք է ընդգծել նաև տեղական-համայնքային և քաղաքական կազմակերպությունների՝ որպես մերձլոբբիստական կազմակերպությունների դերն ու գործունեությունը: Առաջարկվող բաժանումների կազմակերպական ընդհանրություններին և միջուկորտային փոխներգրավվածությանը կանդիդատառնանք հընթացս:

Հիշյալ առանձնացումը նպատակահարմար ենք համարում հայկական տարաբնույթ կազմակերպությունների ցանցային դրսևորման պայմաններում, երբ որոշ կազմակերպություններ իրականացնում են ուղղակի դասական լոբբիստական գործունեություն, իսկ մյուսներն իրենց առօրյա գործունեությամբ ենթադրում են էթնիկ լոբբինգի ինստիտուտին առնչվող գործառության և տեխնոլոգիական շերտեր, սակայն բնույթով, կանոնադրական նպատակներով ու առաքելությամբ լոբբիստական կազմակերպություններ չեն: Եվրոպայում հայկական լոբբիստական ակտիվության վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է դիտարկել առաջարկվող երկու հարթությունների համահավաքը:

Մերձլոբբիստական կազմակերպություններ կարող են դիտվել

տեղական համայնքային կազմակերպությունները, քաղաքական կազմակերպությունները, ինչպես նաև եկեղեցական, բարեգործական, մշակութային, կրթական, լրատվական, մարմնակրթական, մասնագիտական ընկերակցությունները և այլ կազմակերպություններ:

Տեղական-համայնքային կազմակերպությունները կամ «հայ համայնքները» հիմնականում սահմանափակվում են համայնքային-ազգային կյանքի կազմակերպման տարբեր ոլորտներին առնչվող խնդիրների լուծմամբ: Այսպիսի միավորումների ինստիտուցիոնալ կապը հայրենիքի հետ բավական թույլ է: Դրանք սովորաբար տեղավորվում են «սփյուռք-ընդունող երկիր» հարթությունում և իրականացնում են համայնքի անդամների սոցիալական, մշակութային կյանքի իրացմանը վերաբերող գործառույթներ:

Ըստ էության, քաղաքական կազմակերպություններ են հայկական ավանդական երեք կուսակցությունները՝ Սոցիալ-դեմոկրատ հնչակյան, Ռամկավար ազատական կուսակցությունները, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը:

Մերձլրբբիստական կազմակերպությունների մեկ այլ խումբ կարող են համարվել, օրինակ, «Թեքեյան» մշակութային միությունը, Հայ օգնության միությունը, Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը, «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամը, «Պողոսյան» հիմնադրամը և այլն:

Նույն տրամաբանությամբ, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու՝ Եվրոպայում հաստատված թեմերն ու այլ հաստատություններ, ինչպես նաև Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի կենտրոնները լավագույն օրինակն են այն իրողության, որ Եվրոպայում հայկական սփյուռքի՝ Հայաստանի Հանրապետության շահերի ուղղակի կամ անուղղակի սպասարկման գործառույթներն ավելի բազմաշերտ են, քան խնդրի զուտ քաղաքական կողմը:

Այս հաստատությունները իբրև մերձլրբիստական կազմակերպություններ դիտարկելը հնարավորություն կտա, իրենց կանոնադրական գործառույթների իրականացման հետ մեկտեղ, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» եռաչափության մեջ տեսնել այդ կազմակերպությունների կողմից լրբիստական գործունեությանը բնորոշ որոշակի գործիքների կիրառման հնարավորությունն ու նպատակահարմարությունը: Դա կարևոր հանգամանք է՝ բացառելու այս կազմակերպությունների նույնացումը լրբիստական կառույցների հետ, քանի որ այդ պարագայում գործելու են կազմակերպա-իրավական գործունեությանը, օրենսդրական հնարավորություններին վերաբերող այլ կարգավորումներ, որոնք կարող են կաշկանդել հիմնականում բարեգործական կազմակերպությունների աշխատանքը: Ուստի այս դեպքում լրբիստական գործունեությանը բնորոշ առանձին գործառույթներ հնարավոր է իրականացնել (իրականացվում են) որպես հիմնական գործունեությունից ածանցվող միջոցառումներ:

Կարևոր հանգամանք է հայկական սփյուռքի «մերձլրբիստական» կազմակերպությունների՝ ընդունող երկրներում հիմնադրված լինելու հանգամանքը՝ որպես այդ երկրի քաղաքացիների կողմից հիմնադրված քաղաքացիական հասարակության ինստիտուտներ (grassroots organization)<sup>85</sup>: Այս դեպքում հայկական կազմակերպությունները խուսափում են Հայաստանի Հանրապետության կողմից իր իսկ շահերին ծառայելու համար այլ պետության

---

<sup>85</sup> Բացառություն կարող են կազմել «Հայաստան» համահայկական հիմնադրամը և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերն ու կազմակերպությունները, որոնք իրենց բնույթով առանձնահատուկ են: Եկեղեցական հաստատությունները գլխավորապես հոգևոր, կրթական, մշակութային կազմակերպություններ են, ամբողջապես ապաքաղաքական և չեն կարող ակնառու քաղաքական հավակնություն ունենալ: Իր հերթին, «Հայաստան» համահայկական հիմնադրամը բացառապես բարեգործական կազմակերպություն է, որը հավելյալ ոլորտներում հետաքրքրություն, որպես այդպիսին, չի ցուցաբերում:

տարածքում հիմնադրված լինելու վերաբերյալ հնարավոր մեղադրանքներից կամ հավելյալ խնդիրներից:

Եվրոպայում հայկական լոբբիստական գործունեությունն ընդգրկում է երեք հիմնական մակարդակ՝ համաեվրոպական (միջազգային և ինտեգրացիոն տարբեր կազմակերպությունների կենտրոնական գրասենյակների հետ աշխատանք), առանձին պետությունների (պետական իշխանությունների հետ հարաբերություններ) և համայնքային (ներհամայնքային կարիքների բավարարման, կազմակերպվածության բարձրացման մակարդակ):

Համաեվրոպական մակարդակում գործող հիմնական լոբբիստական կազմակերպությունը Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի գրասենյակն է (European-Armenian Federation for Justice and Democracy /EAFJD/): Լոբբիստական մնացյալ կազմակերպությունները սահմանափակվում են հիմնականում հյուրընկալ պետության հետ հարաբերություններով, չնայած հաճախ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբերը փորձում են հյուրընկալ երկրներից ընտրված եվրախորհրդարանականների միջոցով ազդել համաեվրոպական բնույթ ունեցող և հայությանը վերաբերող որոշումների վրա: Միջանկյալ նշենք, որ Հայ դատի շարժումը սկզբնավորվել է Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից, 1944 թվականից<sup>86</sup>:

**Հայ դատի Եվրոպայի գրասենյակը** հիմնվել է 2001 թվականին: Այն նախ տեղակայված էր Փարիզում, սակայն հետո, հաշվի առնելով, որ ներեվրոպական քաղաքական գործընթացներն ու ԵՄ վարչական ապարատը կենտրոնացած էին Բրյուսելում, տեղափոխվեց այնտեղ: Ներկայումս Հայ դատի Եվրոպայի գրասենյակը համակարգում է եվրոպական 14 երկրում (ԵՄ անդամ 13 երկրում) գործող Հայ դատի հանձնախմբերի աշխատանքը, սակայն առավելապես ինքն է նախաձեռնում և իրականացնում տարաբնույթ աշխատանքներ:

Կազմակերպության հայտարարված նպատակներն են՝ Հայոց

---

<sup>86</sup> Վրացյան., «Հայրենիք» Տարեգիրք-Solnացոյց, 1947, Ե տարի:



ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը, Արցախի ժողովրդի հիմնական իրավունքների պաշտպանությունը, Արցախի հարցի միջազգայնացումը, ինչպես նաև ԵՄ-Հայաստան հարաբերությունների զարգացմանը նպաստելը ամենատարբեր հարթություններում՝ սկսած խորհրդարանական դիվանագիտությանն օժանդակելուց մինչև տնտեսական ներդրումների ներգրավում<sup>87</sup>:

Գրասենյակի գործունեությունը հիմնականում կենտրոնացած է ղարաբաղյան հիմնախնդրի վրա: Այս առումով գործունեության նպատակն է բարձրաձայնել Արցախի ժողովրդի՝ սեփական ապագան տնօրինելու, ինչպես նաև խաղաղության ու արժանապատվության մեջ ապրելու իրավունքները, ինչպես նաև ճեղքել Արցախի քաղաքական մեկուսացման ադրբեջանական պարտադրանքը, նպաստել Արցախի տնտեսական զարգացմանն ու մարդու իրավունքների պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը<sup>88</sup>:

Այս նպատակների իրականացման համար գրասենյակի գործիքակազմն ընդգրկում է տարբեր միջոցառումների կազմակերպում՝ Արցախի բարձրաստիճան ղեկավարության եվրոպական այցեր, եվրոպական պատգամավորների այցելություններ Արցախ (մինչև 2020 թ. պատերազմը), տարբեր սեմինարներ, խորհրդա-ժողովներ, ցուցահանդեսներ, մշակութային միջոցառումներ, շնորհանդեսներ և այլն: Գրասենյակի գործունեության մյուս ուղղությունները Եվրոպական միության իշխանության օրենսդիր և գործադիր թևերի հետ մշտական հանդիպումներն են և նրանց վրա համայնքային ճնշումների գործադրման արշավների իրականացումը:

2020 թ. պատերազմի, ինչպես նաև 2023 թ. աշնանը Ադրբեջանի էթնիկ զտման ցեղասպան քաղաքականության հետևանք-

---

<sup>87</sup> European Armenian Federation for Justice and Democracy, <http://www.eafjd.eu/about.html>

<sup>88</sup> Նույն տեղում:

քով Արցախի էթնիկ գտումը հանգեցրել է Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործունեության առաջնահերթությունների մարտավարական փոփոխությունների: Դրանք վերաբերում են Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի ապահովմանը, նրանց արժանապատիվ կյանքը միջազգային գործուն երաշխիքներով հնարավոր դարձնելուն, Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությանը, ռազմագերիների և վերջին ագրեսիայի ընթացքում առևանգված՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ազատ արձակմանը և այլն:

Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործուն առաջնորդությամբ 2023 թ. հուլիսին Բրյուսելում հանդիպեցին Բելգիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Կիպրոսի, Շվեդիայի և Ռումինիայի հայ համայնքների ներկայացուցիչները: Վերջիններս ձևավորեցին «Եվրոպացիները հանուն Արցախի» հարթակը՝ Արցախի ժողովրդի շահերը համաեվրոպական հարթակներում, ինչպես նաև ԵՄ անդամ պետություններում պաշտպանելու նպատակով: Այս շարժման կարևոր հաջողություններից մեկը Եվրոպայի հարյուրավոր հայկական կազմակերպությունների համախմբումն է Արցախի հայության շահերի պաշտպանությանն ուղղված տարբեր ձեռնարկների շուրջ:

Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի քաղաքական համակարգմամբ գործում են Հայ դատի Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Նիդեռլանդների, Շվեդիայի, Իսպանիայի, Ավստրիայի, Հունաստանի, Կիպրոսի, Լեհաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի և Մեծ Բրիտանիայի հանձնախմբերը, իսկ 2022 թվականից հանձնախումբ է գործում նաև Իտալիայում:

Լոբբինգի տեխնոլոգիայի և գործիքակազմի կիրառելիության տեսանկյունից Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի կարևոր բացթողումն աշխատանքներում համայնքային ներգրավվածության ցածր մակարդակն է, ինչը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ համաեվրոպական քաղաքական նախաձեռնությունների մակարդակում համայնքային ներգրավում ապահովելն ավելի

դժվար է, քան ԵՄ անդամ պետություններում, հատկապես այն դեպքում, երբ Բելգիայի հայ համայնքը Եվրոպայում ամենակազմակերպվածներից և քաղաքականապես ակտիվներից չէ:

Ֆրանսիայի հայկական համայնքն իրավամբ համարվում է սփյուռքի ամենից կազմակերպված համայնքներից մեկը: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ Ֆրանսիայում հայկական հետքի երկարատև գոյությամբ, ինչպես նաև Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարության առանցքային դեմքերի՝ Ֆրանսիայում հաստատվելով: Հայերն այստեղ հաստատվել են դեռևս VI դ. սկսած: Համայնքի ընդհանուր թիվը ներկայումս շուրջ 700 հազար է, գործում են հարյուրավոր հայկական կազմակերպություններ:

Շուրջ 500 հայկական կազմակերպությունների միավորում է **Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը (Co-ordination Council of Armenian organisations of France /CCAF/)**, որը նաև ակտիվ լոբբիստական գործունեություն է իրականացնում: Չնայած այն ֆրանսիական կազմակերպություն է, սակայն կազմակերպության կարողունակությունը հաճախ վերջինիս թույլ է տալիս ազդեցություն ունենալ նաև համաեվրոպական մակարդակում կազմակերպվող՝ խորհրդարանական բնույթի միջոցառումների վրա, ուստի այս աշխատանքում կանդրադառնանք նաև այս կազմակերպությանը:

Իր հերթին, Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը, որը գործում է նաև CCAF-ի կազմում, ֆրանս-հայկական մեծագույն քաղաքական կազմակերպությունն է, որի նպատակներն են.

1. նպաստել հասարակական իրազեկվածության բարձրացմանը՝ ի պաշտպանություն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի,
2. հայկական համայնքին հուզող հարցերում ազդել Ֆրանսիայի և ԵՄ քաղաքականության վրա,
3. ներկայացնել հայության միասնական տեսակետները պե-

տական քաղաքական տարբեր հարցերի վերաբերյալ՝ ծառայելով իբրև կապ համայնքի և նրա ընտրած պաշտոնյաների միջև:

Ֆրանսիայի Հայ դատի հանձնախումբը ամենաակտիվներից է այդպիսի հանձնախմբերի մեջ: Ընդ որում, ակտիվությունը չի սահմանափակվում միայն Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններին համահունչ գործելով, այլ շոշափում է նաև հայությանն առնչվող հասարակական-քաղաքական և սոցիալական կյանքի ամենատարբեր ոլորտներ:

Հայկական շահերի սպասարկում հետապնդող լոբբիստական կառույց է նաև «Հայաստանի եվրոպացի ընկերներ» (European Friends of Armenia/EuFoA/) կազմակերպությունը, որը հիմնադրվել է 2009 թ., գործում է Բյուրեղում և գրանցված է համաձայն բելգիական և ԵՄ օրենսդրության: Կառույցի գործունեության հիմնական նպատակներն են՝

- ամրապնդել ԵՄ-Հայաստան հարաբերությունները,
- խորհրդակցությունների և բանավեճերի միջոցով հասկանալ Հայաստանում առկա իրավիճակը,
- միմյանց կապել երկու կողմերի որոշումներ կայացնողներին և տեղեկացնել Եվրոպա-Հայաստան հարաբերություններում առկա մարտահրավերների և հաջողությունների մասին,
- խթանել շփումները քաղաքացիական հասարակության հիմնական անդամների միջև,
- բարձրացնել Հայաստանի մասին իրազեկվածությունը,
- որոշումներ կայացնողներին և հասարակական կարծիքի վրա ազդողներին տրամադրել տեղեկություն հայ իրականության մասին,
- «հավաքել» Եվրոպայի հայ ընկերներին և կապ հաստատել նրանց միջև:

Նկատենք, որ վերը քննարկված երկու կազմակերպություններ-

րը՝ Եվրոպայի Հայ դատի գրասենյակը և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդը (ՀԿՀԽ), ունեն ծագումնաբանական տարբերություններ: ՀԿՀԽ-ն և դրա անդամ կառույցները ձևավորվել են Ֆրանսիայում հաստատված հայ համայնքի քաղաքական, սոցիալ-տնտեսական ներուժի և դրանից բխած քաղաքական գործունեության արդյունքում, իսկ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը Բրյուսելում է հաստատվել՝ պայմանավորված Բրյուսելի՝ իբրև տարածքի քաղաքական նշանակությամբ: Մյուս կողմից, Բրյուսելում Եվրոպայի Հայ դատի գրասենյակի հաստատվելուց հետո վերջին տարիներին էականորեն ակտիվացել է Հայ դատի Բելգիայի հանձնախմբի գործունեությունը, ինչը մեծապես պայմանավորված է տեղում Եվրոպայի Հայ դատի գրասենյակի առկայությամբ: Ակնհայտ է, որ համայնքի քաղաքական ակտիվությունն էապես ազդում է դրա լոբբիստական գործունեության վրա:

Այսպիսով, հիմք ընդունելով Եվրոպայի հայկական սփյուռքի ընդհանուր բնութագիրը, սփյուռքի՝ որպես երևույթի ուսումնասիրության, սահմանման ու բնորոշման արդի չափորոշիչները՝ հայկական էթնիկ լոբբինգը պետք է դիտել իբրև իր էությամբ ու բնույթով բացառապես սփյուռքյան ֆենոմեն:

Այսպիսով, հանրագումարելով Եվրոպայի հայկական լոբբիստական կազմակերպությունների քաղաքական վարքը, գործունեության ուղղություններն ու քաղաքական առաջնահերթությունները, ինչպես նաև դրանք համադրելով սույն աշխատանքի առաջին գլխում քննարկված լոբբիստական գործունեության տեխնոլոգիաների և հայրենիք-սփյուռք հարաբերություններում առկա դրսևորումների հետ, կարող ենք եզրահանգել, որ Եվրոպայի հայկական լոբբիի համար ինչպես համաեվրոպական, այնպես էլ ԵՄ անդամ պետությունների դեպքում գործունեության հատկորոշելի առանձնահատկություններ են հիմնախնդրի ձևակերպումը, տեղեկատվության ապահովումը, քաղաքական մշտադիտարկումը: Լոբբինգի տեխնոլոգիաների իրականացման առումով բնորոշ

են հասարակական կարծիքի համախմբումը, քաղաքական մշտադիտարկումը, ընտրարշավային օժանդակությունը, պաշտոնական հնարավորությունների և կապերի կիրառումը, ոչ պաշտոնական կապերի գործադրումը, իշխանության վրա ճնշումը և իրազեկումը: Այնուամենայնիվ, Եվրոպայի հայկական լոբբին, ի տարբերություն ամերիկահայ և կանադահայ լոբբիստական կառույցների, պետք է փորձի ավելին անել իրապես «grassroots» լոբբինգի դերեկատար հանդես գալու համար, ինչի արդյունքում կմեծանա լոբբիստական կազմակերպություններ-հայ համայնքներ փոխկապվածության մակարդակը:

Այս պարագայում Եվրոպայի հայկական լոբբիստական կազմակերպությունների համար օգտակար կարող է լինել ամերիկահայ լոբբիստական կազմակերպությունների, հատկապես Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի փորձի տեղայնացումը՝ հաշվի առնելով Եվրոպական քաղաքական մշակույթի առանձնահատկությունները: Մասնավորապես, համայնքի հետ օրգանական կապի ու փոխգործակցության ապահովման համար Հայ դատի Ամերիկայի հանձնախմբումն օգտագործում է համացանցային մի շարք գործիքներ՝ փոստային դասիչի միջոցով օրենսդիրներին գտնելու և նրանց նամակներ գրելու հնարավորություն, օնլայն հանգանակությունների ապահովում և քաջալերում, բաժանորդագրում Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի էլեկտրոնային նամակագրության համակարգին, կամավորագրում Հայ դատի աշխատանքներին, նվիրատուների հետ ինչպես առցանց, այնպես էլ ֆիզիկական նամակագրության և հաշվետվողականության ապահովում<sup>89</sup>: Այս գործողությունները լոբբիստական կազմակերպությանը թույլ են տալիս հանդես գալ իբրև համայնքային լոբբիստական կազմակերպություն, ընդունող երկրի իշխանություններին առավել հիմնավոր ներկայացնել սեփական քաղաքական դիրքորոշումները, քա-

---

<sup>89</sup> Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի պաշտոնական կայք, <https://anca.org/>, Take action.

ղաքականապես ուղղորդել համայնքը, ինչպես նաև օգտվել վերջիններիս հնարավորություններից:

Համայնքային գործողությունների ապահովման ավելի սակավ հնարավորություններ ունի նաև Ամերիկայի հայկական համագումարը: Այդ գործողությունները գլխավորապես միտված են տարբեր օրենսդրական նախաձեռնությունների համար համայնքային սատարում ապահովելուն<sup>90</sup>:

Եվրոպայում հայկական լոբբիստական գործունեության արդյունավետությունն ավելի բարձրացնելուն խոչընդոտում են նաև ուղղակի լոբբիստական կառույցների սակավությունը, համայնքների քաղաքական կազմակերպվածության անբավարար մակարդակն ու համապատասխան ներուժի բացակայությունը, «հայրենիք-սփյուռք-ընդունող երկիր» եռանկյունու գագաթների ոչ հստակ դերաբաշխումը և, ինչպես վերը նշվեց, հատկապես լոբբիստական կառույցների և սփյուռքյան համայնքների թույլ կապը գլխավորապես համաեվրոպական մակարդակում և այլ խնդիրներ:

Կարծում ենք, որ Եվրոպայի հայկական լոբբիի քաղաքական գործունեության առաջնահերթությունների և գործունեության հիմնական ուղղությունների համադրումը «փափուկ ուժի» տեսության հետ կարող է քաղաքական գիտության շրջանակներում հիմնավորել «փափուկ ուժի» տեսության և հետազոտության սույն գլխում քննարկված երևույթների միջև միջգիտակարգային փոխհարաբերությունը: Դա օգտակար է էթնիկ լոբբինգի ինստիտուտի համակարգային ուսումնասիրության տեսանկյունից:

### **Էթնիկ լոբբինգի հարաբերակցությունը «փափուկ ուժի» տեսության հետ**

Քաղաքական գիտության մեջ «փափուկ ուժի» տեսության և լոբբինգի միջև կան բազմաթիվ զուգահեռներ, գործառութային

---

<sup>90</sup> Ամերիկայի հայկական համագումարի պաշտոնական կայք, <https://www.armenian-assembly.org>, Take action.

նմանություններ, որոնց հարաբերակցության վերհանումը լուրջ ազդեցություն կարող է ունենալ դրանց առանձին կամ համալիր կիրառությունների արդյունավետության և քաղաքական գիտության շրջանակներում երևույթների բազմամակարդակ ըմբռնման վրա: Թե՛ լոբբինգի գործիքակազմը, թե՛ «փափուկ ուժի» տեխնոլոգիան աշխատում են հասարակական կարծիքի վրա ազդեցություն ունենալու նպատակադրմամբ: Տարբերությունն այն է, որ, դասական սահմանմամբ, որպես կանոն, «փափուկ ուժի» քաղաքականությունը թելադրողը դոմինանտ սուբյեկտն է, իսկ լոբբինգի պարագայում հասարակական կարծիքը ձևավորվում է հասարակական շրջանակներում, սակայն վերջնական թիրախը ոչ թե հասարակությունն է, այլ այդ հասարակության միջոցով՝ որոշում կայացնողները: Ուստի երկուսի վերջնական թիրախն էլ, այսպես թե այնպես, էլիտաներն են: «Փափուկ ուժի» տեխնոլոգիայի կիրառման նպատակներից մեկը կոնկրետ աշխարհայացքով որոշում կայացնող շրջանակների ձևավորումն է: Լոբբինգի պարագայում էլ, որպես կանոն, թիրախը կրկին որոշում կայացնողներն են: Թերևս տարբեր են թիրախին հասնելու գործիքակազմերը: Այլ կերպ ասած՝ սովորաբար «փափուկ ուժի» քաղաքականությունը փորձում է ձևավորել էլիտա, իսկ լոբբինգն աշխատում է արդեն իսկ ձևավորված էլիտային դարձնել քաղաքական ճնշման թիրախ՝ հաճախ օգտագործելով նաև «փափուկ ուժի» քաղաքականության գործիքակազմը: Հետևաբար կարևոր է հասկանալ վերը նշված հարաբերակցության և այլ զուգահեռումների տեսական ու կիրառական կողմը, ինչպես նաև բացահայտել, թե զուգահեռ զարգացող այս ինստիտուտները գործառությանին համատեղ կիրառման և տեսական համադրության մեջ արժեքային ինչ շերտեր են զուգամիտում:

«Սառը պատերազմի» մեկնարկից հետո աշխարհում ընթացող զարգացումներն ամերիկյան քաղաքագիտական մտքի առջև խնդիր դրեցին պարզելու, թե Ամերիկայի Միացյալ Նահանգներն ինչ ճանապարհով պետք է մեծացնի իր միջազգային ազդեցութե-



յան շրջանակը, և ուժի ավանդական արտահայտչաձևերը (բանակ, տնտեսություն, աշխարհագրական տիրապետության տարածք) բնութագրական են հետագա քաղաքական զարգացման գործընթացների ընդհանուր տրամաբանության համար:

«Սառը պատերազմի» մեկնարկից հետո ուժի ընկալումը հետզհետե սկսեց փոխվել: Արդյունքում արդի քաղաքական զարգացումներում պետությունների ազդեցության գոտիների ձևավորման գործընթացում առավել մեծ դեր է խաղում տեխնոլոգիայի, կրթության և տնտեսության առաջընթացը, մինչդեռ աշխարհագրությունը, բնակչությունը և հանքահումքային պաշարների օգտագործումը իրականացվում է քաղաքականության խաղային տրամաբանության օգտագործմամբ:

Ուշագրավ է, որ հենց ամերիկյան քաղաքագիտական միտքն սկսեց գեներացնել «փափուկ ուժի» քաղաքականության հիմնաքարային դրույթները, այն դեպքում, երբ Ամերիկան տիրապետում է ռազմական, քաղաքական, տնտեսական, հանքահումքային և գիտական վիթխարի կապիտալի: Ըստ ամենայնի, ամերիկյան քաղաքագիտական միտքը հանգել է ուժի ավանդական չափորոշիչների փոփոխության գաղափարին այն բանից հետո, երբ պարզ է դարձել, որ ավանդական ուժի կիրառումն անհրաժեշտ է էականորեն սահմանափակել: Ուշագրավ է, որ դեռևս 1975 թ. Հենրի Քիսինջերը նկատել է. «Մենք մտնում ենք նոր ժամանակաշրջան. միջազգային հին կաղապարները քանդվում են: Աշխարհը կախվածության մեջ է հայտնվել տնտեսական, հաղորդակցական և մարդկային ձգտումներից»<sup>91</sup>: Այսպիսով՝ ուժի ընկալման ամերիկյան հայեցակարգի փոփոխությունն աստիճանաբար և անխուսափելիորեն հանգեցնում է միջազգային հարաբերություններում լուրջ տեղաշարժերի, վերանայումների, ինչպես նաև պետությունների քաղաքական կշիռների փոփոխությունների: Այս համատեքստում

---

<sup>91</sup> Nye J. S. Jr., Soft Power, Foreign Policy, N 80, Washington, Twentieth Anniversary, Autumn, 1990, p. 156.

քաղաքական զարգացման գործընթացների ժամանակի միտումը տանում էր նրան, որ անվտանգային միջավայրերի ապահովության ռազմական բաղադրիչը գնալով սպասարկողի դերում է հայտնվում:

Ուժի ավանդական ընկալումների փոփոխությունը հանգեցնում էր նաև երկկողմ և բազմակողմ ինտեգրացիոն ձևաչափերի զարգացմանը, ինչպես նաև անդրազգային կազմակերպությունների ստեղծմանը: Այսպես՝ հետպատերազմյան ժամանակահատվածում կազմավորվեցին ՄԱԿ-ը, Եվրոպայի խորհուրդը, Եվրոպական միությունը, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության (խորհուրդ) կազմակերպությունը և այլն: Թեև այս կառույցների ձևավորման հիմքում դրված էր ավանդական ուժի փոխակերպման հայեցակարգը, սակայն դրանք բոլորն էլ անվտանգության պահանջների բավարարմանն ուղղված և հետագա պատերազմների սանձազերծումը կանխելուն միտված կազմակերպություններ էին: Ինչ-որ առումով նաև հենց ինտեգրացիոն կազմավորումների ստեղծումն էականորեն սահմանափակեց ավանդական ուժի առանձին դրսևորումների կիրառման փորձերը, հետևաբար քաղաքագիտական միտքը կանգնեց ուժի նոր հայեցակարգը ձևակերպելու խնդրի առջև, ինչն արեց Ջոզեֆ Նայը՝ ի դեմս «փափուկ ուժի» տեսության: Այն կիրառական քաղաքականության և ակադեմիական քաղաքագիտության համադրության արդյունք է:

Պրոֆեսոր Զ. Նայի «փափուկ ուժի» տեսությունը մի կողմից միջազգային հարաբերությունների տեսական ընկալումների արդյունք է, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության պահանջմունքների հետևանք<sup>92</sup>: Նայը «փափուկ ուժը» սահմանում է որպես «կարողություն՝ ցանկացած ստանալու գրավիչ լինելու, ոչ

---

<sup>92</sup> **Lin Li, Hongtao Leng**, Joseph Nye's Soft Power Theory and its Revolution Towards Ideological and Political Education, Humanities and Social Sciences, vol. 5, N 2, 2017, p. 69–74.

թե հարկադրանքի կամ ֆինանսական գործարքների միջոցով»<sup>93</sup>: Նա ընդգծում է, որ գայթակղությունը միշտ առավել արդյունավետ է, քան հարկադրանքը: Զ. Նայը «փափուկ ուժի» աղբյուր է դիտում մշակույթը, ներքին արժեքները, արտաքին քաղաքականությունը: Հեղինակը «փափուկ ուժի» քաղաքականությունը դիտարկում է բազմակողմանիության համատեքստում և նկատում. «Խաղաղությանը հաղթելն ավելի բարդ է, քան պատերազմում հաղթելը, և «փափուկ ուժը» կարևոր է խաղաղությանը հաղթելու համար»<sup>94</sup>:

Զ. Նայը նկատում է, որ ուժը նման է եղանակի. բոլորը կախված են դրանից և խոսում են դրա մասին, բայց քչերն են հասկանում այն: Բառարանային սահմանմամբ, ուժն ինչ-որ բան անելու կարողությունն է: Հիմնականում ուժը կարողություն է՝ ստանալու այն արդյունքը, որը դու ցանկանում ես: Բառարանային մեկ այլ սահմանմամբ, ուժ նշանակում է կարողունակություն՝ ազդելու այլոց պահվածքի վրա: Մասնավորապես, ուժն այլոց պահվածքի վրա ազդելու կարողություն է՝ ցանկալի արդյունք ստանալու համար: Այլոց պահվածքի վրա ազդելու բազմաթիվ ձևեր կան. կարելի է պարտադրել, սպառնալ, վճարել կամ լինել գրավիչ և համաձայնել դիմացինի հետ՝ հասնելու ցանկալիին<sup>95</sup>:

Զ. Նայը կասկածի տակ է դնում ավանդական ուժի արդյունավետության հարցն ընդհանրապես. «Ուժային ռեսուրսների տիրապետումը չի երաշխավորում, որ դու կարող ես հասնել ցանկալի արդյունքի, օրինակ՝ ռեսուրսային առումով ԱՄՆ-ը շատ ավելի ուժեղ էր, քան Վիետնամը, բայց մենք պարտվեցինք Վիետնամական պատերազմում: Ամերիկյան աշխարհի միակ գերտերությունն էր 2001 թ., բայց մենք ծախողեցինք մեր պաշտպանությունը սեպտեմբերի 11-ին»<sup>96</sup>:

Զ. Նայն առաջարկում է «կոշտ» և «փափուկ» ուժերի ռեսուրսա-

---

<sup>93</sup> **Nye J. S.**, *Soft Power, The means of Success in World Politics*, New York, 2004, p. X.

<sup>94</sup> Նույն տեղում:

<sup>95</sup> Նույն տեղում, էջ XII:

<sup>96</sup> Նույն տեղում, էջ 3:

յին և ուժային արտահայտչաձևերի տարբերությունների հետևյալ աղյուսակները<sup>97</sup>:

-	Կոշտ ուժ	Փափուկ ուժ
Վարքագծի ուղղություններ	սպառնալիք ← դրդում-հարկադրանք	համընկնում → օրակարգի ձևավորում-գրավչություն
Հավանական ռեսուրսներ	ճնշում սանկցիաներ վճարումներ կաշառք	ինստիտուտներ արժեքներ մշակույթ քաղաքականություն

-	Վարքագիծ	Առաջնային արժեքներ	Կառավարական քաղաքականություն
Զինվորական ուժ	պարտադրանք զսպում պաշտպանություն	սպառնալիք ճնշում	պարտադրող դիվանագիտություն պատերազմ դաշինք
Տնտեսական ուժ	դրդում հարկադրանք	վճարումներ պատժամիջոցներ	օգնություն կաշառք պատժամիջոցներ
Փափուկ ուժ	գրավչություն օրակարգի ձևավորում	արժեքներ մշակույթ քաղաքականություն ինստիտուտներ	հանրային դիվանագիտություն երկկողմանի և բազմակողմանի դիվանագիտություն

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 3, 8:

Այսպիսով, ինչպես վերը նշվեց, «փափուկ ուժի» տեխնոլոգիայի կիրառումն ընդգրկում է եռաչափ հարթություն՝ **մշակութային, քաղաքական-արժեքային և արտաքին-քաղաքական**: Այս ոլորտներում է, որ «փափուկ ուժի» քաղաքականության գործադրմանը լծված «ուղեղային կենտրոններն» ու պետություններն արտահանում են այնպիսի տեղեկություն և վարում այնպիսի քաղաքականություն, որոնք միտված են ձևավորելու միջազգային ազդեցության լայն շրջանակ:

«Փափուկ ուժի» գործիքակազմի բաղկացուցիչներ կարող են համարվել նորարարական տեխնոլոգիաների կիրառումն ու բիզնես միջավայրը, մշակութային քաղաքականությունը, կառավարման մոդելը, հանրային և խորհրդարանական դիվանագիտությունը, կրթությունը: Այս բաղկացուցիչների համադրումը հասարակության քաղաքական մշակույթի և սոցիալականացման գործընթացի փոփոխություններին կարող է «փափուկ ուժը» վերածել «խելացի ուժի», ինչը, ըստ Ժ. Նայի, մեծացնում է լիդերների և կառավարող էլիտայի պատասխանատվության մակարդակը<sup>98</sup>: Ավելացնենք, որ Ժ. Նայը «խելացի ուժը» սահմանում է նաև որպես հարկադրանքի «կոշտ ուժի» համադրում համոզման և գրավչության «փափուկ ուժի» հետ<sup>99</sup>:

«Փափուկ ուժի» տեխնոլոգիան և լոբբինգի ինստիտուտն ունեն գործառության նմանություններ, որոնք քաղաքական գիտության մեջ ըստ պատշաճի քննարկված չեն: Երբ որևէ խումբ կամ ազգային փոքրամասնություն, չտիրապետելով ավանդական ուժի որևէ ինստիտուտի, կարողանում է ազդել ընդունող երկրի քաղաքական ղեկավարության և հասարակական կարծիքի վրա, դա ևս «փափուկ ուժի» կիրառման տեխնոլոգիա է ենթադրում, այն տարբերությամբ, որ «փափուկ ուժի» քաղաքականությունն այս դեպքում

---

<sup>98</sup> Մարգարյան Մ.Մ., Մարգարյան Մ.Գ., Նիկողոսյան Լ.Գ., «Գունավոր հեղափոխություն». տեսություն և տեխնոլոգիաներ, Երևան, «Պետական ծառայություն», 2021, էջ 113:

<sup>99</sup> Nye J. S., The Future of Power, New York 2011, p. XIII.

չի թելադրվում դոմինանտ սուբյեկտի կողմից: Ամենևին պատահական չէ, որ Լիոնել Զեթերը լրբինգը համարում է քաղաքական համոզման արվեստ<sup>100</sup>: Ինչպես վերը նշեցինք, քաղաքական գործընթացում համոզման առանցքային դերի ու կարևորության մասին է խոսում նաև Ջոզեֆ Նայը:

Խնդիրն առավել լավ պատկերացնելու համար փորձենք վեր հանել էթնիկ լրբինգի գործառությանին հարաբերակցությունը «փափուկ ուժի» տեսության հետ:

Հաշվի առնելով սույն աշխատանքի առաջին գլխում քննված՝ էթնիկ լրբինգի գործունեության առանձնահատկությունները, որոնցով նրանք տարբերվում են լրբիստական այլ խմբերից, և դրանք համադրելով «փափուկ ուժի» գործիքակազմի հետ, կտեսնենք, որ և «փափուկ ուժի» կիրառման, և լրբիստական գործունեության դեպքում փորձ է արվում՝

- ուժի ավանդական կիրառումը բացառող մեթոդներով հասնելու հասարակական կարծիքի որոշակի փոփոխության կամ նպատակային ուղղորդման,
- ուժի ավանդական կիրառումը բացառող մեթոդներով հասնելու ցանկալի որոշումների ընդունման. տարբերությունն այն է, որ «փափուկ ուժի» տեսությունը ձգտում է ձևավորել էլիտա, իսկ լրբինգի պարագայում հիմնականում փորձ է արվում հասնելու արդեն իսկ գոյություն ունեցող էլիտայի կողմից ցանկալի որոշումների ընդունման,
- համոզման և գրավչության շնորհիվ, ինչպես նաև արժեհամակարգային և քաղաքակրթական նույն ընկալումներն ունենալու հավաստմամբ հասնելու ակնկալվող արդյունքի,
- այս կամ այն հարցի լուծման համար ձևավորելու ընկերների և բարեկամների շրջանակ,
- օգտվելու հանրային դիվանագիտության ընձեռած լայն հնարավորություններից ու գործիքակազմերից,

---

<sup>100</sup> Zetter L., նշվ. աշխ., էջ 2:

- օգտվելու կրթության, երիտասարդների շարունակական վերապատրաստման հնարավորություններից:

Երկու դեպքում էլ գործ ունենք քաղաքական գործընթացի ուրույն և կայացած ինստիտուտների հետ, որոնք բացառում են ուժի ավանդական ընկալման՝ ռազմականության, կոռուպցիոն գործարքների, հարկադրանքի ու պարտադրման կիրառումը:

Նաև նկատենք, որ «փափուկ ուժի» տեսությունը, ձևավորվելով գերտերության քաղաքագիտական դպրոցում և, ըստ էության, հանդես գալով որպես պետական քաղաքականության գործիք, հարմարեցվել է անդրազգային կազմակերպությունների, ի մասնավորի՝ լոբբիստական կազմակերպությունների կողմից: Ուստի պատահական չէ, որ «փափուկ ուժի» գործիքակազմը սկսեց կիրառվել, ըստ էության, դրա սահմանումից շատ առաջ, ինչը համընկավ նաև միջազգային լոբբիստական գործունեության զարգացման հետ: Հետևաբար կարելի է նաև եզրակացնել, որ քաղաքական գործընթացում «փափուկ ուժի» և լոբբինգի ինստիտուտի դերակատարությունների հընթացս մեծացումը որոշակիորեն պայմանավորված է մեկը մյուսով:

## **2.3 Ղարաբաղյան հիմնախնդիրը ՀՀ-ԵՄ հարաբերությունների քաղաքական զարգացման գործընթացում**

Միջազգային հարաբերություններում և քաղաքական գիտության մեջ ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին կարևոր արձանագրումներից մեկը աշխարհի երկբևեռ մոդելից միաբևեռի անցման շուրջ ամերիկյան քաղաքագիտական մտքի մի շարք հայտնի ներկայացուցիչների անթաքույց հավակնությունն էր: Նրանք սկսեցին գիտավերլուծական դատողություններ անել միաբևեռ աշխարհի ձևավորման անխուսափելիության մասին՝ Միացյալ Նահանգների առաջնորդությամբ: Հայտնի են Չ. Քրաուֆթենների, Դ. Մադսենի,

Ա. Լիվենի, Ու. Վոլֆորթի և այլոց՝ միաբնեռության վերաբերյալ աշխատանքները: Ամերիկյան քաղաքագետների փոքրաթիվ, բայց ոչ պակաս հեղինակավոր մեկ այլ խումբ (Կ. Լեյն, Չ. Մեյնս, Հ. Քիսինջեր, Ֆ. Ֆուկույամա) այլ կերպ էր գնահատում համաշխարհային զարգացումները և միաբնեռ աշխարհը համարում էր անհեռանկար: Իսկ նեոռեալիստները կարծում էին, որ աշխարհի միաբնեռ կարգն անոմալիա է<sup>101</sup>: 2008 թ. Ռ. Հասսը՝ «ԱՄՆ-ը որպես համաշխարհային շերիֆ» հայեցակարգի հեղինակը, ընդունեց, որ կայուն միաբնեռության ժամանակն ավարտվել է, և «աշխարհը թևակոխել է անբնեռ կարգի դարաշրջան, որը բնութագրվում է ուժի և ազդեցության դիֆուզիայով, ակտիվ, այդ թվում և պետական խաղացողների աճով»<sup>102</sup>:

Երկրբնեռ աշխարհի փլուզումն առաջին հերթին ենթադրում էր ազդեցության գոտիների վերաբաժանում: Միջազգային նոր վերադասավորումները կամ դրանց փորձերն առավել ցայտուն դրսևորվեցին հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ գոյություն ունեն միջէթնիկ հակամարտություններ կամ այդպիսի հակամարտությունների բռնկման իրական վտանգ: Այս առումով Հարավային Կովկասը ևս միջազգային ուժային կենտրոնների հետաքրքրությունների հետապնդման թատերաբեմ է՝ երեք չլուծված հակամարտությունների (Աբխազիա, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա) գոյությամբ պայմանավորված: Ասվածի համատեքստում ամենևին պատահական չէ Ուիլյամ Զերթմանի այն կարծիքը, որ աշխարհաքաղաքական գործոնը մեծ ազդեցություն ունի Հարավային Կովկասի բոլոր երեք երկրների ինչպես ներքաղաքական, այնպես էլ միջպետական հարաբերությունների, մասնավորապես հակամարտությունների ծագման և ընթացքի կարգավորման վրա, և շատ հաճախ հենց այդ գործոնով է պայմանավորված էթնոքա-

---

<sup>101</sup> **Թորոսյան Տ.**, Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, քանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012, էջ 62–69:

<sup>102</sup> Նույն տեղում, էջ 70:



ղաքական հակամարտությունների անլուծելի լինելը<sup>103</sup>:

Քննարկվող տեսական նյութն ամրապնդելու համար տեղին է հիշել երկար տարիներ ղարաբաղյան հիմնախնդրով զբաղվող անգլիացի հետազոտող Թոմաս դը Վաալի 2011 թ. արտաբերած հետևյալ միտքը. «Միացյալ Նահանգները, ըստ էության, որևէ ռազմավարական շահ չունի Արևմտյան Բալկաններում: Համեմատեք Լեռնային Ղարաբաղի հետ: Հակամարտության գոտու հյուսիսում Վրաստանն ու Ռուսաստանն են, արևմուտքում՝ Թուրքիան, հարավում՝ Իրանը: Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղն անցնում է շփման գծից ընդամենը 12 մղոն դեպի հյուսիս: Ադրբեջանը դեպի Աֆղանստան զինուժի տեղափոխման հանգուցային կետ է: Հայ համայնքը Վաշինգտոնում ամենաբարձր ծայն ունեցողներից է: Այլ խոսքով, եթե անաչառ լինենք, այդ հակամարտությունը Միացյալ Նահանգների համար շատ ավելի մեծ ռազմավարական նշանակություն ունի, քան երբևէ Բոսնիան ունեցել է»<sup>104</sup>: Տեղին է հիշել նաև ռուս հայտնի դիվանագետ, Մինսկի խմբում ռուսական կողմի նախկին ներկայացուցիչ Վ. Կազիմիրովի այս միտքը. «Դժվար է անգամ ասել, թե ինչով է ավելի հարուստ ղարաբաղյան կարգավորման փորձը՝ Ռուսաստանի և որոշ արևմտյան երկրների համագործակցությամբ, թե՛ նրանց մոտեցումների տարբերությամբ ու միմյանց դեմ պայքարով»<sup>105</sup>:

Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ տեսամեթոդական և գիտավերլուծական աշխատանքներում միանշանակ պետք է հաշվի առնել Տ. Թորոսյանի պնդումը. «Հակամարտության վրա տարածաշրջանում ծավալված աշխարհաքաղաքական պայքարի ազդեցությունը հատկապես ընդգծված դրսևորումներ ունեցավ

---

<sup>103</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>104</sup> **De Waal T.**, Armenia and Azerbaijan are at it Again- The National Interest, March 30, 2011, <https://nationalinterest.org/commentary/armenia-azerbaijan-at-it-again-5087>

<sup>105</sup> **Казими́рова В.Н.**, Мир Карабаха. Посредничество России в урегулировании нагорно-караха́ского конфликта. М., 2009, с. 174–201.

2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմից հետո, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերջին փուլի ընթացքում, որի հիմքում «Մադրիդյան սկզբունքներն» են: Եթե Բալկաններում 1999 թ. ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունից հետո աշխարհաքաղաքական կողմնորոշումների հարցը վերջնականապես լուծվեց, ապա Հարավային Կովկասում ազդեցության գոտիների վերաբաժանման պայքարը 2008 թ. օգոստոսյան հնգօրյա պատերազմից հետո ավելի բորբոքվեց ու դեռևս ընթացքի մեջ է»<sup>106</sup>:

Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում Եվրոպական միության քաղաքական վարքագծի ուսումնասիրման կարևորությունը պայմանավորված է նաև երկու այլ հանգամանքով: Առաջին՝ նեոլիբերալիզմի և գլոբալիզացիայի տեսամեթոդական ձևավորումից հետո՝ 20-րդ դարի վերջին քառորդից սկսած, միջազգային հարաբերություններում նկատելի է մեկ այլ կարևոր զարգացում՝ գործուն միջազգային կազմակերպությունների ձևավորումը, ինչպես նաև դաշինքների կառուցվածքային ու գործառության մեխանիզմների առավել հստակեցումը: Այս համատեքստում առաջիններից մեկը պետք է նկատի ունենալ հենց Եվրոպական միությունը՝ որպես պետությունների տնտեսա-քաղաքական խոշորագույն միություն:

Միջազգային ինտեգրացիոն կազմակերպությունների աճող դերի և տնտեսական գլոբալիզացիայի ու շուկայի շարունակական ազատականացման պայմաններում չպետք է աչքաթող անել պետությունների բացարձակ պատասխանատվությունը՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական գործառույթների առումով<sup>107</sup>:

---

<sup>106</sup> **Torosyan T.**, The Return of Turkey.-Russia in Global Affairs, 2009, 3, July-September, p. 120-129.

<sup>107</sup> **Waltz K.**, Globalization and American power,- The international interest, vol. 59, spring. 2000, p. 46-56.

Երկրորդ. ակնհայտ է, որ Կոստվոյի հակամարտության կարգավորման տրամաբանությունը և, ինչհիմամբ, նաև դարաբաղյան հակամարտության բանակցային վերջին փուլը (մինչև 2020 թ. պատերազմ) ցույց են տալիս, որ միջազգային հարաբերություններում գնալով մեծ կարևորություն էր ստանում հակամարտությունների կարգավորման իրավական գործոնը: Սակայն չի կարելի նկատի չառնել, որ քաղաքական բաղադրիչը դառնում է իրավական բաղադրիչի ընձեռնած հնարավորությունների լուրջ խոչընդոտ՝ նորից առաջ բերելով «քաղաքական շահ, թե՛ իրավական լուծում» դիլեման: Վերջինս հատկապես սրվում է այն տարածաշրջաններում, որտեղ բախվում են գերտերությունների կամ նման կարգավիճակի հավակնող երկրների շահերը: Դարեր շարունակ այդ շահերի պաշտպանության միակ գործիքը եղել է ուժը, սակայն կասկածից վեր է, որ Երկրորդ աշխարհամարտից հետո միջազգային հարաբերություններում իրավական բաղադրիչը ձեռք է բերել կարևոր կազմակերպական նշանակություն<sup>108</sup>:

Այս առումով, հաշվի առնելով Եվրոպական միության կողմից արժեքահեն քաղաքականության վերաբերյալ հայտարարությունները, որոնք նաև ԵՄ հիմնադիր փաստաթղթերի և ղեկավար ինստիտուտների գործունեության հիմքում են, չափազանց կարևոր է դարաբաղյան հակամարտության վերաբերյալ համակողմանի աշխատանքը հիմնախնդրի թե՛ իրավական և թե՛ քաղաքական պատշաճ սպասարկման առումով:

Պատահական չէ, որ վերջին երկու-երեք տասնամյակներում մեծացել է այն ոլորտների և խնդիրների թիվը, որոնք փորձ է արվում կարգավորել միջազգային իրավունքի շրջանակներում: Հետևաբար, «քաղաքական շահեր, թե՛ իրավական լուծումներ» երկընտրանքային հարցադրման իրական և ամբողջական պատասխանն ստանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ միջազգային հարաբերություններում արժեքաբանական գործոնների

---

<sup>108</sup> Թորոսյան Տ., նշվ. աշխ., էջ 19:

նշանակությանը: Այդ գործոնները մասնավորապես ներառում են բարոյա-էթիկական և իրավական նորմեր<sup>109</sup>:

Հատկանշական է, որ, պայմանավորված գործունեության բնույթով և արտաքին քաղաքական առաջնահերթություններով, այնքան էլ միանշանակ չէ՝ միջազգային հարաբերություններում Եվրոպական միությունը հանդես է գալիս որպես ուժային կենտրոն, թե՛, այնուամենայնիվ, այն ուժային բևեռ է, որն ավելի շատ ձգտում է ոչ թե համագործակցայնության, այլ սեփական շահերի պաշտպանության: 2022 թ. փետրվարի 24-ին սկսված ռուս-ուկրաինական պատերազմում ԵՄ դեռևս պահպանվող միասնական քաղաքականությունը փաստում է, որ Եվրոպական միությունը միջազգային հարաբերությունների հանդարտ փուլում կարող է հանդես գալ որպես ուժային կենտրոն, սակայն տուրբուլենտ իրավիճակներում այն ի զորու է վերածվելու քաղաքական բևեռի՝ սեփական առաջնահերթությունների հստակ գիտակցմամբ ու սպասարկմամբ: Երկու պարագայում էլ միանշանակ է, որ, ի դեմս Եվրոպական միության, մենք գործ ունենք քաղաքական հարաբերությունների գլոբալ դերակատարի հետ, որի քաղաքական վարքը բավական բարդ է և ենթակա չէ միանշանակ սահմանման:

Ինչ վերաբերում է Հարավային Կովկասում Եվրոպական միության տարածաշրջանային հետաքրքրություններին, ապա ողջ արևելաեվրոպական տարածքի համար դրանք պետք է դիտարկել նույն օրինաչափություններով և երկու մակարդակով՝ քաղաքական-արժեհամակարգային համագործակցության ու ընդլայնման և ենթդեմոսիկ:

Հարավային Կովկասը, որպես ԵՄ-ի արևելյան հարևան, հանդիսանում է Միության կարևոր երկու ծրագրերի՝ Հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության (ԱԳ) տարածք:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը մեկնարկել է 2003 թվականից: Այն նպատակ ուներ կառավարելու Եվրոպա-

---

<sup>109</sup> Նույն տեղում, էջ 24:

կան միության հարաբերությունները ԵՄ 16 հարևան-պետությունների հետ՝ հարավային և արևելյան ուղղություններով: Ըստ պաշտոնական փաստաթղթերի՝ Եվրոպական հարևանության քաղաքականության նպատակն է. «Խուսափել ընդլայնված Եվրոպայի և հարևանների միջև բաժանարար գծերի առաջացումից, փոխարենն ամրապնդել բոլորի բարգավաճումը, կայունությունը և անվտանգությունը»<sup>110</sup>:

ՀՀ-ԵՄ հարաբերությունների թերևս կարևորագույն հարթակներից մեկը՝ Արևելյան գործընկերությունը, մեկնարկեց 2009 թ. մայիսին Պրահայի գագաթնաժողովով՝ նպատակ ունենալով ուժեղացնելու և խորացնելու ԵՄ հարաբերությունները 6 հարևան պետությունների՝ Հայաստանի, Ադրբեյջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ:

Արևելյան գործընկերության քաղաքականության առաջնահերթությունների կիրառական դաշտերը չորսն են<sup>111</sup>.

- ավելի ուժեղ տնտեսություն (տնտեսական զարգացում և շուկայական հնարավորություններ),
- ավելի ուժեղ կառավարում (պետական կառույցների ամրապնդում և լավ կառավարում),
- ավելի ուժեղ փոխկապակցվածություն (փոխկապակցվածություն, էներգախնայողություն և կլիմայական փոփոխություններ),
- ավելի ուժեղ հասարակություն (շարժունակություն և միջանձնային շփումներ):

Ներկայումս ԵՄ-ի և ԱԳ պետությունների հարաբերություններում առկա է բովանդակային երեք հարթություն՝ ասոցացման (Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա), համագործակցության (Հայաստան) և գործակցության (Բելառուս (կասեցված), Ադրբեյջան):

---

<sup>110</sup> European Neighborhood Policy (ENP), [https://www.eeas.europa.eu/eeas/european-neighbourhood-policy\\_en](https://www.eeas.europa.eu/eeas/european-neighbourhood-policy_en)

<sup>111</sup> Eastern Partnership, [https://www.eeas.europa.eu/eeas/eastern-partnership\\_en](https://www.eeas.europa.eu/eeas/eastern-partnership_en)

Արևելյան գործընկերության շրջանակներում ցայսօր տեղի է ունեցել վեց գազաթնաժողով, որոնց ընդունած համատեղ հռչակագրերում տեղ գտած ձևակերպումները կարևոր նշանակություն ունեն դարաբաղյան հիմնախնդրում Եվրոպական միության քաղաքական վարքը որոշակի ժամանակաշրջանի համար հասկանալու տեսանկյունից: Սույն ենթագլխի համապատասխան հատվածում կանդրադառնանք հիշյալ գազաթնաժողովների հայտարարություններին:

Հարավային Կովկասում ԵՄ քաղաքականությանն անդրադառնալիս պետք է նկատի ունենալ Միության էներգետիկ հետաքրքրությունները: Հարավկովկասյան էներգակիրների տարանջումը որոշակի ազդեցություն ունի դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի քաղաքական բաղադրիչի վրա:

2018 թ. հունիսին «Բրիթիշ Փեթրոլիումի» հրապարակած «Համաշխարհային էներգիայի վիճակագրական վերլուծության»<sup>112</sup> համաձայն՝ 2017 թ. տարեվերջի դրությամբ Ադրբեջանում գազի հաստատված պաշարները կազմել են 1.3 տրլն խմ (համաշխարհային պաշարների 0.7%-ը): Նույն աղբյուրի համաձայն՝ 2017 թ. Ադրբեջանում գազի արդյունահանման ծավալները կազմել են 17.7 մլրդ խմ (համաշխարհային արդյունահանման 0.5%-ը), իսկ ներքին սպառումը՝ 10.6 մլրդ խմ (համաշխարհային սպառման 0.3%-ը): Նշենք, որ ադրբեջանական աղբյուրներում երկրի գազի պաշարները գնահատվում են 2.6 տրլն խմ:

Եվրոպական միությանը հետաքրքրող՝ Ադրբեջանի գազային նկրտումներն ամփոփված են «Հարավային գազային միջանցք» ծրագրում, որը նախատեսում է ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման 2-րդ փուլի արդյունքում արդյունահանվող գազն ուղղել դեպի թուրքական և եվրոպական շուկաներ: Ծրագի-

---

<sup>112</sup> BP Statistical Review of World Energy 2018, <https://www.bp.com/content/dam/bp/business-sites/en/global/corporate/pdfs/energy-economics/statistical-review/bp-stats-review-2018-full-report.pdf>

որը պայմանականորեն բաղկացած է չորս հատվածից՝ «Շահ Դենի-գի» շահագործման 2-րդ փուլի մեկնարկ, Հարավկովկասյան խողովակաշարի արդիականացում, «TANAP» ծրագրի իրագործում (որը ենթադրում է խողովակաշարի կառուցում Թուրքիայի տարածքում, ինչը թույլ է տալիս ադրբեջանական գազը Վրաստանի սահմանից հասցնել մինչև Բալկաններ), ինչպես նաև «TAP» ծրագրի իրականացում (որի շրջանակներում խողովակաշարը Թուրքիայի սահմանից Բալկանյան երկրների տարածքով և Ադրիատիկ ծովով հասնում է Իտալիա)<sup>113</sup>: Այս ծրագրի առաջնային գործարկումն սկսվեց 2018 թվականից: Գազը պետք է մատակարարվի Հարավարևելյան Եվրոպայի մի շարք երկրների, թեև նախատեսվող ծավալները (10 մլրդ խմ) չեն կարող լիովին բավարարել տարածաշրջանի շուկայի կարիքները: Այդուհանդերձ, երկարաժամկետ հեռանկարում ծրագրի հեղինակները մտադիր են ավելացնել Հարավային գազային միջանցքի հզորությունը և կրկնապատկել մատակարարվող գազի ծավալները, թեև նման ծրագրի իրագործելիությունը կապված է մի շարք բարդությունների հետ, որոնց կանդիդատնանք ստորև:

Ակնհայտ է, որ ադրբեջանական էներգետիկ ծրագրերում ԵՄ հետաքրքրության նպատակը Միության էներգետիկ քաղաքականության հավասարակշռումն (դիվերսիֆիկացիա) է: Սակայն այս հանգամանքը պետք չէ գերազնահատել: Բավական է նշել, որ Հարավային գազային միջանցքով ԵՄ հասնող ադրբեջանական գազի իրատեսական ծավալը կարող է լինել շուրջ 10 միլիարդ խորանարդ մետր, ինչը Եվրոպական տարեկան սպառման 3%-ն է, իսկ ներմուծման՝ 2%-ը<sup>114</sup>: Մյուս կողմից, Ռուսաստանը շարունակում է հսկայամասշտաբ ծրագրեր իրականացնել՝ Եվրոպա հասնող գա-

---

<sup>113</sup> «Ադրբեջանական գազի արտահանման ծավալների սպասվող աճը՝ որպես արտաքին քաղաքական ազդեցության գործիք. հնարավոր հետևանքները տարածաշրջանի և Հայաստանի համար», «Լոյս» հիմնադրամ, Երևան, 2019, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=91>

<sup>114</sup> Նույն տեղում:

զի ծավալն ավելացնելու համար: Այն, իհարկե, անհամեմատելի է ադրբեջանական գազի ծավալների հետ, թեև 2022 թ. ուկրաինական պատերազմը լրջագույն խնդիրներ է ստեղծել հեռանկարում ռուսական գազի եվրոպական սպառման համար:

Ուկրաինական պատերազմից հետո էներգակիրների հետ կապված դժվարությունները Եվրոպական միությանը դրդել են էներգակիրների հավասարակշռման նպատակով նորանոր շուկաների փնտրտուքի, որոնք մեզ հետաքրքրող տարածաշրջանում կարող են լինել Իրանը և Ադրբեջանը: Իրանի դեպքում գործընթացն առարկայական դրսևորում չի ստանում Արևմուտքի հետ Իրանի միջուկային գործարքի ձգձգման պատճառով, իսկ Ադրբեջանի հետ 2022 թ. հուլիսի 18-ին ստորագրվել է էներգիայի ոլորտում ռազմավարական համագործակցության փոխըմբռնման հուշագիր, ինչը նախատեսում է գրեթե կրկնապատկել ադրբեջանական գազի տարանցումը Եվրոպա: Ինչպես արդեն նշեցինք, ադրբեջանական գազի ծավալները Եվրոպական կարիքների բավարարման համար խիստ անբավարար են, իսկ հուլիսի 18-ի փաստաթուղթն իրավաբանական ուժով ընդամենը հուշագիր է: Այն կողմերի վրա իմպերատիվ կատարում ենթադրող պարտավորություններ չի սահմանում, իսկ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների ռազմավարական բնույթն այդ փաստաթղթով դիտարկվում է միայն էներգետիկ հարթության մեջ: Ասվածը հիմնավորվում է նաև նրանով, որ ԵՄ-ի և Ադրբեջանի միջև Համապարփակ և ընդլայնված համագործակցության պայմանագիրը դեռ ստորագրված չէ, մինչդեռ պայմանագրի նախագիծը տևական ժամանակ է, ինչ պատրաստ է: Տեղին է հիշել նաև «Նաբուկո» գազատարի շահագործման հետևանքով Եվրոպայից դարաբաղյան հակամարտության առումով դրական ազդակներ ակնկալելու ադրբեջանական քաղաքականության մասին ադրբեջանցի հետազոտող Զ. Գուլիևի՝ դեռևս 2011 թ. հետևյալ նկատառումը. «Արդեն կարելի է արձանագրել, որ «Նավթ Ղարաբաղի դիմաց» բանաձևը նույնպես չհանգեցրեց սպասվող արդյունքին: Անհիմն էր հաշվարկը, թե «նավ-



թային դիվանագիտությունը» կխթանի Արևմուտքի հետաքրքրությունը հակամարտության արագ կարգավորման նկատմամբ: Արևմուտքի համար, ինչպես և Ռուսաստանի, ավելի կարևոր է ոչ այնքան խնդրի վերջնական լուծումը, որքան հակամարտող կողմերի և բուն հակամարտության աշխարհաքաղաքական կապը՝ ըստ սեփական շահերի դրանք ուղղորդելու նպատակով»<sup>115</sup>: Այս համատեքստում ամենևին պատահական չէ, որ Արևելյան գործընկերության տարածքում ԵՄ արտաքին քաղաքականությունը որոշակի վերաձևակերպումների ենթարկվեց: Դա արտացոլվեց Արևելյան գործընկերության Ռիգայի գագաթնաժողովում, երբ ընդունվեց ԱԳ երկրների հետ ԵՄ տարբերակված քաղաքականության մոդելը, որը ենթադրում էր ԵՄ արտաքին քաղաքականության հստակ տարբերակվածություն քաղաքական ու էներգետիկ ոլորտներում և միջէթնիկ հակամարտություններում: Այս խնդրին կանդիդատանք սույն ենթագլխի համապատասխան հատվածում:

Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ Եվրոպական միության քաղաքական վարքի վերլուծության համար կարևոր նշանակություն ունեն ԵՄ հիմնական դեկլար կառույցների՝ Եվրոպական խորհրդարանի, Եվրոպական խորհրդի, Եվրոպական միության խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված համապատասխան փաստաթղթերը:

Եվրոպական խորհրդարանը (այսուհետ՝ նաև ԵԽ, Խորհրդարան) ԵՄ հիմնարար փաստաթղթերով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, Եվրոպական կառույցներից ամենաշատն է առնչվում Ղարաբաղյան հակամարտությանը:

Եվրոպական խորհրդարանը Ղարաբաղյան հակամարտությանը սկսել է առնչվել Ղարաբաղյան շարժման սկզբից: 1988 թ. սկզբից մինչև 1994 թ. սկիզբը ԵԽ-ն ուղղակիորեն Արցախին առնչվող ավելի քան մեկ տասնյակ բանաձև է ընդունել: Առաջինը 1988 թվականի մարտի 10-ի «**Խորհրդային Հայաստանում վեր-**

<sup>115</sup> Թորոյան Տ., նշվ. աշխ., էջ 123:

**ջին զարգացումների վերաբերյալ եւս բանաձևն»<sup>116</sup> է, որտեղ առաջին անգամ արձանագրվում է. «Եվրոպական խորհրդարանը մտահոգություն է հայտնում և ուշադիր հետևելու է ԽՍՀՄ տարբեր ժողովուրդների կողմից իրենց ինքնությունը, մշակույթը և ինքնավարությունը հաստատելու փորձերին»։ **Հատկանշական է, որ բանաձևի անվանման մեջ որպես հակամարտության տարածք ոչ թե Ադրբեջանը կամ Լեռնային Ղարաբաղն են հիշատակվել, այլ Խորհրդային Հայաստանը:****

Այնուհետև 1988 թվականի հուլիսի 7-ին Եվրոպական խորհրդարանն ընդունում է «Սովետական Հայաստանի իրավիճակի վերաբերյալ»<sup>117</sup> բանաձևը, որտեղ ասված է. «**Լեռնային Ղարաբաղի ինքնավար շրջանի (որի ներկայիս բնակչության 80%-ը հայ է) պատմական կարգավիճակը որպես Հայաստանի մաս, 1923-ին Ադրբեջանի ներսում այդ տարածքի կամայական ներառումը, ադրբեջանական Սումգայիթ քաղաքում հայերի կոտորածը 1988-ի փետրվարին... վատթարացող քաղաքական իրավիճակը, որը հանգեցրել է Սումգայիթում հակահայկական ջարդերի և Բաքվում բռնությունների լուրջ գործողությունների, ինքնին սպառնալիք են Ադրբեջանում ապրող հայերի անվտանգությանը...»։ Ապա Խորհրդարանը «դատապարտում է Ադրբեջանում հայ ցուցարարների նկատմամբ կիրառված բռնությունները, աջակցում է հայ փոքրամասնության պահանջին՝ Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության հետ վերամիավորվելու համար»:**

Այսպիսով, վերոհիշյալ երկու բանաձևերով Եվրոպական խորհրդարանը, ըստ էության, ոչ միայն չի առարկում հայկական

---

<sup>116</sup> European Parliament Resolution on recent events in Soviet Armenia, <https://karabakhfacts.com/european-parliament-resolution-on-recent-events-in%C2%B7soviet-armenia-joint-resolution-replacing-docs-b2-39-47-and-6788/>

<sup>117</sup> European Parliament Resolution on the situation in Soviet Armenia, <http://www.nkr.am/en/documents/1988-07-07-EuroParl-Resolution-on-situation-in-Armenia>

կողմի՝ Արցախը Խորհրդային Հայաստանի կազմ փոխադրելու պահանջին, այլև լիովին ընդունում է դա՝ վկայակոչելով երկրամասի՝ 1923 թվականին Ադրբեջանի կազմում կամայական ներառման փաստը և, հաշվի առնելով պատմական իրողությունը, օգտագործում է **վերամիավորում** տերմինը:

1989 թվականի ընթացքում երկու անգամ՝ հունվար և մայիս ամիսներին, ԵԽ-ն բանաձևեր է ընդունել համապատասխանաբար **«Խորհրդային Հայաստանում բռնաճնշումների վերաբերյալ»**<sup>118</sup> և **«Ղարաբաղ» կոմիտեի անդամների ազատ արձակման վերաբերյալ»**<sup>119</sup> անուններով:

Այս բանաձևերում ԵԽ-ն մի դեպքում խստորեն քննադատում է «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալությունը, մյուս դեպքում՝ ողջունում 1989 թվականի հունվարի 12-ին «Լեռնային Ղարաբաղին հատուկ կարգավիճակ տրամադրելու մասին»<sup>120</sup> ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը: «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին ազատ արձակելու վերաբերյալ ընդունված բանաձևով ԵԽ-ն նաև կարծիք է հայտնում, որ **«քաղաքական գործընթացները Հայաստանում ավելին են, քան Ղարաբաղի միացումը Հայաստանին, և նպատակ ունեն, ինչպես Բալթյան երկրներում, ժողովրդավարացնել խորհրդային պետության քաղաքական կյանքը»**:

Այսպիսով, Եվրոպական խորհրդարանը հստակորեն մատնանշում է ներհայաստանյան գործընթացների ժողովրդավարական

---

<sup>118</sup> European Parliament Resolution on repression in Soviet Armenia, [http://karabakhfacts.com/wp-content/uploads/2013/12/c\\_04719890220en01210152.pdf](http://karabakhfacts.com/wp-content/uploads/2013/12/c_04719890220en01210152.pdf)

<sup>119</sup> European Parliament Resolution on the release of the members of the Karabakh Committee, 25 May 1989, <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/39d0daab-1473-459d-9e66-677284277ec6/language-en>

<sup>120</sup> Указ Президиума Верховного Совета СССР от 12 января 1989 года. [https://rusneb.ru/catalog/000202\\_000006\\_b1d693e6-20d8-4023-9334-aedece99f415\\_70326/](https://rusneb.ru/catalog/000202_000006_b1d693e6-20d8-4023-9334-aedece99f415_70326/)

բնույթը՝ այդպիսով լեգիտիմացնելով իր հստակ արտահայտված քաղաքական դիրքորոշումը:

Արդեն 1990 թվականի ընթացքում երկու անգամ՝ հունվար և մարտ ամիսներին, Եվրոպական խորհրդարանը հատուկ անդրադառնում է Ղարաբաղյան հակամարտությանը. ընդունում է **«Խորհրդային Հայաստանում իրավիճակի վերաբերյալ»** անվանումը կրող երկու բանաձև<sup>121</sup>:

Այս բանաձևերի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ դրանցում կրկին խոսվում է 1923 թվականի որոշման անարդարացիության մասին և, ըստ էության, առաջին անգամ ԵԽ-ն կոչ է ուղղում Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական խորհրդին՝ ներկայացուցչություն ուղարկել ԽՍՀՄ ղեկավարության մոտ՝ քաղաքական իրավիճակի գնահատման, Ադրբեյջանում ապրող հայերի ֆիզիկական անվտանգությունը երաշխավորելու, Արցախի մեկուսացումը ճեղքելու և առաջին անհրաժեշտության ապրանքների անցկացումն ու հումանիտար բնույթի այլ գործողություններ ապահովելու համար:

ԵԽ-ն, ի թիվս այլ գործոնների, հիշատակում է նաև Լեռնային Ղարաբաղի բնակչության 75%-ի հայ լինելու փաստը, նաև նշում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում ՄԱԿ-ի և Եվրոպական տարբեր մարմինների ներգրավվածությունը մեծացնելու անհրաժեշտությունը:

Վերը հիշատակված երկու բանաձևերից կարող ենք եզրակացնել, որ Եվրոպական միության գործադիր իշխանությունն ու ՄԱԿ-ը Խորհրդարանի կողմից քաղաքական ուղերձ են ստանում՝ մեծացնելու ներգրավվածությունը հակամարտության գոտում, ԵԽ դիրքորոշումներում հետզհետե ավելի խիստ է ընդգծվում ժո-

---

<sup>121</sup> European Parliament resolution on the situation in Armenia 18.01.1990, [http://www.nkr.am/sites/default/files/euoparl\\_resolution\\_on\\_situation\\_in\\_armenia\\_18-01-1990.pdf](http://www.nkr.am/sites/default/files/euoparl_resolution_on_situation_in_armenia_18-01-1990.pdf), European Parliament resolution on the situation in Armenia 15.03.1990, <https://karabakhfacts.com/european-parliament-resolution-on-the-situation-in-armenia-doc-b3-55690/>

ղովրդի կամքին հակադրվելու Ադրբեջանի քաղաքականությունը, մեծանում է ուշադրությունը ստեղծված հումանիտար ճգնաժամի հանդեպ և այլն:

1991 թվականին խորհրդային զորքերի և ադրբեջանական ՕՄՕՆ-ի կողմից Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի հայկական բնակավայրերում կատարված էթնիկ զտումներին (և ոչ միայն դրան) Եվրոպական խորհրդարանը կոշտ անդրադարձ կատարեց 1991 թվականի մայիսի 16-ին ընդունված **«Հայաստանում և Ադրբեջանում իրավիճակի վերաբերյալ»**<sup>122</sup> բանաձևով: Դրանից երկու ամիս առաջ՝ մարտի 14-ին, ընդունվել էր ԵԽ մեկ այլ բանաձև՝ **«Հայաստանի շրջափակման և այնտեղ մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ»**, որտեղ կրկին խոշոր հաշվով բարձրացվում են հումանիտար հարցեր, խոսվում է երկրաշարժի և դարաբաղյան շարժման արդյունքում 500.000 անօթևան հայերի առկայության մասին և այլն<sup>123</sup>:

Հատուկ դիտարկման է արժանի մայիսի 16-ի բանաձևը, որտեղ Եվրոպական խորհրդարանը ցավակցություն է հայտնում Ղարաբաղում հայերի նկատմամբ բռնությունների կապակցությամբ և դատապարտում խորհրդային և ադրբեջանական զինված ուժերի կողմից հայերի նկատմամբ հերթական բռնությունները: Ապա ԵԽ-ն խորհրդային իշխանություններին հորդորում է քայլեր ձեռնարկել, որոնք կապահովեն հայերի ֆիզիկական անվտանգությունը, տեղաշարժի ազատությունը, Ադրբեջանի կողմից շրջափակման վերացումը և մարդկանց վերադարձն իրենց տներ:

Ղարաբաղյան պատերազմի ժամանակ Եվրոպական խորհրդարանի դիրքորոշումը առավել կոշտանում է 1992 թվականի

---

<sup>122</sup> European Parliament Resolution on the situation in Armenia and Azerbaijan, [http://www.nkr.am/sites/default/files/1991\\_05\\_16\\_european\\_parliament\\_resolution\\_on\\_the\\_situation\\_in\\_armenia\\_and\\_azerbaijan.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1991_05_16_european_parliament_resolution_on_the_situation_in_armenia_and_azerbaijan.pdf)

<sup>123</sup> European Parliament Resolution on the blockade of Armenia and the human rights situation there, [http://www.nkr.am/sites/default/files/1991\\_03\\_14\\_euoparl\\_resolution\\_on\\_blockade\\_of\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1991_03_14_euoparl_resolution_on_blockade_of_armenia.pdf)

փետրվարին ընդունված **«Լեռնային Ղարաբաղին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ»**<sup>124</sup> բանաձևով, որն իր բնույթով կարելի է բեկումնային համարել:

Այսպիսով, ԵԽ-ն առաջին անգամ ադրբեջանական քաղաքականությունը որակում է որպես ագրեսիա՝ արձանագրելով, որ վերջին երեք տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի բնակչությունը ենթարկվել է շարունակական շրջափակման և ագրեսիայի, և որ 1991 թվականի դեկտեմբերին Ադրբեջանը սանձազերծել է աննախադեպ հարձակողական գործողություններ Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի նկատմամբ: ԵԽ-ն նաև արձանագրում է Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ երեխաների վրա ադրբեջանական ուժերի հարձակումը:

**Ուշագրավ է նաև, որ բանաձևի կետերից մեկում խորհրդարանն ընդունում է Լեռնային Ղարաբաղի իշխանությունների ժողովրդավարական կարգերով ընտրված լինելու փաստը՝** դրանով արտահայտելով իր քաղաքական կամքը ժողովրդավարական գործընթացների անշրջելիության նկատմամբ:

Եվրոպական խորհրդարանի կողմից 1993 թվականի հունվարի 21-ին ընդունված **«Հայաստանի վերաբերյալ»**<sup>125</sup> բանաձևը նույնպես կարևոր է այն առումով, որ **ԵԽ-ն իր լիարժեք աջակցությունն է հայտնում ԵԱՀԽ խաղաղ գործընթացին:** Դա մի հանգամանք է, որը ցայսօր կարևոր է դիտվում: Նույն բանաձևով ԵԽ-ն կրկին բարձրաձայնում է շուրջ 300.000 հայ փախստականների հարցը, ինչպես նաև դիմում է Եվրոպական խորհրդին՝ Հայաստանում ժողովրդավարացման գործընթացներին օժանդակելու առումով:

---

<sup>124</sup> European Parliament Resolution on aid to Nagorno Karabakh, [http://www.nkr.am/sites/default/files/1992\\_02\\_13\\_european\\_parliament\\_resolution\\_on\\_aid\\_to\\_nagorno\\_karabakh\\_b3-0155\\_92.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1992_02_13_european_parliament_resolution_on_aid_to_nagorno_karabakh_b3-0155_92.pdf)

<sup>125</sup> European Parliament Resolution on Armenia, [http://www.nkr.am/sites/default/files/1993\\_01\\_21\\_european\\_parliament\\_resolution\\_on\\_armenia.pdf](http://www.nkr.am/sites/default/files/1993_01_21_european_parliament_resolution_on_armenia.pdf)

Մինչև զինադադարի ստորագրումը, 1994 թվականի փետրվարի 10-ին, Եվրոպական խորհրդարանն ընդունեց ևս մեկ բանաձև՝ **«Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության վերաբերյալ»**<sup>126</sup>: Այս բանաձևում, ի շարս արդեն իսկ նախադեպային որակումների, Եվրոպական խորհրդարանն ընդգծեց հետևյալը. **«Անկախացումից ի վեր Հայաստանն իրական ջանքեր է գործադրել սահմանադրական պետություն կառուցելու ուղղությամբ՝ հիմնված ժողովրդավարական ինստիտուտների, հիմնարար ազատությունների և մարդու իրավունքների պաշտպանության վրա, և ձեռնարկել է տնտեսական բարեփոխումներ՝ բնակչության համար առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով, մինչդեռ հակամարտության ազդեցությամբ այդ ջանքերը սպառնալիքի տակ են»:**

Այսպիսով, հերթական անգամ ԵՄ խորհրդարանը մատնանշում է Հայաստանում կատարվող իրադարձությունների ժողովրդավարական բնույթը՝ անցկացնելով քաղաքակրթական զուգահեռներ:

Պայմանավորված ԵԱՀԽ շրջանակներում 1992 թ. մեկնարկած բանակցային գործընթացի տրամաբանությամբ՝ Մինսկի խմբի համանախագահության բացառիկ մանդատով ու համանախագահության ձևաչափով, ինչպես նաև հրադադարի հաստատմամբ, Եվրոպական խորհրդարանի կողմից դարաբաղյան հակամարտության վերաբերյալ բանաձևերի ընդունման դինամիկան կտրուկ փոփոխվեց:

Դրանից հետո Եվրոպական խորհրդարանը դարաբաղյան հակամարտությանն ուղղակի և խիստ ուշագրավ անդրադարձ կատարեց 1999 թ. մարտի 11-ի **«Կովկասում խաղաղ գործընթացներին աջակցելու վերաբերյալ»**<sup>127</sup> պատմական բանաձևով,

---

<sup>126</sup> European Parliament Resolution on the conflict between Armenia and Azerbaijan, <https://karabakhfacts.com/european-parliament-resolution-on-the-conflict-between-armenia-and-azerbaijan-b3-0181-0186-0188-0197-and-020494/>

<sup>127</sup> European Parliament Resolution on support for the peace process in the Caucasus

որով ԵԽ-ն հաշվի է առնում Լեռնային Ղարաբաղի անկախության հռչակման հանգամանքը և արձանագրում է. **«Լեռնային Ղարաբաղը հռչակել է իր անկախությունը՝ հետևելով միութենական հանրապետությունների համանման հայտարարությունների ընդունմանը»**։ Նույն բանաձևի մեկ այլ կետով Եվրոպայի խորհրդարանը նկատում է. **«Ժողովրդավարության ամրապնդումը և մարդու իրավունքները հարգելը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման նախադրյալներ են»**։

Այս բանաձևի ընդունումը խիստ կարևոր է երկու հարթության մեջ։ Նախ՝ ԵԽ-ն, ըստ էության, Լեռնային Ղարաբաղի անկախությունը դիտում է ԽՍՀՄ ներքին օրենսդրության և միջազգային իրավունքի շրջանակներում, երկրորդ՝ կոնֆլիկտի հանգուցալուծման հարցում կարևորում է ժողովրդավարական զարգացումները։ **Վերջինս կարող է քննարկման նյութ լինել նաև Հայաստան-ԵՄ երկկողմ հարաբերություններում այն իմաստով, որ ԵՄ-ն անկախ դերակատարում ունենա Լեռնային Ղարաբաղի տարածքում ժողովրդավարական ինստիտուտների և կարգերի զարգացման գործում, մի բան, ինչին Արցախը տարիներ շարունակ պաշտոնապես պատրաստ էր, իսկ ԵՄ-ն, պայմանավորված ադրբեջանական ճնշմամբ, պատրաստ չէ**։

Այս բանաձևից հետո Եվրոպական խորհրդարանը Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն սկսեց անդրադառնալ որոշակի գործողությունների, իրեն վերապահված փաստաթղթերի քննարկման, փոփոխման կամ ընդունման համատեքստում։

1990-ական թվականների կեսերից, ՀՀ-ԵՄ զարգացող հարաբերություններով պայմանավորված, Հայաստանի ու Ղարաբաղի խնդրի ծանրության կենտրոնը ներեվրոպական ինստիտուտներից տեղափոխվեց ԵՄ գործադիր իշխանության՝ Եվրոպական հանձնաժողովի կողմ, իսկ 2020 թ. պատերազմից հետո՝ Եվրոպական խորհրդի։ Խորհրդարանը, ինչպես ասվեց, շարունակեց դարա-

---

<https://publications.europa.eu/en/publication-detail/-/publication/1c8edb49-c670-426d-bc4f-267f0d5509a4>



բաղյան հակամարտությանն ուղղակի կամ անուղղակի անդրադառնալ ամենատարբեր փաստաթղթերի քննարկման ժամանակ:

2017 թվականի վերջին, երբ արդեն ստորագրված էր ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության մասին համաձայնագիրը, Եվրոպական խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի (AFET) կողմից հրապարակվեց **«Եվրոպական միության հարաբերությունները Հայաստանի և Ադրբեյջանի հետ»**<sup>128</sup> խորհրդատվական ձեռնարկը (ԵՄ կառույցների համար), որում երեք կետից բաղկացած առանձին հատված նվիրված էր Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Ըստ այդմ՝ ԵՄ ներգրավվածությունը կարևորվում է Հայաստանի և Ադրբեյջանի քաղաքացիական հասարակությունների միջև երկխոսություն ստեղծելու առումով՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծման եվրոպական գործընկերության (EPNK) միջոցով: Երկրորդ կետով խոսվում է ԵՄ կողմից տարածաշրջանում ժողովրդավարությանը և ԵՄ ինտեգրացիային, այդ թվում՝ վիզայի ռեժիմի ազատականացմանը նպաստելու անհրաժեշտության մասին: Վերջին կետով նաև նշվում է, որ ԵՄ-ն պետք է շարունակի օժանդակել Մադրիդյան սկզբունքներին և բանակցային ջանքերին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում:

Այլ գործողությունների կամ ծրագրերի շրջանակներում Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված ղարաբաղյան հակամարտությանն առնչվող բանաձևերին կանդիդատությանը սույն ենթագլխի այլ հատվածներում:

Այսպիսով, Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող բանաձևերի մեծ մասի վերլուծությունից եզրակացնում ենք.

- 1990-ական թվականներին ԵԽ-ն Լեռնային Ղարաբաղի ժո-

---

<sup>128</sup> EU relations with Armenia and Azerbaijan, Directorate-General for External Policies, Policy Department, Brussels 2017, <http://www.europarl.europa.eu/cmsdata/133502/EU%20relations%20with%20Armenia%20and%20Azerbaijan.pdf>

ղովրդի ինքնորոշման իրավունքը դիտել է միջազգային իրավունքի և ԽՍՀՄ ներքին օրենսդրության շրջանակներում:

- ԵԽ-ն ընդունել է Արցախում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտման, զանգվածային տեղահանությունների ու բռնությունների, հայերի ֆիզիկական անվտանգության խաթարման, քաղաքացիական անձանց նկատմամբ հանցագործություններ կատարելու փաստը:
- ԵԽ-ն ընդունել է Ղարաբաղի ընտրված իշխանություններին՝ նրանց համարելով ժողովրդավարական գործընթացների արդյունք:
- ԵԽ-ն նկատել է Հայաստանում հետանկախական գործընթացների ժողովրդավարական բնույթը՝ ըստ էության մատնանշելով Հայաստան-Եվրոպա հարաբերությունների հնարավոր զարգացումը քաղաքակրթական համատեղելիության ծիրում:
- Հակամարտության էսկալացիոն առաջին փուլի ավարտից և բանակցային գործընթացի մեկնարկից հետո Խորհրդարանը ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող բանաձևեր ընդունել է որոշակի գործողությունների, քաղաքականության ճշգրտումների շրջանակներում՝ համերաշխություն հայտնելով մինսկյան գործընթացին և հղում անելով միջազգային իրավունքի՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքին, ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության իրավունքին և տարածքային ամբողջականության սկզբունքին:

Վերոգրյալ եզրակացությունները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ԽՍՀՄ հեշտ փլուզման հետևանքով իրադարձությունների հետագա զարգացման վերաբերյալ Արևմուտքում ձևավորվեցին ծայրահեղ լավատեսական սպասումներ: Այս առումով նշենք Ս. Հանթինգտոնի այն տեսակետը, ըստ որի՝ սկսվող վերափոխման գործընթացը պետք էր դիտարկել ժողովրդավարացման

երրորդ ալիքի հայեցակարգի շրջանակներում<sup>129</sup> բացառելով որևէ շեղում: Արևմտյան քաղաքագիտական միտքը նաև ենթադրում էր, որ այդ գործընթացի արդյունքում նախկին սոցճամբարի բոլոր երկրներում կհաստատվեն արևմտյան արժեքների վրա հիմնված քաղաքական վարչակարգեր, հետևաբար անհմաստ է այդ գործընթացի ուղղորդման համար ներդնել մեծ ջանքեր ու ծախսեր:

2020 թ. պատերազմից և 2023 թ. Արցախի էթնիկ գտումներից հետո ղարաբաղյան հիմնախնդրում Եվրոպական միության քաղաքական վարքը՝ բյուրեղացված գործադիր իշխանության կողմից, ամբողջովին փոփոխության ենթարկվեց: 2020 թվականից հետո հիշատակման են արժանի Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված և ղարաբաղյան հակամարտությանն ուղղակիորեն վերաբերող մի քանի փաստաթուղթ: Մասնավորապես, ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության կատարողականի 2021 թ. ամենամյա զեկույցում Խորհրդարանը նկատում է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը մնում է ղարաբաղյան հակամարտության լուծման գործում միջազգային մանդատ ունեցող միակ կառույցը: Այս փաստաթղթով, ի հակադրումն պաշտոնական Բաքվի դիրքորոշման, ԵՄ Խորհրդարանը ղարաբաղյան հակամարտությունը համարում է չլուծված, իսկ իբրև լուծման ճանապարհ առաջարկում է հիմնարար երեք սկզբունքների կիրառումը<sup>130</sup>: Նույն փաստաթղթի կատարողականի վերաբերյալ 2022 թ. զեկույցը<sup>131</sup>, որն ընդունվել է 2023 թ. հունվարին, նույնպես վերա-

---

<sup>129</sup> **Huntington S.**, The Third Wave: Democratization in the Late Twentieth Century, Norman 1991.

<sup>130</sup> On the implementation of the common foreign and security policy – annual report 2021, [https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2021-0354\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2021-0354_EN.html)

<sup>131</sup> REPORT on the implementation of the common foreign and security policy – annual report 2022, [https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2022-0292\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2022-0292_EN.html)

հաստատում է ղարաբաղյան հակամարտության լուծման վերաբերյալ Խորհրդարանի դիրքորոշումը՝ հիմնված ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից առաջարկված սկզբունքների վրա: Միաժամանակ, պայմանավորված ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայով, այդ զեկույցը պաշտոնական Բաքվի նկատմամբ պարունակում է ավելի կոշտ ու հասցեական դիրքորոշում:

Եվրոպական խորհրդարանը տարբեր ձևաչափերով անդրադարձել է նաև հայ ռազմագերիների խնդրին: 2021 թ. մարտի 19-ին ընդունված բանաձևով Խորհրդարանն Ադրբեջանից պահանջում է հայ ռազմագերիների անհապաղ և անվերապահ ազատ արձակում, բոլոր հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց իրավունքների պաշտպանություն<sup>132</sup>:

2021 թ. մայիսի 19-ին Եվրոպական խորհրդարանը ԵՄ հանձնաժողովի՝ Թուրքիային վերաբերող զեկույցի վերաբերյալ բանաձև է ընդունում, որտեղ մտահոգություն է հայտնում Թուրքիայի կողմից Սիրիայում և Լիբիայում տեղակայված ջիհադիստ վարձկաններին Լեռնային Ղարաբաղ տեղափոխելու առթիվ՝ քննադատելով այդ քայլը<sup>133</sup>:

Եվրոպական խորհրդարանը բավական խիստ անդրադարձ է կատարել Արցախում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման և պատկանելիության նենգափոխման խնդրին: 2022 թ. մարտի 10-ին Խորհրդարանն ընդունել է «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացում» անվանումով բանաձև<sup>134</sup>:

---

<sup>132</sup> On prisoners of war in the aftermath of the most recent conflict between Armenia and Azerbaijan, [https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2021-0277\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/RC-9-2021-0277_EN.html)

<sup>133</sup> European Parliament resolution of 19 May 2021 on the 2019-2020 Commission Reports on Turkey (2019/2176(INI)), [https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0243\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0243_EN.pdf)

<sup>134</sup> Destruction of cultural heritage in Nagorno-Karabakh, [https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0080\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0080_EN.html)

Մանրամասն անդրադառնալով խնդրի էությանը՝ Խորհրդարանը լիազումար նիստի ընթացքում քննադատել է Արցախում հայկական պատմամշակութային ժառանգության դեմ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը: Ադրբեջանի կողմից Արցախում մշակութային ժառանգության ոչնչացումը դիտարկվում է որպես այդ երկրում պետական մակարդակով տարվող, համակարգված հայատյաց քաղաքականության բաղկացուցիչ մաս: Եվրախորհրդարանի ընդունած բանաձևում առաջին անգամ օգտագործվում է «արմենոֆոբիա» եզրույթը: Շեշտվում է, որ մշակութային ժառանգության ոչնչացումից բացի, Ադրբեջանում հայատյացության պետական քաղաքականության դրսևորումներից են նաև պատմության սրբազրումը, հայերի նկատմամբ բռնության փառաբանումը, Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարածքային պահանջները, ինչը վտանգում է խաղաղությունը և խաթարում անվտանգությունը Հարավային Կովկասում:

Եվրախորհրդարանը քննադատում է Ադրբեջանի ծավալապաշտական, ռազմատենչ քաղաքականությունը և կոչ է անում Ադրբեջանին հրաժարվելու առավելապաշտական նկրտումներից: Բանաձևում նաև շեշտվում է, որ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը դեռևս կարգավորված չէ, և որ այն պետք է հստակեցվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում:

Եվրախորհրդարանն Ադրբեջանից պահանջում է նաև անհապաղ թույլ տալ ՅՈՒՆԵՍԿՕ-ին իրականացնելու իր առաքելությունը տեղում՝ խորհրդակցելով նաև հայ մասնագետների հետ, և առաջարկում է փաստերն արձանագրելու համար օգտագործել Եվրամիության արբանյակային հնարավորությունները: Նշվում է, որ Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության հետքերի վերացումը տեղի է ունենում ոչ միայն կոթողները ոչնչացնելով և վնասելով, այլև պատմությունը կեղծելով և դրանք որպես Կովկասյան Ալբանիայի ժառանգություն ներկայացնելով: Այս համատեքստում նշվում է Ադրբեջանի մշակույթի նախարարության

կողմից սույն տարվա փետրվարին աշխատանքային խմբի ստեղծման մասին, որի նպատակը պատմության սրբագրումն է<sup>135</sup>:

Եվրոպական խորհրդարանը ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձել է նաև 2023 թ. հունվարի 18-ին՝ ընդունելով «Լեռնային Ղարաբաղում շրջափակման հումանիտար հետևանքները»<sup>136</sup> բանաձևը, որով դատապարտել է Լաչինի միջանցքը փակելու և Լեռնային Ղարաբաղը շրջափակման ենթարկելու ադրբեջանական քաղաքականությունը:

Եվրոպական խորհրդարանի լիագումար նիստում 2023 թ. մարտի 15-ին ընդունվել է ԵՄ-Հայաստան և ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ 2021-2022 թթ. զեկույցները<sup>137</sup>, որոնք անդրադառնում են Հայաստանի և Ադրբեջանի հետ ԵՄ հարաբերությունների առանցքային կետերին, Արցախի հակամարտությանը և Եվրամիության դերին՝ տարածաշրջանում կայունություն ու խաղաղություն հաստատելու գործում:

Այս երկու զեկույցները վերահաստատում են, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության համապարփակ պայմանագիրը պետք է երաշխավորի Հայաստանի ինքնիշխան տարածքի ամբողջականությունը, Արցախում բնակվող հայ բնակչության իրավունքներն ու

---

<sup>135</sup> «Եվրոպական խորհրդարանը խստորեն դատապարտում է Ադրբեջանում պետական մակարդակով տարվող հայատյաց քաղաքականությունը», Գասպար Կարապետյան, ՀՀԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակ, <https://eafjd.eu/hy/%D5%A5%D5%BE%D6%80%D5%B8%D5%BA%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D6%80%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%AD%D5%BD%D5%BF%D5%B8%D6%80%D5%A5%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1/>

<sup>136</sup> European Parliament Resolution on Humanitarian consequences of the blockade in Nagorno-Karabakh, [https://www.europarl.europa.eu/doceo/document/PV-9-2023-01-18-ITM-D-002\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/PV-9-2023-01-18-ITM-D-002_EN.html)

<sup>137</sup> REPORT on EU-Armenia relations, [https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2023-0036\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2023-0036_EN.html), REPORT on EU-Azerbaijan relations, [https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2023-0037\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9-2023-0037_EN.html)

անվտանգությունը: Եվրախորհրդարանն ընդգծում է, որ ղարաբաղյան հակամարտությունը պահանջում է միջազգային իրավունքին համապատասխան համապարփակ քաղաքական կարգավորում՝ հիմնված ՄԱԿ-ի կանոնադրությամբ և 1975 թ. ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտով ամրագրված սկզբունքների (մասնավորապես՝ ուժի կամ դրա սպառնալիքի չկիրառում, տարածքային ամբողջականություն, ինքնորոշման իրավունք), ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի 2009 թ. հրապարակված բանակցային հիմնարար սկզբունքների վրա:

Երկու զեկույցներում էլ Եվրախորհրդարանը դատապարտում է Ադրբեջանի ռազմական ներխուժումը Հայաստանի ինքնիշխան տարածք: ԵՄ-Ադրբեջան զեկույցում նշվում է բազմաթիվ հայ ռազմագերիների նկատմամբ ֆիզիկական բռնության, ադրբեջանական ուժերի կողմից հայ խաղաղ բնակիչներին նվաստացնելու և խոշտանգումների ենթարկելու մասին:

Եվրախորհրդարանի՝ Հայաստանի մասին զեկույցում նշվում է, որ ղարաբաղյան հակամարտության բուն պատճառը Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի կարգավիճակի և բնակչության անվտանգության չլուծված խնդիրն է:

Եվրախորհրդարանն ընդգծում է Ադրբեջանի պարտավորությունը Արդարադատության միջազգային դատարանի 2023 թվականի փետրվարի 22-ի որոշումը կատարելու վերաբերյալ: Այդ որոշմամբ Ադրբեջանից պահանջվում է ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ Լաչինի միջանցքով երկու ուղղություններով մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժն ապահովելու համար: Այս համատեքստում Եվրախորհրդարանը կոչ է անում ԵՄ խորհրդին պատժամիջոցներ կիրառելու Ադրբեջանի դեմ, եթե Դատարանի որոշումն անհապաղ չկատարվի:

Եվրոպական խորհրդարանը 2023 թ. հոկտեմբերի 5-ին ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունեց «Ադրբեջանի հարձակումից հետո Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակի և Հայաստանի դեմ շարունակվող սպառնալիքների մասին» բանաձևը: Այդպիսով

Խորհրդարանը դատապարտում է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտումը, դժգոհություն հայտնում Եվրոպական խորհրդին և հանձնաժողովին՝ վերահաս աղետի վերաբերյալ իր կողմից պարբերաբար հնչեցված ահազանգերը անտեսելու վերաբերյալ, ինչպես նաև կոչ է անում կասեցնելու Եվրոպական միության և Ադրբեջանի միջև էներգետիկայի ոլորտում ռազմավարական գործընկերության մասին փոխըմբռնման հուշագրի կիրարկումը<sup>138</sup>:

### **Եվրոպական հանձնաժողովի քաղաքական վարքը ղարաբաղյան հիմնախնդրում**

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության հարաբերությունները ինստիտուցիոնալ հենքի վրա դնելու նախաքայլերն սկսվեցին 1996 թվականից, երբ ՀՀ և ԵՄ միջև ստորագրվեց «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրը<sup>139</sup>: Այն ուժի մեջ մտավ 1999-ից: Այդ ժամանակաշրջանից սկսած՝ ՀՀ-ԵՄ հարաբերություններում Հայաստանի հետ առնչվող հիմնական կառույցը դարձավ **Եվրոպական հանձնաժողովը**, իբրև ԵՄ գործադիր իշխանության մարմին: Հիմնական քաղաքական դիրքորոշումները ձևավորվում, իսկ բովանդակային բանակցություններն իրականացվում էին հենց ԵՄ հանձնաժողովի կողմից՝ մասամբ ի դեմս արտաքին գործողությունների եվրոպական ծառայության (սկսած 2009 թվականից):

Մեծ հաշվով, ՀՀ-ԵՄ հարաբերությունները տեղավորվում են ԵՄ հարևանության քաղաքականության (Neighborhood Policy) և

---

<sup>138</sup> Situation in Nagorno-Karabakh after Azerbaijan's attack and the continuing threats against Armenia, [https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2023-0356\\_EN.html](https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2023-0356_EN.html)

<sup>139</sup> Համաձայնագիր գործընկերության և համագործակցության մասին մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21098>



Արևելյան գործընկերության (այսուհետև՝ նաև ԱԳ) շրջանակներում (Eastern Partnership): Սույն աշխատանքի նպատակները հաշվի առնելով՝ դարաբաղյան հակամարտությանը ԵՄ անդրադարձները ստորև կվերլուծենք հիշյալ երկու հարթություններում, ինչպես նաև 2017 թվականի նոյեմբերին ստորագրված և արդեն ուժի մեջ մտած ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Ինչպես արդեն ասվեց, տեղի է ունեցել Արևելյան գործընկերության վեց գագաթնաժողով: Դրանց համատեղ հռչակագրերի վերլուծությունները չափազանց կարևոր են հասկանալու դարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԵՄ դիրքորոշումներն ու դրանց որոշակի փոփոխությունները:

Այսպես, Արևելյան գործընկերության՝ Պրահայի 2009 թվականի մայիսի 7-ի<sup>140</sup> և Վարշավայի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի<sup>141</sup> գագաթնաժողովները դարաբաղյան հակամարտությանն անվանական անդրադարձ չեն կատարում: Պրահայի գագաթնաժողովն ընդհանրական առումով ընդամենը նկատում է, որ «**հակամարտությունները խոչընդոտում են համագործակցությունը, ուստի Պրահայի գագաթնաժողովի մասնակիցները շեշտում են հակամարտությունների կարգավորման անհրաժեշտությունը՝ միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների, ինչպես նաև այդ շրջանակներում ընդունված միջազգային փաստաթղթերի ու քննարկումների հիման վրա**»: Վարշավայի գագաթնաժողովը նույնպես մեծ հաշվով կրկնում է Պրահայի գագաթնաժողովի տեքստը՝ նկատելով, որ «**հակամարտությունների կարգավորումը, լավ և վստահելի հարևանության ձևավորումը կարևոր են տարածաշրջանում տնտեսական և սոցիալական զարգացման**

---

<sup>140</sup> Joint Declaration of the Prague Eastern Partnership Summit, Prague, 7 May 2009, [https://www.consilium.europa.eu/media/31797/2009\\_eap\\_declaration.pdf](https://www.consilium.europa.eu/media/31797/2009_eap_declaration.pdf)

<sup>141</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit, Warsaw, 29–30 September 2011, [https://www.consilium.europa.eu/media/31798/2011\\_eap\\_warsaw\\_summit\\_declaration\\_en.pdf](https://www.consilium.europa.eu/media/31798/2011_eap_warsaw_summit_declaration_en.pdf)

**և գործակցության համար»:** Վարչավայի գազաթնաժողովը նաև կարևորում է Եվրոպական միության և ԱԳ երկրների միջև քաղաքական գործակցության խորացումն ու երկխոսությունը՝ ներառյալ հակամարտությունների հանգուցալուծումն ու երկուստեք հետաքրքրություն ներկայացնող անվտանգային հարցերը:

Այսպիսով, պարզ է, որ Եվրոպական միությունը ԱԳ տարածաշրջանի հակամարտություններին տարբերակված մոտեցում չէր ցուցաբերում, մինչդեռ այդ հակամարտությունները ծագումնաբանական առումով և ներկա իրավիճակով միմյանցից բավականաչափ տարբեր են: Բացի այդ, ԱԳ անդամ երկրները, յուրաքանչյուրն իր շահից ելնելով, պետք է առավել բարենպաստ ձևակերպումներ պահանջեին: Խոսքն առաջին հերթին Վրաստանի և Ուկրաինայի մասին է: Հետևաբար, Եվրոպական միությունը չէր կարող հակամարտություններին անդրադառնալ համահարթեցման սկզբունքով՝ առանց տարբերակված մոտեցման, պարզ ասած՝ ԵՄ-ն չէր կարող ԱԳ ամբողջ տարածաշրջանի հակամարտությունների լուծման բանաձև տեսնել, օրինակ, տարածքային ամբողջականության սկզբունքը:

Բացի այդ, Վարչավայի գազաթնաժողովից հետո սկիզբ առած քաղաքական զարգացումները հանգեցրին Վիլնյուսի 2013 թվականի նոյեմբերի 28–29-ի գազաթնաժողովի անարդյունավետությանը, երբ ԱԳ տարածաշրջանի երկրներում լարվում էին աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված քաղաքական գործընթացները, իսկ Հայաստանն առհասարակ հրաժարվեց ասոցացման համաձայնագրի նախաստորագրումից: Խնդիրը կրկին ԵՄ կողմից տարբերակված մոտեցման բացակայությունն էր ոչ միայն հակամարտությունների համատեքստում, այլև առհասարակ երկրների հետ համագործակցության առումով:

Այլ խոսքով՝ ԱԳ անդամ որոշ երկրներ և հատկապես Հայաստանը պահանջում էին, որ Հայաստանի Եվրոպական ինտեգրումը չհակադրվի Հայաստան-Ռուսաստան հարաբերություններին, և մի կողմի հետ հարաբերությունները չլինեն ի հաշիվ մյուսի: Հատկանշական է, որ Վիլնյուսի գազաթնաժողովում Հայաստանը հրա-

Ժարվեց ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագիրը ստորագրելուց, ինչպես նաև Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիրը՝ առաջարկելով ստորագրել ասոցացման համաձայնագրի քաղաքական մասը միայն, ինչը ԵՄ-ն մերժեց: Այնուամենայնիվ, Վիլնյուսի գագաթնաժողովը որոշիչ էր Արևելյան գործընկերության փոփոխության փոփոխության մեկնարկի առումով, քանի որ առհասարակ վտանգված էր արևելյան ուղղությամբ ԵՄ հարևանության քաղաքականության ապագան: Հետևաբար, վիլնյուսյան գագաթնաժողովը որոշակիորեն ազդվեց առկա քաղաքական գործընթացներից և իր հոչակագրում, թեև ոչ հիմնավոր, բայց ընդգծեց տարբերակված քաղաքականության կարևորությունը, ինչն իր հերթին **«հնարավորություն կընձեռի առանձին գործընկերներին՝ առավել լավ գնահատելու իրենց ձգտումներն ու կարիքները»**<sup>142</sup>:

Վիլնյուսի գագաթնաժողովն առաջինն էր, որ անվանական անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը՝ ընդամենը կարևորելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափում Հայաստանի և Ադրբեյջանի ղեկավարների հանդիպումը՝ պահպանելով հակամարտություններին անդրադառնալու ոչ տարբերակված մոտեցումը:

Եվրոպական հարևանության քաղաքականությունը և Արևելյան գործընկերությունը էական վերաձևումների ենթարկվեցին 2014 թ. համաեվրոպական ընտրություններից հետո: Նոր ձևավորված Եվրոպական հանձնաժողովն ընդունեց ճգնաժամի հասած Արևելյան գործընկերության քաղաքականության սխալները և սկսեց ԱլԳ նոր ճարտարապետությունը: 2015 թվականի մարտի 4-ին, Եվրոպական հարևանության քաղաքականության վերանայումները ներկայացնելիս, անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով ԵՄ բարձր հանձնակատար Ֆ. Մոգերինին ասաց. **«Մեզ անհրաժեշտ է**

---

<sup>142</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit, Vilnius, 28–29 november 2013, [https://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_Data/docs/pressdata/EN/foraff/139765.pdf](https://www.consilium.europa.eu/uedocs/cms_Data/docs/pressdata/EN/foraff/139765.pdf)

վերանայել մեր քաղաքականությունը, մեր աշխատառճը և գործընկերությունը տարածաշրջանի երկրների հետ, քանի որ պետք է դատապարտող մոտեցումը փոխարինել քաղաքական երկխոսությամբ, ավելի գործընկերային բնույթ տալ դրան՝ հավասարը հավասարի հետ սկզբունքով»<sup>143</sup>: Նույն հանդիպման ընթացքում Եվրոպական հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերի հանձնակատար Յոհաննես Հանը նշեց. «**Պետք է ավելին անենք ճանաչելու համար մեր գործընկերների խիստ տարբերակվածությունը: Ոմանք ուզում են ավելի սերտ ինտեգրվել մեզ, ուստի մենք պետք է մտածենք, թե հետագա ինչ քայլեր են հնարավոր: Ոմանք ուզում են տարաբնույթ հարաբերություններ ունենալ մեզ հետ. այս դեպքում էլ պետք է որոշենք, թե ինչպես կարող ենք օպտիմալ հարաբերություններ հաստատել, հնարավոր է՝ նոր ձևաչափերով**»<sup>144</sup>: Հանն ընդգծեց նաև, որ ասոցացման համաձայնագիրը չստորագրած երկրների հետ հարաբերությունների նկատմամբ հետևողական լինելու և նրանց համար համագործակցության նոր ոլորտներ ապահովելու անհրաժեշտություն կա:

Եվրոպական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնյաների այս հայտարարություններին երկու ամիս անց հաջորդեց Արևելյան գործընկերության Ռիգայի գագաթնաժողովը՝ 2015 թ. մայիսի 21–22-ին:

Ռիգայի գագաթնաժողովում արդեն ակնհայտ դարձավ գործընկերների հետ ԵՄ հարաբերությունների տարբերակված մոտեցումը: Գագաթնաժողովի հայտարարության երկրորդ կետում ասվում է. «**Եվրոպական հարևանության և Արևելյան գործընկերության շրջանակներում գագաթնաժողովի մասնակիցները վերահաստատում են գործընկերներից յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքը՝ ազատորեն ընտրելու հավակնությունների մակարդակը և նպատակներ**

---

<sup>143</sup> Joint press conference by High Representative/ Vice-President Federica MOGHERINI and Commissioner Johannes HAHN on European Neighborhood Policy Review, Brussels, 04 March 2015, [https://europa.eu/rapid/press-release\\_SPEECH-15-4553\\_en.htm](https://europa.eu/rapid/press-release_SPEECH-15-4553_en.htm)

<sup>144</sup> Նույն տեղում:

րը, որոնց նա ձգտում է ԵՄ-ի հետ հարաբերություններում: ԵՄ-ն և նրա ինքնիշխան գործընկերները պետք է որոշեն, թե ինչպես են ցանկանում շարունակել իրենց հարաբերությունները»<sup>145</sup>:

Նոր՝ տարբերակված քաղաքականությունն արտացոլվեց նաև հակամարտություններին վերաբերող ձևակերպումներում: Ռիգայի գագաթնաժողովից հետո Եվրոպական միությունն ըստ էության ընդունեց Արևելյան գործընկերության տարածքում առկա հակամարտությունների ծագումնաբանական տարբերությունը՝ որպես ԵՄ դիրքորոշման տարբերակման գործոն: Այդպիսով Հայաստանին հաջողվեց դարաբաղյան հակամարտությունը դուրս բերել այն հակամարտությունների շրջանակից, որոնք Եվրոպական միությունը դիտում է որպես ռուսական գործունեության արդյունք:

Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններում դարաբաղյան հիմնախնդրի ազդեցությունը հասկանալու առումով Ռիգայի գագաթնաժողովի հայտարարությունը չափազանց կարևոր է: Ռիգայի գագաթնաժողովը, անդրադառնալով **Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը**, ընդգծեց **Մինսկի խմբի համանախագահների՝ ներառյալ համանախագահ երկրների նախագահների լիարժեք աջակցությունը միջնորդական ջանքերին և նրանց հայտարարություններին՝ 2009 թվականից ի վեր**<sup>146</sup>:

Հայկական կողմի համար առանձնակի կարևոր էր 2009 թվականից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների հայտարարությունների մասին վերջին ձևակերպումը. համանախագահ երկրների ղեկավարների՝ 2009 թվականի հուլիսի 10-ի Լ'Աքվիլայի հայտարարության<sup>147</sup> մեջ, որով նրանք փաս-

---

<sup>145</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit, Riga, 21–22, May 2015, <https://www.consilium.europa.eu/media/21526/riga-declaration-220515-final.pdf>

<sup>146</sup> Նույն տեղում:

<sup>147</sup> Joint Statement on the Nagorno-Karabakh Conflict by U.S. President Obama, Russian President Medvedev, and French President Sarkozy at the L'Aquila Summit of the Eight, July 10, 2009, <https://obamawhitehouse.archives.gov/realitycheck/the-press-office/joint-statement-nagorno-karabakh-conflict>

տորեն գաղտնագերծեցին այսպես կոչված «մադրիդյան սկզբունքները», խոսվում էր նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին: Համանախագահներն արձանագրեցին, որ հիմնական սկզբունքներն արտացոլում են տեսանելի փոխզիջում՝ հիմնված Հելսինկիի եզրափակիչ ակտի սկզբունքների վրա՝ ուժի չկիրառում, տարածքային ամբողջականություն, ժողովուրդների իրավահավասարություն և ինքնորոշման իրավունք:

Ակնհայտ է, որ Ռիգայի հռչակագրի տեքստը ամբողջովին համընկնում էր հայկական կողմի քաղաքական դիրքորոշմանը, ինչը չէր կարելի ասել Ադրբեյջանի մասին, որի արտաքին գործերի նախարարը հռչակագրի տեքստը ստորագրեց սկանդալային իրավիճակում<sup>148</sup>:

Ուստի կարող ենք փաստել, որ Արևելյան գործընկերության նոր ճարտարապետության համար կենսական նշանակություն ունեցող Ռիգայի գազաթնաժողովը լիովին սատարելու պատրաստակամություն հայտնեց մինսկյան բանակցային գործընթացին և համանախա-

---

<sup>148</sup> Ընդհանրապես, ճիշտ գնահատելու համար Լեոնային Ղարաբաղի հարցում հայկական կողմի համար ձեռնադրվող դիրքորոշումները, պետք է մեկնակետ ունենալ Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշումը (մինչև 2020թ.) ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում. այն է՝

- Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք պետք է հանդիսանա Լեոնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանաչումը,

- Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունը Հայաստանի հետ պետք է ունենա հայկական կողմի իրավագործության տակ գտնվող անխափան ցամաքային կապ,

- Լեոնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգությունը պետք է միջազգայնորեն երաշխավորված լինի:

Իրավիճակն առավել լավ հասկանալու համար անհրաժեշտ է նաև նկատել, որ Ադրբեյջանը ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը պատկերացնում է բացառապես տարածքային ամբողջականության սկզբունքի սեփական ընկալման համատեքստում: Տե՛ս ՀՀ արտաքին քաղաքականություն, <https://www.mfa.am/hy/foreign-policy/>

գահ երկրների ղեկավարների հայտարարություններին, որոնք ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության իրավունքն ամրագրում են որպես հակամարտության կարգավորման սկզբունք:

Ինչպես վերը նշվեց, Ռիգայի գագաթնաժողովով նաև ամբողջացավ ԵՄ-ի հետ ԱլԳ երկրների համալիր տարբերակված քաղաքականության կոնցեպտը: ԱլԳ երկրները Եվրոպական միության հետ պետք է հարաբերվեին անհատապես՝ հաշվի առնելով սեփական շահերն ու սպասելիքները: Օրինակ՝ եթե ԵՄ-ն Հայաստանի հետ աշխատում է ժողովրդավարական գործիքակազմերի ներդրման, օրենսդրաիրավական մոտարկման, քաղաքացիական հասարակության կայացման ուղղությամբ, ապա Ադրբեջանի հետ աշխատում է էներգետիկ անվտանգության, էներգակիրների տեղափոխության և այլ շերտերում:

Արևելյան գործընկերության 6-րդ գագաթնաժողովը, որ գումարվեց Բրյուսելում 2021 թ. դեկտեմբերի 15-ին, իր աշխատանքն սկսեց միջազգային և տարածաշրջանային բոլորովին նոր իրավիճակում՝ պայմանավորված Covid 19-ի համավարակով և Արցախի նկատմամբ ադրբեջանական ագրեսիայով: Գագաթնաժողովի հայտարարության տեքստը նախորդների նման հակամարտություններին տարբերակված անդրադարձ չի կատարում, այլ ընդհանրական ձևակերպումներով անդրադառնում է Արևելյան գործընկերության տարածքի հակամարտություններին՝ նշելով, որ դրանք պետք է կարգավորվեն միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա<sup>149</sup>:

Վերափոխված Եվրոպական հարևանության քաղաքականությունն ու Արևելյան գործընկերությունը նախ արտացոլվեցին Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններում: ՀՀ-ԵՄ հարաբերությունների համար հիմնադրությային նշանակության նոր՝ **«Համապարփակ և ընդլայնված համագործակցութե-**

<sup>149</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit (Brussels, 15 December 2021), [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/news/eastern-partnership-summit-joint-declaration-2021-12-15\\_en](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/news/eastern-partnership-summit-joint-declaration-2021-12-15_en)

**յան համաձայնագիրը»** փաստաթղթի շուրջ բանակցությունները շարունակվեցին երկու տարի՝ 2015–2017 թթ.: Համաձայնագիրը նախաստորագրվեց 2017 թվականի մարտի 27-ին: Այն, ըստ էության, կրկնում էր ՀՀ-ԵՄ ասոցացման համաձայնագրի նախագծի քաղաքական մասը, իսկ տնտեսական մասը համաձայնեցված էր Հայաստանի՝ ԵԱՏՄ անդամակցության պահանջներին:

Համաձայնագիրը ստորագրվեց 2017 թվականի նոյեմբերի 27-ին՝ Բրյուսելում կայացած Արևելյան գործընկերության 5-րդ գագաթնաժողովի ընթացքում: Ներկայումս այն վավերացվել է ԵՄ անդամ բոլոր պետությունների կողմից և ուժի մեջ է մտել: Այն չափազանց հավակնոտ և եզակի համաձայնագիր է Արևելյան գործընկերության ամբողջ տարածքի համար, ներառում է հանրային կյանքի բոլոր ոլորտները և որակական ու բովանդակային բոլորովին նոր մակարդակի է բարձրացնում ՀՀ-ԵՄ հարաբերությունները: Սույն աշխատանքի շրջանակներում մեզ առավելապես հետաքրքրում է համաձայնագրի այն հատվածը, որը վերաբերում է դարաբաղյան հակամարտությանը:

ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի նախաբանում անդրադարձ կա դարաբաղյան հակամարտությանը, որը մեջքերվում է ստորև.

**«Ընդունելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և տևական կարգավորման համար Հայաստանի Հանրապետության հանձնառության կարևորությունը և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից վարվող բանակցությունների շրջանակներում** այդ կարգավորմանը հնարավորինս շուտ հասնելու անհրաժեշտությունը. ընդունելով նաև ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտում ամրագրված **նպատակների և սկզբունքների հիման վրա** այդ կարգավորմանը հասնելու անհրաժեշտությունը, մասնավորապես այն նպատակների և սկզբունքների, որոնք առնչվում են **ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից հրաժարվելուն, պետությունների տարածքային ամբողջականությանը և ժողովուրդների իրավահավա-**



**սարությանն ու ինքնորոշմանը և արտացոլված են ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպումից ի վեր ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում արված բոլոր հայտարարություններում», նշվում է նաև կարգավորման այս գործընթացին աջակցելու՝ Եվրոպական միության կողմից հայտարարված հանձնառությունը<sup>150</sup>:**

Այսպիսով, հաշվի առնելով դարաբաղյան հիմնահարցում ՀՀ պաշտոնական դիրքորոշումը, նկատենք, որ ՀՀ-ԵՄ հարաբերությունները երկարաժամկետ կտրվածքով պայմանավորող այս համաձայնագրում ներառված՝ դարաբաղյան հակամարտությանը վերաբերող դրույթները ամբողջապես սպասարկում էին Հայաստանի Հանրապետության քաղաքական շահը: Առանձնացնենք համաձայնագրի որոշ կարևոր դրույթներ և փորձենք քննարկել դրանց կարևորությունը:

1. Համաձայնագրում հստակ նշված է բանակցային գործընթացի ձևաչափը՝ ի դեմս ԵԱՀԿ Մինսկի խմբի: Հայտնի է, որ բանակցային գործընթացի մեկնարկից հետո ադրբեջանական կողմը մշտապես փորձել է հասնել բանակցային գործընթացի ձևաչափի փոփոխությանը՝ փորձելով այդ գործում ներգրավել միջազգային այլ կառույցների ու պետությունների:

2. Համաձայնագրում նշվում է հակամարտության կարգավորման անհրաժեշտությունը «ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և ԵԱՀԿ Հելսինկիի եզրափակիչ ակտում ամրագրված **նպատակների և սկզբունքների** հիման վրա»: Այստեղ շատ կարևոր է «նպատակներ և սկզբունքներ» ձևակերպումը: Այս համատեքստում անհրաժեշտ ենք համարում հատուկ անդրադարձ կատարել **տարածքային ամբողջականության սկզբունքի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարաբերակցությունը**: Բանն այն է, որ ՄԱԿ-ի կանոնադրության առաջին գլուխը սահմանում է ՄԱԿ-ի նպատակներն ու սկզբունքները: Առաջին հոդվածով սահմանվում

---

<sup>150</sup> ուժի մեջ է 01.03.2021:

են ՄԱԿ-ի նպատակները, իսկ երկրորդով՝ այդ նպատակներին հասնելու սկզբունքները: Առաջին հոդվածի երկրորդ կետը նաև ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքն է սահմանում իբրև ՄԱԿ-ի նպատակ: Համաձայն նույն գլխի երկրորդ հոդվածի նախաբանի՝ ՄԱԿ-ը և իր անդամները պետք է հետապնդեն առաջին հոդվածում նշված նպատակները յոթ սկզբունքների շրջանակներում և խուսափեն «ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ ՄԱԿ-ի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից»<sup>151</sup>: Այսպիսով, ՄԱԿ-ը սահմանում է նպատակներ և այդ նպատակների կատարմանը նպաստող սկզբունքներ: Այլ խոսքով՝ մի դեպքում գործունենք իրավունքի, մեկ այլ դեպքում՝ այդ իրավունքի կենսագործումն ապահովելուն կոչված սկզբունքի հետ: Հետևաբար դրանք չեն կարող հակադրվել իրար:

Խնդրո առարկա հարցը Տ. Թորոսյանը դիտարկել է այն առումով, որ, Հելսինկիի եզրափակիչ ակտում<sup>152</sup> բերված տասը սկզբունքների սահմանումների համաձայն, Ադրբեջան-Հայաստան միջպետական հարաբերությունների պարագայում պետք է կիրառվի տարածքային ամբողջականության սկզբունքը, իսկ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հարաբերությունները պետք է կարգավորվեն ինքնորոշման իրավունքի հիման վրա: Ամեն դեպքում, հետագայում ոչ միայն երեք սկզբունքների կիրառման ոլորտների հստակեցման փորձ չարվեց, այլև համանախագահները տարատեսակ ու հակասական հայտարարություններով խառնաշփոթ ստեղծեցին սկզբունքների հանրային ընկալման մեջ<sup>153</sup>: Հետագր-

<sup>151</sup> Charter of the United Nations, <https://www.un.org/en/charter-united-nations/>

<sup>152</sup> Conference on Security and Co-operation in Europe, Final Act, Helsinki 1975, <https://www.osce.org/files/f/documents/5/c/39501.pdf>

<sup>153</sup> Թորոսյան Տ., նշվ. աշխ., էջ 140–141:

քիր է, որ վերն ասվածին համապատասխան մի ձևակերպում էլ արել է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախկին համանախագահ երկրներից Ֆրանսիայի ներկայացուցիչ Բ. Ֆասինը՝ նկատելով. «Ղարաբաղյան հակամարտության պարագայում գործ ունենք միջազգային իրավունքի միաժամանակյա կիրառման երկու դեպքի հետ՝ Ադրբեջանի ներսում հակամարտություն և միջպետական հակամարտություն»<sup>154</sup>։

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ-ԵՄ քննվող համաձայնագրում առկա դրույթները շատ կարևոր են ղարաբաղյան հակամարտությունը Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտման համատեքստում ներկայացնելը բացառելու, ինչպես նաև այն առումով, որ տարածքային ամբողջականության սկզբունքը բացառապես պետությունների միջև հարաբերությունների հարթությունում է և ոչ թե ինքնորոշվող սուբյեկտ-պետություն հարաբերության։ Ի դեպ, Կոստվոյի հարցում նման որոշում կայացվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից։

Արդարադատության միջազգային դատարանի՝ Կոստվոյի վերաբերյալ 2010 թ. հուլիսի 22-ի եզրակացության մեջ հստակ նշվում է, որ միակողմանի անկախության հռչակումը միջազգային իրավունքում որևէ կերպ արգելված չէ, և որ տարածքային ամբողջականության սկզբունքը վերաբերում է միայն միջպետական հարաբերություններին. **«Տարածքային ամբողջականության իրավունքի կիրառման ոլորտը սահմանափակվում է ճանաչված պետությունների հարաբերությունների ոլորտով»**<sup>155</sup>։

3. Համաձայնագրում տարածքային ամբողջականության, ուժ կամ ուժի սպառնալիք չկիրառելու սկզբունքների կողքին ամրագր-

---

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 185։

<sup>155</sup> **Kotcharian Ch.**, “Pourquoi le conflit du Haut-Karabagh n’est toujours pas réglé?”, Ed. Jean Pierre Vettovaglia, Prévention des crises et promotion de la paix (volume III). Déterminants des conflits et nouvelles formes de prévention, Bruylant, septembre 2013, pp. 569–593

ված է նաև ժողովուրդների ինքնորոշման և իրավահավասարության իրավունքը, ինչը կրկին ամբողջապես տեղավորվում էր Հայաստանի պետական դիրքորոշման շրջանակներում:

4. Համաձայնագրում հստակ նշվում է «**ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպումից ի վեր** ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում արված բոլոր հայտարարությունների» ընդունման կարևորությունը: Այստեղ տեղին է դիտարկել երկու փաստաթուղթ: Առաջինը ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ համատեղ հայտարարությունն է<sup>156</sup>, որն ընդունվեց 2009 թվականի հուլիսի 10-ին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների ղեկավարների կողմից, իտալական Լ'Աքվիլա քաղաքում ընթացող G8-ի գագաթնաժողովի օրերին: Դրանով, ըստ էության, գաղտնագերծվում են, այսպես կոչված, բանակցային պրահյան գործընթացի արդյունքում կազմված և 2007 թվականին բանակցող կողմերի ու համանախագահների կողմից որպես բանակցային գործընթացի հիմք ընդունված 3 սկզբունքներն ու 6 տարրերը: Առաջին անգամն էր, որ նման մակարդակով ընդգծվում էր Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը և հանրաքվեով ԼՂ վերջնական կարգավիճակի որոշումը: Երկրորդ փաստաթուղթը ԵԱՀԿ 2008 թվականի նախարարների խորհրդի 16-րդ հանդիպման հայտարարությունն է, որը որևէ կերպ չէր հակասում ՀՀ քաղաքական առաջնահերթություններին<sup>157</sup>:

Նաև ընդգծենք, որ ՀՀ-ԵՄ հարաբերությունների կերպափոխման համատեքստում ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման սկզբունքների ընկալման կամ մեկնաբանման համար հղում է ար-

---

<sup>156</sup> Statement by the OSCE Minsk Group Co-Chair countries, L'AQUILA 10 July 2009, <https://www.osce.org/mg/51152>

<sup>157</sup> Joint declaration of the Foreign Ministers and Deputy Minister of France, Russia, and the United States on Nagorno-Karabakh, 4 December 2008, <https://www.osce.org/mc/35384?download=true>

վում 2008 թվականից հետո ընդունված հայտարարություններին՝ ըստ էության բացառելով նախկինում արված միակողմանի և հակասական հայտարարությունները: Կարծում ենք, այս համատեքստում առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել 1996 թվականի դեկտեմբերի ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթնաժողովի հայտարարությանը կից արված ԵԱՀԿ նախագահի գրասենյակի հայտարարությանը<sup>158</sup>, որտեղ որպես ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանաձև է առաջարկվում Լեռնային Ղարաբաղի բարձր ինքնավար կարգավիճակը Ադրբեյջանի կազմում: Այս առումով ևս ՀՀ-ԵՄ համաձայնագրի քաղաքական արժեքը կարևոր է:

ՀՀ-ԵՄ «Ընդլայնված և համապարփակ գործընկերության համաձայնագիրը» ստորագրվեց ԱլԳ Բրյուսելի գազաթնաժողովի ժամանակ, որի տարածած հայտարարության<sup>159</sup> մեջ թեև կոնկրետ ղարաբաղյան հակամարտությանը անդրադարձ չկա, այնուամենայնիվ, հայտարարության՝ հակամարտություններին վերաբերող կետում խոսվում է ԵՄ դերի բարձրացման ու հակամարտությունների կարգավորման գործընթացում աջակցության մասին՝ միջազգայնորեն ընդունված բանակցային գործընթացների շրջանակներում:

ՀՀ-ԵՄ հարաբերություններում քննարկման կարևոր թեմա էին Եվրոպական միության ներկայացուցիչների՝ Ղարաբաղ մուտքի հարցը և ԵՄ կողմից տեղում աջակցություն տրամադրելը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտներին աջակցություն ցուցաբերելը, հումանիտար խնդիրների լուծմանն աջակցելը: Այդ մասին Եվրոպական կողմը Խորհրդարանի մակարդակով սկսել է խոսել 1990-ականների սկզբից: Հայկական կողմի համար ԵՄ ներգրավվածության աճն ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացումը կարող էր կարևոր

---

<sup>158</sup> Organization for Security and Co-operation in Europe, Lisbon Document 1996, <https://www.osce.org/mc/39539?download=true>

<sup>159</sup> Joint Declaration of the Eastern Partnership Summit, Brussels, 24 November 2017, <https://www.consilium.europa.eu/media/31758/final-statement-st14821en17.pdf>

նշանակություն ունենալ Արցախին պարտադրված մեկուսացումը ճեղքելու առումով:

Արցախում Եվրոպական միության ներկայացուցիչների մուտքը խոչընդոտվում էր բացառապես Ադրբեյջանի կողմից: Նախորդ ժամանակահատվածում Եվրոպական տարբեր մակարդակներում ընդունվել են բազմաթիվ հայտարարություններ, որոնք կոչ են անում կողմերին ապահովել ԵՄ ներկայացուցիչների անարգել մուտքը Լեռնային Ղարաբաղ: Այդպիսի փաստաթղթերի շարքին կարելի է դասել, օրինակ, Ադրբեյջանում Եվրոպական հարևանության քաղաքականության առաջընթացի վերաբերյալ 2013 թվականի աշխատանքային փաստաթուղթը<sup>160</sup>:

Բացառապես Եվրոպական միություն-Ադրբեյջան հարաբերությունների շրջանակներում հրապարակված փաստաթղթերում նման պնդումների արտացոլումը խոսում է հենց այն հանգամանքի մասին, որ Լեռնային Ղարաբաղ Եվրոպական պաշտոնյաների մուտքի հիմնական խոչընդոտը ադրբեյջանական կողմն էր:

Ինչ վերաբերում է **Եվրոպական միության խորհրդին**, որպես Եվրոպական միության իշխանության օրենսդիր և գործադիր ուժեղացված լիազորություններ ունեցող ղեկավար մարմին<sup>161</sup>, դրա առնչությունը հակամարտությանը անհրաժեշտ ենք համարում դիտարկել երկու կարևոր փաստաթղթի միջոցով: Առաջինը Եվրոպական խորհրդի 2012 թվականի փետրվարի 27-ի եզրակացությունն է<sup>162</sup>:

---

<sup>160</sup> Implementation of the European Neighbourhood Policy in Azerbaijan Progress in 2012 and recommendations for action, Joint staff working document, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52013SC0088&from=en>

<sup>161</sup> The Council of the European Union, <https://www.consilium.europa.eu/en/council-eu/>

<sup>162</sup> Council conclusions on the South Caucasus, 3149th FOREIGN AFFAIRS Council meeting Brussels, 27 February 2012, [https://www.consilium.europa.eu/uedocs/cms\\_data/docs/pressdata/EN/foraff/128197.pdf](https://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/128197.pdf)

**«Հարավային Կովկասի վերաբերյալ Խորհրդի եզրակացությունը»** վերնագրված փաստաթղթի վերջին կետով Խորհուրդն անդրադառնում է դարաբաղյան հակամարտությանը: Վերահաստատելով Եվրոպական միության հանձնառությունը՝ միջոցառումներ իրականացնել կողմերի միջև վստահության ամրապնդման համար՝ ԵՄ-ն **«ընդգծում է ԵՄ ներկայացուցիչների անարգել մուտքը Լեռնային Ղարաբաղ և հարակից շրջաններ»:**

Արդեն 2019 թվականի մարտի 15-ին Եվրոպական միության Խորհուրդը հրապարակում է Եվրոպական հանձնաժողովի կողմից իրեն հասցեագրված «Եվրոպական հարևանության վերանայված քաղաքականության շրջանակներում ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ զեկույց» փաստաթուղթը<sup>163</sup>: Ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձի հատվածում խոսվում է ինչպես հակամարտության գոտում ԵՄ ներգրավվածության մեծացման, կողմերի միջև շփումները խրախուսելու կարևորության մասին, այնպես էլ ընդգծվում է, որ **«Եվրոպական միությունը շարունակում է կոչ անել ԵՄ ներկայացուցիչներին՝ Լեռնային Ղարաբաղ անխափան մուտքի համար ներգրավվել հակամարտության փոխակերպման գործընթացում՝ որպես աջակցություն և փոխլրացում ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին»:**

Այս համատեքստում պետք է նկատել երկու հանգամանք. առաջին՝ նման հայտարարությունների ներառումը հիմնականում ԵՄ-Ադրբեջան հարաբերություններին վերաբերող փաստաթղթերում, երկրորդ՝ հայտարարություններում խնդրո առարկայի վերաբերյալ ձևակերպումների փոփոխության տրամաբանությունը:

Առաջինի կապակցությամբ նշենք, որ, որպես կանոն, ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների շրջանակներում հակամարտության մեջ ԵՄ-ի այս կամ այն ձևով ներգրավվելուն և ԵՄ պաշտոնյանե-

---

<sup>163</sup> Report on EU - Azerbaijan relations in the framework of the revised European Neighbourhood Policy, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/2019\\_report\\_on\\_eu-azerbaijan\\_relations\\_in\\_the\\_framework\\_of\\_the\\_revised\\_european\\_neighbourhood\\_policy\\_0.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/2019_report_on_eu-azerbaijan_relations_in_the_framework_of_the_revised_european_neighbourhood_policy_0.pdf)

րի մուտքի անհրաժեշտությանն անդրադառնալը ակնհայտ ցուցիչ է այն փաստի, որ ադրբեջանական կողմն է հանդիսանում հիշյալ միջոցառումների խոչընդոտը: Սակայն անկհայտ է, որ, չնայած հայտարարությունների և քաղաքական գնահատականների մակարդակում ԵՄ-ն հանձնառու է հակամարտության շրջանակներում ունենալու հումանիտար ներգրավվածություն, սակայն այդ ուղղությամբ առավել արմատական քայլեր չեն իրականացվում<sup>164</sup>:

Երկրորդ՝ եթե 2013 թվականին օգտագործվում էր «անարգել մուտք» ձևակերպումը, ապա 2019 թվականին՝ «անխափան մուտք» ձևակերպումը: Եթե առաջին դեպքում օգտագործվում էր «Լեռնային Ղարաբաղ և հարակից շրջաններ» ձևակերպումը, ապա 2019 թվականին օգտագործվեց «Լեռնային Ղարաբաղ» ձևակերպումը: Կարելի է ենթադրել, որ նման ձևակերպումներով Եվրոպական միությունը որոշակիորեն հակադարձում է Ադրբեջանի՝ ԵՄ ներկայացուցիչների մուտքը Արցախ խափանելու հնարավոր փորձերին: Բանն այն է, որ ԵՄ ներկայացուցիչների կամ, որ առավել հավանական է, Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի մուտքը Արցախ պետք է համաձայնեցվի նաև Ադրբեջանի հետ: Ընդ որում, հատուկ համաձայնեցման հարց էր նաև այն, թե որ պետության իրավազորության տարածքից պետք է կատարվի ենթադրվող մուտքը:

Համաձայն Եվրոպական միության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերի բարձր ներկայացուցչի գրության, որն իբրև պատգամավորական հարցման պատասխան ուղարկվել էր ԵԽ պատգամավորներին, **պարզվում է, որ Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամերի հարցերով ԵՄ ներկայացուցիչը 2004 թվականին այցելել էր Արցախ**<sup>165</sup>: Սա-

---

<sup>164</sup> Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում ԵՄ ներգրավվածության մասին խոսելիս հիմնականում պետք է նկատի ունենալ հումանիտար և քաղաքացիական հասարակությանն աջակցելու նպատակով ներգրավվածությունը:

<sup>165</sup> Answer given by Vice-President Mogherini on behalf of the Com-mission, 29



կայն, հաշվի առնելով այդ այցի բացառիկությունը, տեղեկատվության խիստ սակավությունը, ինչպես նաև ԵՄ խորհրդի և հանձնաժողովի կողմից այդ հարցի վերաբերյալ շարունակական կոչերը, պետք է ենթադրել, որ այդ այցը չի կատարվել տվյալ պաշտոնյայի մանդատի ամբողջական օգտագործմամբ:

Եվրոպական խորհուրդը, իբրև Եվրոպական միության ղեկավար անձանցից բաղկացած մարմին, ղարաբաղյան հակամարտությանը ծավալուն անդրադարձներ, որպես այդպիսին, չի կատարել մինչև 2020 թ. ադրբեջանական ագրեսիան: Պատերազմի և էթնիկ գտման հետևանքով ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ստեղծված բոլորովին նոր իրավիճակը, 2022 թ. փետրվարին սկսված ռուս-ուկրաինական պատերազմը, դրանով պայմանավորված՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության գուցե ժամանակավոր կաշկանդումը Եվրոպական խորհրդի համար պարարտ հող ստեղծեցին ղարաբաղյան հիմնախնդրի և հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման գործում միջնորդական դերակատարություն ստանձնելու համար, ինչը ողջունել է նաև ԵԱՀԿ լեհական նախագահությունը<sup>166</sup>:

Հաշվի առնելով սույն աշխատանքն ամբողջացնելու ժամանակահատվածում Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի միջնորդությամբ բանակցությունների ընթացքը, հրապարակային հայտարարությունների սակավությունը և գործընթացի համեմատաբար նոր լինելը, պատշաճ չենք համարում այդ գործընթացի վերլուծությունը՝ թողնելով դա մեր առաջիկա աշխատանքների համար:

Անդրադառնալով **Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ ԵՄ անդամ պետությունների դիրքորոշումներին**<sup>167</sup>, նկատենք, որ անդամ պետություններն անկախ են իրենց արտաքին քաղաքականու-

---

march 2018 [http://www.europarl.europa.eu/doceo/document/E-8-2018-000464-ASW\\_EN.html](http://www.europarl.europa.eu/doceo/document/E-8-2018-000464-ASW_EN.html)

<sup>166</sup> ԵԱՀԿ լեհական նախագահության թվիթերյան պաշտոնական էջ, <https://twitter.com/PLinOSCE/status/1528683646806282240>

յունը պլանավորելիս և իրականացնելիս: Անշուշտ, որոշ հարցերի շուրջ ԵՄ-ն ձևավորում է միասնական արտաքին քաղաքականություն, սակայն անդամ պետությունների արտաքին քաղաքականությունը չպետք է հակասի ԵՄ որդեգրած դիրքորոշմանը և հայտնի արժեքային չափորոշիչներին: Ինչ վերաբերում է ղարաբաղյան հիմնահարցի մասին ԵՄ անդամ պետությունների պաշտոնական դիրքորոշումներին, ապա վերն ասվածի համատեքստում կարելի է նկատի ունենալ ՀՀ-ԵՄ առանցքային համաձայնագրերը:

1996 թվականին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև ստորագրված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագիրը ղարաբաղյան հակամարտությանը որևէ անդրադարձ չէր կատարում, հետևաբար այն ստորագրող ԵՄ անդամ պետությունների վրա ղարաբաղյան հիմնահարցում միասնական դիրքորոշում ունենալու պարտավորություն չէր դրվում:

Արդեն 2017 թվականին ստորագրված և այժմ արդեն վավերացված ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագիրը անդամ պետությունների համար առավել հստակ է ամրագրում ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ քաղաքական դիրքորոշումը: Նկատենք նաև, որ ԵՄ անդամ պետություններից հինգը՝ Գերմանիան, Իտալիան, Ֆրանսիան, Չեխիան և Շվեդիան, Մինսկի խմբի անդամ պետություններ են, իսկ Ֆրանսիան նաև համանախագահ է:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հակամարտության շրջանակներում Եվրոպական միության ներգրավվածությանը՝ նկատենք, որ այն խիստ անբավարար էր, հատկապես մինչև 2020 թ. պատերազմը: Թերևս միակ ձևաչափը, այն էլ՝ անուղղակի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման Եվրոպական համագործակցությունն էր (EPNK)<sup>167</sup>: 2009

---

<sup>167</sup> European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorny Karabakh, <https://www.international-alert.org/stories/european-partnership-for-the-peaceful-settlement-of-the-conflict-over-nagorny-karabakh/>

թվականից Եվրոպական միության կայունության ֆոնդից ֆինանսավորվող այս ծրագիրն իրականացնում էին եվրոպական հինգ հասարակական կազմակերպություն-վերլուծական կենտրոններ: Ծրագրի նպատակն էր աջակցել ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված ջանքերին՝ օգտագործելով քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և քաղաքականություն մշակողների միջև երկխոսությունը: Ծրագրի նպատակներից է նաև օժանդակությունը հակամարտության կարգավորմանը, լարվածության նվազեցմանը և հետհակամարտային վերականգնողական աշխատանքներին:

Ծրագրի երեք հիմնական առաջնահերթություններն առնչվում էին լրատվամիջոցներին, հանրային քաղաքականությանը և հակամարտության ազդեցության խմբերին<sup>168</sup>: Այնուամենայնիվ, 2020 թ. պատերազմից հետո այս հարթակը սառեցրել է իր աշխատանքը:

**Ղարաբաղյան հիմնախնդրի մասով ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման հնարավոր հեռանկարները** գնահատելով՝ գալիս ենք հետևյալ եզրակացության: Տեսական առումով որքան էլ դյուրին է ղարաբաղյան հակամարտության էության եվրոպական հավաքական ընկալումների մենկնաբանումը իբրև ինքնորոշման իրավունքի համար մղվող պայքար, նույնքան էլ խրթին է բանակցային գործընթացի վերաբերյալ եվրոպական քաղաքական մտքի ընկալումը բնորոշելը: Արդյո՞ք ԵՄ-ն ղարաբաղյան հակամարտությունը դիտում է իբրև չլուծվող հակամարտություն (intractable conflict), իսկ բանակցային գործընթացը՝ պատային: Մինչև 2020 թ. 44-օրյա պատերազմն ու 2022 թ. ռուս-ուկրաինական հակամարտությունը թերևս հնարավոր էր պնդել, որ Եվրոպական միությունը չունի ղարաբաղյան բանակցային գործընթացի բնորոշման կարիք, քանի որ անմիջականորեն քաղաքական պատասխանատվություն չի կրում միջնորդական գործընթացի հանդեպ: Ընդ որում, նույնը կարող էր վերաբերել միջնորդական

---

<sup>168</sup> The European Union continues to support civil society peace building efforts over Nagorno-Karabakh, [https://europa.eu/rapid/press-release\\_IP-12-1175\\_en.htm](https://europa.eu/rapid/press-release_IP-12-1175_en.htm)

առաքելության արդյունավետության գնահատմանը, որտեղ կրկին ԵՄ-ն լուրմ էր՝ համերաշխություն հայտնելով ԵԱՀԿ-ին:

Ամեն դեպքում, քննարկվող աշխատանքի համատեքստում պետք է հաշվի առնել Կոսովոյի հարցով Եվրոպական միության դիրքորոշումը, երբ փորձ է արվում Կոսովոյի առանձնահատկության ինչ-որ հիմնավորում բերել: Դա ԵՄ արտաքին կապերի նախկին հանձնակատար Խավիեր Սոլանայի ձևակերպումն է. «Գոյություն ունի հարավսլավական բռնության և անհամաձայնության արդյունքում տրոհումների պատմական ենթատեքստ (նախապատմություն), ինչպես նաև մինչև 1999 թ. տեղի ունեցած զանգվածային բռնություններ և ճնշումներ: Դա եզակի իրավիճակ է նաև ՄԱԿ-ի 1244 բանաձևի հիման վրա Կոսովոյում 1999 թվականից միջազգային վարչակազմի կառավարման առումով»<sup>169</sup>:

Կոսովոյի դեպքի բացառիկության մասին, Եվրոպայում և այլուր անկախական շարժումներին նոր լիցք չհաղորդելու համար, խոսել է նաև ՄԱԿ-ը, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպություններ ու պետություններ, սակայն հատկանշական է, որ Արդարադատության միջազգային դատարանն ընդհանրապես չի անդարդարձել և չի նշել Կոսովոյի անկախության իրավաչափության բացառիկությունը:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո, երբ գրեթե ամբողջությամբ կաշկանդվեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության գործունեությունը, Եվրոպական միության խորհրդի նախագահ Շառլ Միշելի նախաձեռնած եռակողմ հարթակը կարևոր դարձավ բանակցային գործընթացը շարունակելու առումով, որի շոշափելի արդյունքը թերևս հայ-ադրբեջանական սահմանին ԵՄ քաղաքացիական առաքելության տեղակայումն էր: Ցավոք, սույն աշխատանքի ամբողջացման ժամանակահատվածում առկա տեղեկատվությունը անբավարար էր հավելյալ պնդումներ կատարելու համար:

---

<sup>169</sup> Թորոսյան Տ., նշվ. աշխ., էջ 267:

Ինչ վերաբերում է ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում ՀՀ-ԵՄ հարաբերությունների օրակարգային հարցերին, ապա անհրաժեշտ է անդրադառնալ հետկոնֆլիկտային ժամանակահատվածում Եվրոպական խորհրդի ղեկավարի առաջնորդած բանակցությունների ձախողմանը, որի պայմաններում Եվրոպական միությանը, ինչպես միջազգային այլ ուժային կենտրոններին, չհաջողվեց կանխել Արցախի էթնիկ զտումը: Հաշվի առնելով ղարաբաղյան հիմնախնդրի՝ միջազգային իրավունքի համաձայն լուծված չլինելու փաստը՝ **անհրաժեշտ է Եվրոպական միության հետ մշակել համապատասխան քաղաքական օրակարգ, որի իրականացումը կապահովի Արցախի ժողովրդի վերադարձի իրավունքի իրացումն ու արժանապատիվ կյանքի ապահովման անվտանգային երաշխիքները:**

Այսպիսով, ղարաբաղյան հիմնախնդիրը դիտարկելով ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման լայն համատեքստում՝ պարզ է դառնում, որ դեռևս նախորդ դարի 80-ական թվականներից Եվրոպական խորհրդարանը մշտապես ակնդետ ուշադրության կենտրոնում է պահել իրավիճակը և հանդես է եկել օբյեկտիվ ու փաստարկված դիրքորոշումներով: Այդ դիրքորոշումները հստակորեն վերաբերել են Ադրբեյջանի կողմից Ղարաբաղի բնակչության նկատմամբ ագրեսիային, խաղաղ քաղաքացիական բնակչության նկատմամբ վայրագություններին, բռնի տեղահանություններին, հումանիտար ճգնաժամերին և ահաբեկչական այլ գործողությունների: Եվրոպական խորհրդարանը քանիցս քաղաքակրթական հակասության մեջ է դիտարկել մի կողմից Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, մյուս կողմից՝ Ադրբեյջանում ընթացող հետանկախական քաղաքական զարգացումները, իշխանությունների ձևավորումը, ժողովրդավարական կարգերի ամրապնդման հանձնառությունը և այլն:

Ըստ էության, Եվրոպական խորհրդարանը նաև ընդունել է Ղարաբաղի ինքնորոշման և անկախության հռչակման փաստի ամբողջական համապատասխանությունը ինչպես միջազգային

իրավունքի հիմնարար փաստաթղթերին, այնպես էլ ԽՍՀՄ ներքին օրենսդրությանը:

Եվրոպական միությունը հետխորհրդային տարածքում առկա հակամարտություններին, այդ թվում՝ ղարաբաղյան հակամարտությանը տևական ժամանակահատված վերաբերում էր տարբերակված մոտեցմամբ՝ հաշվի առնելով կոնկրետ հակամարտության ծագումնաբանական առանձնահատկությունները և, դրանով պայմանավորված, կառավարման ու կարգավորման գործընթացը: Հիշյալ պնդման համար կարևոր հիմք են Եվրոպական միության խորհրդարանի կողմից 2017 թվականի հուլիսի 5-ին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստին ընդառաջ, Եվրոպական միության խորհրդին ուղղված առաջարկությունները: Դրանցից մեկում Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի կոնֆլիկտների պարագայում կարևորվում է տարածքային ամբողջականության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը, իսկ ղարաբաղյան կոնֆլիկտի առնչությամբ հղում է արվում տարածքային ամբողջականությանը, ժողովուրդների իրավահավասարությանն ու ինքնորոշման իրավունքի ապահովմանը, ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման բացառմանը<sup>170</sup>:

Եվրոպական միության էներգետիկ հետաքրքրությունը ադրբեջանական գազի ստացման առումով չի կարող վերաճել քաղաքական այնպիսի գործոնի, որը կարող է էական ազդեցություն ունենալ տարածաշրջանում Եվրոպական միության դիրքորոշման տրամագծային փոփոխության վրա, թեև ԵՄ ղեկավար կառույցներից Եվրոպական հանձնաժողովի վրա ԵՄ-Ադրբեջան գազային գործարքը որոշակի ազդեցություն ունեցել է:

Հանրագումարելով նշենք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում մեկնարկած բանակցային գործընթացում ղարաբաղյան հակամարտությանն առնչվող հիմնական փաս-

<sup>170</sup> Recommendation to the Council on the 72nd Session of the United Nations General Assembly, 5 July 2017, Strasbourg, [http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0304\\_EN.html](http://www.europarl.europa.eu/doceo/document/TA-8-2017-0304_EN.html)

տաթղթերում ԵՄ դիրքորոշումը գոնե մինչև 2020 թ. ամբողջապես համընկնում էր ՀՀ պաշտոնական դիրքորոշմանը, ինչը վերջնականապես ամրագրվեց ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրում:

### **ԳԼՈՒԽ 3. ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՐԲԻԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **3.1 Բազմամշակութայնության դերը էթնիկ լոբբինգի գործունեության երաշխավորման գործում**

Բազմամշակութայնությունը (multiculturalism) կարևորվում է իբրև հասարակական-քաղաքական փոխակերպումների գործընթացի կառուցվածքային մաս՝ պայմանավորված միգրացիոն դժվարկառավարելի հոսքերով, ԵՄ մի շարք անդամ պետություններում ծայրահեղ աջ քաղաքական հոսանքների ակտիվացմամբ, ԵՄ ժողովուրդների ազգային պահանջմունքների բավարարմամբ և ներմիութենական համերաշխության պահպանման հրամայականով: Ըստ Օքսֆորդի բառարանի՝ «բազմամշակութայնություն» տերմինն անգլախոս երկրներում առաջացել է 1960-ական թվականներին՝ նկարագրելու ոչ եվրոպացի ներգաղթյալների հետ հարաբերությունները: Այժմ դա նշանակում է պետության և/կամ տիտղոսակիր էթնոսի **քաղաքական գոյակցություն** բոլոր մշակութային փոքրամասնությունների հետ, որոնք առաջին հերթին տարբերակվում են ռասայական, էթնիկական և կրոնական առումներով: Բազմամշակութայնության և քաղաքական տարբերակվածության առանցքը քաղաքական այն մտայնության մերժումն է, ըստ որի՝ հավասարությունն ու քաղաքացիությունը կարող են լինել մշակութապես չեզոք<sup>171</sup>: Բացի վերը թվարկվածը, բազմամշակութայնության տեսամեթոդաբանական և կիրառական անհրաժեշտությունն առաջացավ նաև այն պատճառով, որ փոքրամասնության իրավունքները չեն կարող ամբողջապես երաշխավորվել մարդու իրավունքների վերաբերյալ հանրաճանաչ նորմերով: Մարդու իրավունքների ավանդական ընկալումները չեն կարող ապահովել,

<sup>171</sup> **Brown G. W., McLean I., McMillan A.**, նշվ. աշխ., էջ 775:



օրինակ, մշակութային փոքրամասնությունների կարևոր և հակասական կիրառելիություն ունեցող իրավունքները, որոնք վերաբերում են, օրինակ, սեփական լեզվի կիրառմանը կրթական կյանքում, խորհրդարաններում, պետական բյուրոկրատիայում, դատարաններում և այլուր<sup>172</sup>: Հետևաբար բազմամշակութայնությունն ավելին է, քան տարբեր մշակույթների համատեղ գոյակցությունը, և պատահական չէ, որ Օքսֆորդի բառարանում օգտագործված է **«քաղաքական գոյակցություն»** եզրույթը: Բազմամշակութայնությունը, փաստորեն, տարբեր մշակույթների համատեղ գոյակցությունն ապահովող, բարդ կառուցվածքով քաղաքական բազմաշերտ գործընթաց է:

Եվրոպական միությունն ու դրա անդամ պետությունները, որպես կանոն, բազմամշակութայնությանն առնչվում են երեք մակարդակում.

1. ԵՄ անդամ պետություններում պատմականորեն ձևավորված և ապրող բնիկ ժողովուրդների հետ հարաբերությունների կառուցում՝ նրանց ազգային պահանջմունքների բավարարման ու ներպետական համերաշխության ապահովման նպատակով,
2. միգրացիոն հոսքերի և Եվրոպական միության ներկայիս անդամ երկրներում պատմականորեն ձևավորված սփյուռքի հետ հարաբերություններում,
3. հետպատերազմյան շրջանում էժան աշխատուժի ներգրավման համար ներգաղթյալների կազմակերպված հոսքերի ապահովման, ապա, արդի միջազգային քաղաքական տուրբուլենտությամբ պայմանավորված (հատկապես Արաբական գարնան ընթացքում), ներգաղթյալների խմբերի վերաբերյալ մշակված քաղաքականություն:

Այս համատեքստում մեզ հետաքրքրող նպատակներին հասնե-

---

<sup>172</sup> **Kymlicka W.**, Multicultural Citizenship, a liberal theory of minority rights, p. 4.

լու համար առավելապես հետաքրքիր է **բազմամշակութայնության քաղաքականության դերը Եվրոպական միության անդամ երկրների և դրանցում ձևավորված սփյուռքի հետ հարաբերություններում նախ որպես վերջինիս գործունեության գաղափարաքաղաքական հենք, ապա՝ սոցիալ-քաղաքական փոխակերպումների խաղային համակարգ:** Փաստենք, որ «բազմամշակութայնություն» հասկացությունը և՛ ծագմամբ, և՛ տեսամեթոդաբանական հիմնավորմամբ առավելապես եվրոպական ֆենոմեն է՝ կապված հետգաղութային ժամանակաշրջանում Եվրոպա ուղղված միգրացիոն հոսքերի հետ, որոնք եվրոպական երկրների համար դարձան էժան աշխատուժ:

Կանադացի հայտնի քաղաքական փիլիսոփա Ուիլ Կոմիկան առաջարկում է արևմտյան ժողովրդավարություններում տարբերակել բազմամշակութայնության **երեք դրսևորում:** Առաջին դրսևորումը տարբեր երկրների բնիկ ժողովուրդների հզորացումն է, օրինակ՝ մաորիները Նոր Զելանդիայում, Ավստրալիայի և Կանադայի տեղաբնիկները, հնդկացիները Ամերիկայում, սամիները Սկանդինավիայում կամ ինուիթները Գրենլանդիայում և այլն: Բազմամշակութայնության այս դրսևորման համար հեղինակն առաջարկում է իր և Քեյթի Բանթինգի մշակած քաղաքական ինը բնորոշիչ՝

- հողի (տարածքի) և տիտղոսի իրավունքի ճանաչում,
- ինքնակառավարման իրավունքի ճանաչում,
- պատմական դաշնագրերի պահպանում և/կամ նորերի ստորագրում,
- մշակութային իրավունքների (լեզու, որսորդություն, ձկնորսություն, սակրալ տարածքներ) ճանաչում,
- «չգրված օրենքների» (customary law) ճանաչում,
- կենտրոնական կառավարությունում ներկայացվածության և խորհրդատվության երաշխավորում,
- տեղաբնիկ ժողովուրդների հստակ կարգավիճակի սահմանադրական և օրենսդրական սահմանում,

- տեղաբնիկների իրավունքների պահպանման համար միջազգային մեխանիզմների կիրառելիություն և դրանց վավերացում,
- բարյացակամ գործողություններ<sup>173</sup>:

Միանշանակ համաձայնելով հեղինակի հետ՝ փաստենք, որ բազմամշակութայնության երկրորդ դրսևորումը ազգային խմբերի կողմից ինքնավարության և իշխանության որոշակի ռեսուրսների կառավարումն է: Դա հնարավորություն է տալիս բազմամշակութայնությունը դիտարկել որպես ռեսուրսների ռացիոնալ օգտագործման գործոն: Այդ իմաստով որոշակիացվում է էթնիկ խմբերի գործունեության ռացիոնալ և իռացիոնալ էներգիան: Հատուկ շեշտադրված են, օրինակ, բասկերն ու կատալոնացիները Իսպանիայում, ֆլամաններն ու վալոնները Բելգիայում, շոտլանդացիներն ու ուելսները Բրիտանիայում, քվեբեկցիները Կանադայում, գերմանացիները Հարավային Տիրոլում, շվեդները Ֆինլանդիայում և այլն: Իր հերթին, այս դրսևորումը ներառում է հետևյալ վեց գործընթացների համախումբ.

- ֆեդերալ կամ «քվադի ֆեդերալ» տարածքային ինքնավարություն,
- պաշտոնական լեզվի կարգավիճակ տարածքային կամ ազգային մակարդակում,
- կենտրոնական կառավարությունում և/կամ սահմանադրական դատարաններում ներկայացվածության երաշխավորում,
- փոքրամասնության լեզվի, դպրոցների և լրատվամիջոցների հանրային ֆինանսավորում,
- բազմամշակութայնության սահմանադրական կամ խորհրդարանական հաստատում,

---

<sup>173</sup> **Kymlicka W.**, The rise and fall of multiculturalism? New debates on inclusion and accommodation in diverse societies. International Social Science Journal, November, 2010, 97–112.

- համաձայնություն միջազգային ներկայացվածությանը (օրինակ՝ ենթապետական կազմավորումների անդամակցություն միջազգային կազմակերպություններին, դաշնագրերի ստորագրում, սեփական օլիմպիական հավաքականի առկայություն և այլն)<sup>174</sup>:

Մեր ուսումնասիրության շրջանակներում առանձնակի հետաքրքիր է Կիմլիկայի առաջարկած՝ բազմամշակութայնության երրորդ դրսևորումը, որը վերաբերում է ներգաղթյալների բազմամշակութային քաղաքացիությանը՝ ներառելով հետևյալ ութ գործընթացների համախումբ.

- կենտրոնական, շրջանային և համայնքային մակարդակներում բազմամշակութայնության սահմանադրական, օրենսդրական կամ խորհրդարանական հաստատում,
- բազմամշակութայնության ներառում դպրոցական կրթական ծրագրերում,
- հանրային մեդիայում և մեդիայի լիցենզավորման գործընթացում էթնիկ ներկայացվածություն և լուսաբանում,
- բացառություններ հագուստի կանոնակարգման, կիրականօրյա աշխատանքային գրաֆիկը կարգավորող օրենսդրության մեջ (կանոնադրական կամ դատարանի որոշումների մակարդակում),
- երկակի օրենսդրության թույլտվություն,
- էթնիկ կազմակերպությունների ֆինանսավորում՝ մշակութային ակտիվություն դրսևորելու համար,
- երկլեզու կրթության կամ մայրենի լեզվի ուսուցման ֆինանսավորում,
- օժանդակություն անբարենպաստ պայմաններում գտնվող ներգաղթյալների խմբերին<sup>175</sup>:

---

<sup>174</sup> Նույն տեղում:

<sup>175</sup> Նույն տեղում:

Եզրահանգենք, որ, համաձայն Կիմլիկայի առաջարկած՝ բազմամշակութայնության առաջին և երկրորդ դրսևորումների, բազմամշակութայնությունը պետության համար ունի կարգավորիչ և ապագան կառավարող գործառույթ: Դա թույլ է տալիս պահպանել պետության տարածքային ամբողջականությունը և ներպետական համագործակցության մշակույթը, ինչպես նաև բանակցային գործընթացներով կարգավորել առանձին խմբերի ու սուբյեկտների ինքնորոշման կամ անջատման փորձերը: **Սակայն քաղաքական առավել համեստ նկրտումներ ունեցող խմբերի համար, ինչպիսիք ներգաղթյալներն են և սփյուռքի արդեն իսկ ձևավորված համայնքները, բազմամշակութայնությունը որոշակիորեն քաղաքական գործունեության գաղափարաքաղաքական երաշխավորն է:** Այս պայմաններում համապատասխան շահային խմբերի գործունեության առանցքային ուղղություններ են դառնում ընդունող երկրում ազգային-համայնքային կյանք զարգացնելը, ազգային կրթադաստիարակչական և մշակութային գործունեությունը, հայրենիքի շահերի պաշտպանությունը և էթնիկ լոբբինգը: Ուստի պատահական չէ, որ բազմամշակութայնության ամուր ավանդույթներ ունեցող երկրներում, որտեղ բազմամշակութայնությունը քաղաքական մշակույթի ուրույն մաս է, սփյուռքի գործունեության համար առավել մեծ հնարավորություններ կան, ինչպես օրինակ՝ Կանադայում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Ավստրալիայում և այլն:

**Վերն ասվածը թույլ է տալիս եզրակացնել, որ բազմամշակութայնության ֆենոմենը, ուղղակիորեն առնչվելով սփյուռքին, վերջինիս հնարավորություն է տալիս մասնակցելու ինստիտուցիոնալացված ինքնության քաղաքականության ապահովման գործընթացներին, որոնց հիմքի վրա էլ տեղի են ունենում սեփական ինքնության բնականոն արդիականացում և քաղաքակրթական չափման ապահովում:** Սփյուռքի բազմամշակութայնությունը հետազոտող Մոնիկա Ֆլուդերնիկը ԱՄՆ-ում անկախ սփյուռք ձևավորելու էթնիկ համայնքների հնարավորությունը համարում է ամերիկյան բազմակարծության և դրան հաջորդած բազմամշակութայնության

արդյունք<sup>176</sup>: Իր հերթին, կայուն սփյուռքն անխուսափելիորեն մաս է կազմելու միկրո- կամ մակրոմակարդակի քաղաքական գործընթացների՝ պայմանավորված իր կայացածության աստիճանով և ազդեցության մակարդակով: Սփյուռքն էլ քաղաքական գործունեության մեջ հիմնականում ներառվում է էթնիկ լոբբինգի ինստիտուտի միջոցով՝ որպես կանոն օգտագործելով այդ խմբերի արժեշահային համակարգի խնդիրները: Հետևաբար, բազմամշակութայնությունն ուղղակիորեն ազդում է էթնիկ լոբբինգի ինստիտուտի գործունեության և ապագայի կանխատեսման գործընթացների վրա:

Սույն աշխատանքում մեզ առավելապես հետաքրքրում է Եվրոպական միությունում բազմամշակութայնության քաղաքականության գաղափարաքաղաքական ազդեցությունը էթնիկ լոբբինգի ինստիտուտի վրա: Եվրոպական միությունը բազմամշակութայնության վերաբերյալ առանձին մշակված և հաստատված քաղաքականություն դեռևս չունի: 2016 թ. հրապարակված «Ընդհանուր տեսլական, համատեղ գործողություններ: Ավելի ուժեղ Եվրոպա» վերնագրով ԵՄ արտաքին և անվտանգային քաղաքականության գլոբալ ռազմավարությունը<sup>177</sup> ծավալուն անդրադարձ է կատարում Եվրոպական միության ընդհանուր անվտանգության համակարգին և ներքին, և արտաքին առումներով: Ռազմավարության մեջ բացակայում է ուղղակի անդրադարձը բազմամշակութայնությանը, հստակորեն առաջ է քաշվում **մուլտիլատերալիզմի** գաղափարը՝ այն շեշտադրմամբ, որ ԵՄ-ն կնպաստի իրավակարգի վրա հիմնված աշխարհակարգի ձևավորմանը և ՄԱԿ-ի կանոնադրության շրջանակներում մուլտիլատերալիզմի հիմնական սկզբունքների իրականացմանը<sup>178</sup>: Այս առումով ուշագրավ է, որ Օբսֆոր-

---

<sup>176</sup> **Fludernik M.**, (edited by) *Diasporas and Multiculturalism, Common Traditions and New Developments*, Amsterdam-New York, 2003, p. XVII-XVIII.

<sup>177</sup> *Shared Vision, Common Action: A Stronger Europe. A Global Strategy for the European Union's Foreign and Security Policy*, June 2016, [https://www.eeas.europa.eu/sites/default/files/eugs\\_review\\_web\\_0.pdf](https://www.eeas.europa.eu/sites/default/files/eugs_review_web_0.pdf)

<sup>178</sup> Նույն տեղում, էջ 8:

դի բառարանում քննարկվում է մուլտիլատերալիզմի արժեքային բազմաչափությունը և կարևորվում է դրա քաղաքական էությունն ու բնույթը՝ որպես քաղաքական մոտեցում միջազգային առևտրին, արժույթային համակարգին, գինաթափմանը, անվտանգությանն ու շրջակա միջավայրին: Այն հիմնված է շահերի բախման կառավարման գործում միջազգային իրավունքի սուբյեկտների կոնսենսուսային և արդյունավետ գործունեության գաղափարի վրա<sup>179</sup>: Եթե բազմամշակութայնությունն առավելապես վերաբերում է ժողովուրդների խաղաղ գոյակցությանը, ապա մուլտիլատերալիզմը, որպես հակասությունների կառավարման գործիք, վերաբերում է պետությունների խաղաղ գոյակցությանն ու համագործակցայնության զարգացմանը: Մեր ուսումնասիրության շրջանակներում վերլուծելով ԵՄ հիմնադիր և Միության գործունեությունն ապահովող փաստաթղթերը<sup>180</sup>՝ վստահորեն կարող ենք արձանագրել, որ Եվրոպական միության պաշտոնական հայտագրերը, ի տարբերություն մուլտիլատերալիզմի, մուլտիկուլտուրիզմի վերաբերյալ հստակ կողմնորոշում չունեն: Պաշտոնական սակավաթիվ աղբյուրներից մեկը՝ Եվրոպական հանձնաժողովի միգրացիայի և տնային հարցերի տնօրինության պաշտոնական կայքը, բավարարվում է միայն բազմամշակութայնության սահմանմամբ և սակավաթիվ հղումներով<sup>181</sup>: Խնդիրն այլ է ակադեմիական հարթությունում, որտեղ Եվրոպական բազմամշակութայնությունը շա-

---

<sup>179</sup> **Brown G.W., McLean I., McMillan A.**, նշվ. աշխ., էջ 776:

<sup>180</sup> “Treaty establishing the European Coal and Steel Community”, “ECSC Treaty”, 18 April 1951, “Treaties of Rome: EEC and Euroatom treaties”, 25 March 1957, “Treaty on European Union-Maastricht Treaty”, 7 February 1992, “Treaty of Amsterdam”, 2 October 1997, “Treaty of Nice”, 26 February 2001, “Treaty of Lisbon”, 13 December 2007.

<sup>181</sup> European Commission, Directorate of Migration and Home Affairs, European Migration Network, Multiculturalism (definition), [https://home-affairs.ec.europa.eu/networks/european-migration-network-emn/emn-asylum-and-migration-glossary/glossary/multiculturalism\\_en](https://home-affairs.ec.europa.eu/networks/european-migration-network-emn/emn-asylum-and-migration-glossary/glossary/multiculturalism_en)

րունակում է մնալ բազմամակարդակ հետազոտման թեմա, քանի որ քաղաքական տուրբուլենտությունը պարբերաբար Եվրոպա է մղում ներգաղթյալների նորանոր ալիքներ:

Եվրոպական միությունը միատարր երևույթ չէ, և դա պայմանավորված է ոչ միայն միության բազմէթնիկ, բազմամշակույթ և բազմակրոն բնակչությամբ, այլև տարերային միգրացիոն հոսքերով, ինչն իր հերթին հաճախ ԵՄ քաղաքական կարգի խաթարման և մուլտիկուլտուրիզմի ձևական գոյության պատճառ է դառնում: Միգրացիոն քաղաքականության ոլորտում ԵՄ անդամ պետություններն ունեն տարբեր դիրքորոշումներ և ոլորտային կարգավորման տարբեր մեխանիզմներ: Եվրոպական բազմամշակութայնության զարգացմանը նպաստում է նաև տեղեկատվա-հաղորդակցական միջոցների և տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը, ինչը տարբեր խմբերի միջև խորացնում է կապն ու տեղեկացվածության աստիճանը:

Քաղաքական գիտության մեջ գնալով ավելի են ամրապնդվում եվրոպական բազմամշակութայնության ճգնաժամը որպես ներգաղթի քաղաքականության ձախողման արդյունք հիմնավորող թեզերը: Ներգաղթյալների ներկայիս հոսքը առաջինը չէ, որին բախվում է Եվրոպան նորագույն պատմության ընթացքում: Բայց, ի տարբերություն 1960-ականների ներգաղթի, որը տեղի ունեցավ Արևմտյան Եվրոպայում աշխատուժի պակասի պայմաններում, ժողովրդագրական ներկա տեղաշարժերը տեղի են ունենում Եվրոպայում գործազրկության որոշակի աճի պայմաններում: Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպան բանվորական ուժի կարիք ուներ՝ մայրցամաքը վերակառուցելու և տնտեսությունը վերականգնելու համար: Հետպատերազմյան ապագադրությամբ, ինչպես նաև պետականորեն ֆինանսավորվող աշխատավորական ծրագրերը էապես նպաստեցին ներգաղթյալների ներհոսքին: Նրանց ժամանումը Եվրոպա ողջունվեց, քանի որ ավելացված արժեքը խթանում էր տնտեսությունը, իսկ ներգաղթը, հասարակական-քաղաքական ընկալմամբ, ժամանակավոր երևույթ է: Արդեն



1980-ականներին, երբ աշխարհը թևակոխեց նեոլիբերալ գլոբալիզացիայի դարաշրջան, ներգաղթը նորովի կարևորվեց նեոլիբերալ շուկաների և բազմազգ կորպորացիաների շահերը սպասարկելու առումով: Հետևաբար, մինչև վերջերս Եվրոպան ողջունում էր ներգաղթյալներին՝ աշխատուժի պակասի խնդիրը լուծելու, տնտեսական առաջընթացի և նեոլիբերալ դարաշրջանում համաշխարհային մրցակցության մարտահրավերներին դիմակայելու համար<sup>182</sup>: Արդյունքում ԵՄ-ն և անդամ պետությունները բախվում են ներգաղթյալների բազմաթիվ փոքրամասնությունների ոչ միայն մշակութային, այլև քաղաքական, քաղաքացիական և քաղաքակրթական ինքնություններով պայմանավորված մարտահրավերներին հավասարաթեք պատասխանելու հիմնախնդրին: Դա էլ ստեղծել է բազմաթիվ անորոշություններ հատկապես չհիմնավորված նկրտումներով և բողոքի կրիչ (ինսուրգենտ) շահային խմբերի պահանջներով, որոնք շատ հաճախ հակասում են տվյալ երկրի իրավաքաղաքական ինստիտուցիոնալ կարգի պահպանմանը<sup>183</sup>: Փորձելով պատասխանել անորոշություններով հագեցած մարտահրավերներին՝ ԵՄ-ն զանազան նախաձեռնությունների միջոցով խթանում է միջմշակութային իրազեկվածության մակարդակի բարձրացումը: Դրանք, որպես կանոն, նպաստում են տարբեր մշակույթների և դրանք կրող շահային ու ճնշման խմբերի և մարդկանց միջև փոխգործակցության հաստատմանը՝ հաճախ լատենտ և մարգինալ դրսևորումներով:

Հանրագումարենք. Եվրոպայում էթնիկ լոբբինգի իրականացման գործընթացում բազմամշակութայնության դերը կարևորելու

<sup>182</sup> **Mikelatou A., Arvanitis E.**, Multiculturalism in the European Union: A Failure beyond Redemption? *The International Journal of Diversity in Organizations, Communities, and Nations: Annual Review*, V. 19. I. 1, 2009, 1–18.

<sup>183</sup> **Bell B., Machin S., Fasani F.**, – CreAM, Crime and Immigration: Evidence from Large Immigrant Waves, CReAM Discussion Paper No 12/10, May 2010, Crime and Immigration: Evidence from Large Immigrant Waves | European Website on Integration (europa.eu)

համատեքստում ակնհայտ է, որ **ԵՄ-ն, լինելով բազմամշակութայնության, ներմիութենական համերաշխության ապահովման և զանազան էթնիկ խմբերի պահանջմունքների բավարարման ջատագով, այնուամենայնիվ, կառավարման համապատասխան մեխանիզմներ չի երաշխավորում էթնիկ լոբբինգի կառուցվածքագործառնական և նեովարքաբանական շրջանակներում:** Սակայն, նկատի ունենալով նոր աշխարհակարգի անորոշություններն ու քաղաքական տուրբուլենտության օջախների անկանխատեսելիությունը, կարծում ենք, չպետք է անտեսել էթնիկ համայնքների պահանջմունքների բավարարման գործում բազմամշակութայնության ընձեռած հնարավորությունները, որոնք անուղակիորեն կարող են նպաստել էթնիկ լոբբիստական գործունեության զարգացմանը և ներգաղթյալների բնականոն ինտեգրմանը:

### **3.2 Լոբբինգի ինստիտուտի գործունեության իրավական հիմքերը Եվրոպական միության երկրներում**

Լոբբինգի վերաբերյալ Եվրոպական միության օրենսդրաիրավական և կառուցակարգային կարգավորումների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ **ԵՄ-ում հիմնականում նկատի է առնված ոչ թե էթնիկ լոբբինգը, այլ լոբբինգի այլ տարատեսակներ, ինչպիսիք են տնտեսական և սոցիալական լոբբինգը:** Սակարելի է բացատրել նրանով, որ Եվրոպական քաղաքական մշակույթը սփյուռքյան էթնիկ լոբբինգի ինստիտուտն առավելապես դիտում է շահերի խմբերի, այլ ոչ թե լոբբինգի համատեքստում:

Ավելին, Եվրոպական միությունը լոբբինգն ընկալում և բանաձևում է որպես հատուկ հետաքրքրությունների ներկայացման գործընթաց՝ հաճախ ակնհայտորեն խուսափելով «լոբբինգ» եզրույթի հաճախակի կիրառումից<sup>184</sup>: Ներեվրոպական փորձա-

---

<sup>184</sup> Հաշվի առնելով, որ «հետաքրքրությունների ներկայացում» ձևակերպման տակ ուղղակիորեն հասկացվում է նաև լոբբինգի գործընթացը, սույն աշխատանքում մեր կողմից օգտագործվող «լոբբինգ» եզրույթը վերաբերում է

գիտական ընկալման մեջ գործընթացի համար վերջնական եզրույթի օգտագործման շուրջ կոնսենսուս դեռևս չկա, ինչն ուղղակիորեն արձանագրված է Եվրոպական խորհրդարանի հետազոտությունների գլխավոր քարտուղարության կողմից պատրաստված՝ «Լոբբինգը Եվրոպական միությունում. ընթացիկ կանոններ և պրակտիկաներ» խորհրդատվական փաստաթղթում: Օգտագործվում են բազմաթիվ տերմիններ՝ շահագրգիռ խմբեր, ճնշման խմբեր, լոբբիներ, խթանման խմբեր և այլն: Այս տերմիններից յուրաքանչյուրը վերաբերում է շահերի ներկայացման որոշակի ասպեկտի: Այնուամենայնիվ, լոբբինգի ընկալումն ավելի հստակ է, քան այլ տերմիններինը, ինչպիսիք են, օրինակ, «հատուկ շահերի խմբերը»<sup>185</sup>:

ԵՄ մարմինները ձգտում են սերտ համագործակցության հասարակության լայն շրջանակների հետ: Այդ շփումները նպաստում են ԵՄ իշխանության մարմինների կողմից հասարակությանն առնչվող խնդիրների նույնականացմանն ու համապատասխան քաղաքականության մշակմանը: Եվրոպական բազմամշակութայնության և ժողովրդավարության համար քաղաքացիների ժողովրդավարական մասնակցայնությունը առանցքային գործոն է: Վերջինս, մասամբ հենվելով անցյալում ստորագրված ԵՄ այլ հիմնադիր փաստաթղթերի համապատասխան դրույթների հետ, առարկայացավ և տեղ գտավ ԵՄ Լիսաբոնի պայմանագրի 8-րդ «ա» հոդվածում<sup>186</sup>՝ «Միության գործունեությունը պետք է հիմնված լինի ժողովրդավարական մասնակցայնության վրա»: Նույն հոդվա-

---

աշխատանքի առաջին հատվածում քննարկված գործընթացին՝ անկախ դրա ներելրոպական ընկալումից:

<sup>185</sup> Lobbying in the European Union: Current Rules and Practices”, EP Directorate-General for Research, Luxembourg, European Parliament, 2003, p. 2. [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2003/329438/DG-4-AFC\\_O\\_ET\(2003\)329438\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/etudes/join/2003/329438/DG-4-AFC_O_ET(2003)329438_EN.pdf)

<sup>186</sup> Treaty of Lisbon amending the Treaty on European Union and the Treaty establishing the European Community, signed at Lisbon, 13 December 2007, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=OJ:C:2007:306:FULL&from=EN>

ծի երկրորդ կետով քաղաքացիների ուղիղ ներկայացվածությունն ապահովվում է Եվրոպական խորհրդարանի միջոցով: Հենց Եվրոպական խորհրդարանն է, որ գրեթե ամբողջությամբ իր վրա է բևեռում Եվրոպական միության ղեկավար հաստատություններում լոբբինգ իրականացնող կազմակերպությունների ուշադրությունը:

Թեև լոբբինգի հիմնական հասցեատերը խորհրդարանն է, այնուամենայնիվ, լոբբինգի կարգավորումների իրավապայմանագրային և կառուցակարգային հստակեցումները սահմանող փաստաթղթերը վերաբերում են ինչպես Եվրոպական խորհրդարանում գործընթացի կարգավորմանը, այնպես էլ ԵՄ իշխանության գործադիր հատվածին՝ ի դեմս Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական միության խորհրդի:

Եվրոպական միության բարձրագույն մարմիններն առնչվում են կազմակերպությունների և խմբերի հսկայական շրջանակի հետ, որոնք հետապնդում են որոշակի հետաքրքրություններ: Ընդհանուր առմամբ, պաշտոնական տվյալներով Բրյուսելում հաստատված է շուրջ 30.000 նման շահառու<sup>187</sup>: Այս հետաքրքրությունները կարևոր տեղ են զբաղեցնում ԵՄ որոշումների կայացման ժողովրդավարական համակարգում: Դրանք նաև կարևոր են ԵՄ քաղաքականությունը սոցիալական տարբեր խմբերի որոշակի խնդիրների լուծմանը ծառայեցնելու տեսանկյունից:

Եվրոպական միությունում լոբբինգ իրականացնող կազմակերպություններն ունեն ազգային, եվրոպական և միջազգային բնույթ: Այդ կազմակերպությունների գործունեությունը եվրոպական հասարակական-քաղաքական, ինչպես նաև փորձագիտական ընկալման մեջ նախևառաջ ասոցացվում է տնտեսական ու հասարակական գործունեության, մասնավոր ձեռնարկատիրության, իրավաբանական կազմակերպությունների, հանրային խնդիրների խթանման հետ: Լոբբիստական խմբերի ուշադրությունն առանձնապես կենտրոնացած է ընդհանուր գյուղատնտեսական քաղա-

---

<sup>187</sup> European Transparency Register, <https://www.youtube.com/watch?v=SJW-uXNhme0>

քականության, Առևտրի համաշխարհային կազմակերպության, հեռահաղորդակցության, սննդի անվտանգության, հանրային առողջության ու տրանսպորտի վրա<sup>188</sup>:

Այնուամենայնիվ, լոբբինգի գործընթացը պետք է լինի թափանցիկ, հանրության կողմից վերահսկելի և ԵՄ ինստիտուտներին հնարավորություն տա հաշվետու լինելու քաղաքացիների առջև: Բացի այդ, անհրաժեշտ է հնարավորինս կանխել իշխանության թևերի վրա անհարկի ճնշումները, պաշտպանված տեղեկատվության արտահոսքը և հավասարակշռել տարբեր խմբերի ներկայացվածությունը:

Առկա մտահոգությունները հաշվի առնելով՝ Եվրոպական խորհրդարանը, Եվրոպական հանձնաժողովը և ԵՄ խորհուրդը 2011 թ. ստեղծել են **«Թափանցիկության ռեգիստր» (Transparency Register) հարթակը:**

«Թափանցիկության ռեգիստրը» ԵՄ քաղաքականության և որոշումների կայացման գործընթացի վրա ազդեցություն հետապնդող կազմակերպությունների, միավորումների, խմբերի, նաև անհատ գործիչների տվյալների շտեմարան է: Այստեղ նախատեսված է հրապարակել, թե համաեվրոպական մակարդակում ինչ հետաքրքրություններ են ներկայացվում, ում կողմից, ում անունից, ինչ ռեսուրսներով՝ ներառյալ ֆինանսական օժանդակությունը, նվիրատվությունները և հովանավորներին:

Շտեմարանն ունի հետևյալ երեք բաղադրիչները.

- հանրային համացանցային կայք, որտեղ իրենց շահերը հետապնդող սուբյեկտները ներկայացնում են թարմ տեղեկություն ԵՄ-ում իրենց գործունեության վերաբերյալ,
- վարվեցողության կանոններ, թե ինչպես սուբյեկտները պետք է հարաբերվեն ԵՄ ինստիտուտների հետ,
- բողոքարկման մեխանիզմ, որը թույլ է տալիս վարչական

---

<sup>188</sup> Lobbying in the European Union: Current Rules and Practices”, EP Directorate-General for Research, Luxembourg, European Parliament, 2003, p. 2.

հետաքննություն սկսել վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ:

Շտեմարանը ղեկավարվում է կառավարման խորհրդի և քարտուղարության կողմից, որոնց աշխատակազմը ներառում է Եվրոպական խորհրդարանի, ԵՄ խորհրդի և հանձնաժողովի ներկայացուցիչների<sup>189</sup>:

«Թափանցիկության ռեգիստրի» գործունեության իրավական հենքը Եվրոպական միության երեք ղեկավար հաստատությունների միջև 2011 թ. կնքված **միջհաստատութենական (interinstitutional) պայմանագիրն է**, որը վերանայվել է 2014 և 2021 թվականներին: Այդ պայմանագրի դրույթների վերահսկողությունը, «Թափանցիկության ռեգիստրի» կարիքների և առաջնահերթությունների հստակեցման լիազորությունը, ինչպես նաև ռեգիստրի տարեկան գեկույցի ընդունման և քարտուղարության աշխատանքը համակարգելու իրավասությունը պատկանում է կառավարման խորհրդին:

Կառավարման խորհուրդը համապատասխան դիմումի առկայության պարագայում կարող է նաև ընթացք տալ հետաքննությունների: ԵՄ հաստատությունները կարող են դիմել խորհրդին թափանցիկության ապահովմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ձեռնարկման համար: Կառավարման խորհուրդը կազմված է Եվրոպական խորհրդարանի, Եվրոպական հանձնաժողովի և ԵՄ խորհրդի գլխավոր քարտուղարներից, որոնցից յուրաքանչյուր մեկական տարով կառավարում է խորհրդի աշխատանքները:

Խորհրդարանի, խորհրդի և հանձնաժողովի գլխավոր քարտուղարները միասին կազմում են կառավարման խորհուրդը: Նրանք հանդիպում են առնվազն տարին մեկ անգամ, և յուրաքանչյուր գլխավոր քարտուղար նախագահում է մեկ տարի ժամկետով:

---

<sup>189</sup> What is the Transparency Register? [https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do?locale=en&reference=WHY\\_TRANSPARENCY\\_REGISTER](https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do?locale=en&reference=WHY_TRANSPARENCY_REGISTER)

Քարտուղարությունը պատասխանատու է «Թափանցիկության ռեգիստրի» ամենօրյա կառավարման համար: Քարտուղարությունը մշակում է գրանցման ուղեցույցներ, վերահսկում դիմորդների և գրանցվողների դիմումները, վարում ռեգիստրի գրանցամատյանը, ինչպես նաև մշակում է գրանցվողների կողմից վարքագծի կանոնները չպահպանելու վերաբերյալ բողոքները, պատրաստում տարեկան հաշվետվությունը և բարձրացնում ռեգիստրի մասին հանրային իրազեկվածությունը<sup>190</sup>:

«Թափանցիկության ռեգիստրի» գործունեության շրջանակում կարևորագույն ուղղություններից են միջհաստատութենական պայմանագրի մաս կազմող առաջին հավելվածով սահմանված վարկեցողության և էթիկայի կանոնները, որոնք գրանցված սուբյեկտների համար և ԵՄ հաստատությունների հետ շփումներում ենթակա են համապարտադիր կատարման: Հակառակ դեպքում սուբյեկտը կդադարի շտեմարանում գրանցված մնալ:

Մասնավորապես, լրբփստական կազմակերպությունները պետք է Եվրոպական միության բոլոր հաստատությունների հետ շփումներում ներկայանան սեփական անվամբ, գրանցման համարով, ներկայացնեն այն սուբյեկտին կամ սուբյեկտներին, որոնց անունից հանդես են գալիս, ինչպես նաև հայտարարեն իրենց գործունեության նպատակներն ու հետաքրքրությունները և իրենց պատվիրատուների տվյալները: Գրանցված սուբյեկտները չպետք է տեղեկություն ձեռք բերեն կամ հասնեն իրենց համար նպաստավոր որոշումների կայացման՝ կիրառելով ոչ պատշաճ վարքագիծ կամ անհարկի ճնշումներ, մասնավորապես՝ չօգտագործեն վիրավորանք, առևտրային շահի համար չհարաշահեն իրենց գրանցումը, չվնասեն ռեգիստրի հեղինակությունը, չօգտագործեն ԵՄ կառույցների տարբերանշանները՝ առանց վերջիններիս հետ համաձայնեցնելու:

---

<sup>190</sup> Governance structure of the “Transparency Register”, <https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do?locale=en&reference=GOVERNANCE>

Ռեգիստրում գրանցում ստացածները պետք է ապահովեն գրանցման ժամանակ տրամադրված և հետագայում թարմացվող տեղեկության ճշգրտությունը և հանրային հասանելիության համաձայնությունը: Նրանք պետք է հարգեն ԵՄ օրենսդրական կարգավորումները, տարբեր հաստատությունների նախկին աշխատակիցների հետ հարաբերություններում՝ նրանց տիրապետության տակ գտնվող պաշտպանված տեղեկությունը չհրապարակելու պարտավորությունը: Եթե առկա են պատվիրատու-միջնորդ հարաբերություններ, ապա գրանցված սուբյեկտները սահմանված կարգով պետք է ապահովեն պատվիրատուի վերաբերյալ տեղեկության ներկայացումը: Քարտուղարության համապատասխան պահանջի դեպքում գրանցված կազմակերպությունները պետք է ներկայացնեն իրենց գործունեությանն առնչվող ամբողջական տեղեկություն, համաձայնեն հետաքննական մեխանիզմների գործադրմանը: Կազմակերպությունները պետք է հարգեն ԵՄ հաստատություններ մուտքի և անվտանգության կանոններն ու կազմակերպական կարգավորումները<sup>191</sup>:

Հատկանշական է, որ «լոբբինգ» եզրույթը միջհաստատութենական պայմանագրում չի գործածվում, համարժեք տերմինը «շահերի ներկայացուցիչն» է, որը պայմանագրի 2-րդ հոդվածում մեկնաբանվում է որպես «ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ֆորմալ կամ ոչ ֆորմալ խումբ, ասոցիացիա կամ ցանց», որը զբաղվում է պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանված գործունեությամբ, այն է՝ **շահերի ներկայացուցիչների կողմից ազդեցության գործադրումը քաղաքականության կամ օրենսդրության ձևավորման և իրականացման վրա, ստորագրվող փաստաթղթերի կամ Միության այլ հաստատությունների, մարմինների, գրասենյակների և գործակալությունների որոշումների վրա:** Մասնավորապես՝

---

<sup>191</sup> “Code of conduct of the EU Transparency Register, [https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do?reference=CODE\\_OF\\_CONDUCT&locale=en](https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do?reference=CODE_OF_CONDUCT&locale=en)



- հանդիպումների, կոնֆերանսների կամ միջոցառումների կազմակերպում կամ մասնակցություն, ինչպես նաև ներգրավում Միության հաստատությունների հետ նմանատիպ կապերում,
- խորհրդատվություններին, լսումներին կամ նման այլ նախաձեռնություններին նպաստելը կամ մասնակցելը,
- հաղորդակցման արշավների, հարթակների, ցանցերի և համայնքային նախաձեռնությունների կազմակերպում,
- քաղաքականության և դիրքորոշումների վերաբերյալ փաստաթղթերի, ուղղումների և լրացումների, սոցիալական և այլ հարցումների, բաց նամակների և հաղորդակցման կամ տեղեկատվական այլ նյութերի պատրաստում, օգտագործում, ինչպես նաև հետազոտությունների իրականացում և տրամադրում<sup>192</sup>: Նկատենք, որ պայմանագրում միայն մեկ անգամ օգտագործվող «համայնքային» (grassroots) տերմինը, որպես կանոն, կիրառելի է էթնիկ համայնքային լոբբիստական գործունեության շրջանակներում:

Պայմանագիրը սահմանում է գործողությունների մի ամբողջ խումբ, որի վրա պայմանագրի դրույթները չեն տարածվում: Մասնավորապես, գրանցված սուբյեկտները պետք է խուսափեն այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել ԵՄ իրավական և կազմակերպական ընթացակարգերը, հետապնդել մասնավոր կամ անձնական շահ: Պայմանագիրը չի տարածվում այնպիսի մարմինների վրա, ինչպիսիք են ԵՄ անդամ պետությունները, նրանց դեսպանատներն ու ներկայացուցչությունները, պետական իշխանության լիազորությամբ գործող միություններն ու ցանցային կազմակերպությունները, միջկառավարական կազմա-

---

<sup>192</sup> Interinstitutional Agreement of 20 May 2021 between the European Parliament, the Council of the European Union and the European Commission on a mandatory transparency register, [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv:OJ.L\\_.2021.207.01.0001.01.ENG](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=uriserv:OJ.L_.2021.207.01.0001.01.ENG)

կերպություններն ու գործակալությունները, քաղաքական կուսակցությունները: Բացառություն են կազմում այն կազմակերպությունները, որոնք ստեղծված կամ փոխկապակցված են քաղաքական կուսակցությունների հետ, եկեղեցիներն ու կրոնական միավորությունները կամ համայնքները, ինչպես նաև փիլիսոփայական և ոչ դավանանքային կազմակերպությունները:

Ինչ վերաբերում է միգրացիոն հոսքեր-էթնիկ լոբբինգ հարաբերակցությանը, ապա, ինչպես տեսանք սույն աշխատության համապատասխան հատվածներում, էթնիկ լոբբինգի ինստիտուտի գործունեության արդյունավետությունն անուղղակիորեն կարող է պայմանավորվել ընդունող պետության բազմամշակութային բնույթով, ինչն էապես դրսևորվում է վերջինիս միգրացիոն քաղաքականությամբ: Հետևաբար Եվրոպական միության անդամ պետությունների միգրացիոն հիմնական ցուցանիշների վերլուծությունը թեև արժեքավոր է այն ընդհանուր իրավիճակը հասկանալու համար, որտեղ հայկական լոբբին գործում է, այնուամենայնիվ, ամբողջական չէ: Խնդիրն այն է, որ թեև միգրացիոն հոսքերն ազդում են սփյուռքի քաղաքական դերի բարձրացման վրա, սակայն որոշակի ժամանակ է պետք, որ միգրանտները, հարմարվելով նոր պայմաններին, կենտրոնանան իրենց հայրենի պետություններին օժանդակություն ցուցաբերելու վրա:

Անդրադառնալով Եվրոպական խորհրդարանում լոբբինգի ընթացակարգին, պետք է ասել, որ ԵՄ Լիսաբոնի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպական խորհրդարանի իրավազորության շրջանակն ընդլայնվեց՝ ներառելով նաև գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության որոշ մեխանիզմներ: Խորհրդարանն էլ ավելի շատ սկսեց հայտնվել լոբբիստական կազմակերպությունների ուշադրության տիրույթում: Դրան նաև նպաստում է խորհրդարանի անկախ բնույթը, պատգամավորների կաշկանդված չլինելը ինչպես ԵՄ գործադիր իշխանության, այնպես էլ անդամ երկրների քաղաքականությամբ:

Եվրոպական խորհրդարանում գործում է լոբբիստների հավատարմագրման և ռեեստրի վարման հատուկ համակարգ, որտեղ

լոբբիստները մանրամասն տեղեկատվություն են ներկայացնում իրենց գործունեության ոլորտի, ուղղությունների ու նպատակների վերաբերյալ և ստանում ԵՄ խորհրդարան մուտք գործելու թույլտվություն, որը տարին մեկ անգամ ենթակա է թարմացման<sup>193</sup>:

Եվրոպական խորհրդարանն իր հերթին ունի պատգամավորների վարքագծի կանոններ, որոնք ուժի մեջ են մտել 2012 թ. հունվարին: Եվրախորհրդարանի պատգամավորների վարքագծի կանոններ ներդնելու որոշումը կայացվեց 2011 թվականի «cash-for-laws» անունը ստացած լոբբիստական սկանդալից հետո, երբ չորս խորհրդարանականներ մեղադրվեցին «Sunday Times»-ի լրագրողներից գումար վերցնելու մեջ. լրագրողները ներկայացել էին որպես լոբբիստներ և նպատակ ունեին խորհրդարանականների միջոցով ազդելու բանկային բարեփոխումների օրենսդրության վրա: Կապ հաստատելով Եվրախորհրդարանի շուրջ 60 պատգամավորների հետ՝ այդ լրագրողները փորձել էին կաշառել նրանց կանխիկ գումարով՝ ԵՄ օրենսդրության նախագծերում փոփոխություններ կատարելու համար: Մեղադրանք էր առաջադրվել Եվրախորհրդարանի չորս պատգամավորի, որոնցից երեքն ընդունել էին հանցանքը<sup>194</sup>:

Վարքագծի կանոնների հիմնական սկզբունքը թափանցիկությունն է: Այն պահանջում է, որ Եվրախորհրդարանի պատգամավորները հայտարարեն ԵԽ-ից դուրս իրենց վճարովի գործունեության և այն գործառույթների մասին, որոնք կարող են շահերի բախում առաջացնել: Կանոնագիրքը նաև սահմանում է երրորդ անձանց կողմից Եվրախորհրդարանի պատգամավորներին առաջարկվող նվերների, վարձատրության և հրավերների ընդունման դրույթները: Պատգամավորներից պահանջվում է հրաժարվել 150 եվրոն

---

<sup>193</sup> EP accreditation, [https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do; TRPUBLIC-ID-prod=IV\\_CkuKAYbrctFxFAQKGUu6vwxU\\_D7DctDj1wjPyz5d1nOiiGo!1540374828?locale=en&reference=EP\\_ACCREDITATION](https://ec.europa.eu/transparencyregister/public/staticPage/displayStaticPage.do; TRPUBLIC-ID-prod=IV_CkuKAYbrctFxFAQKGUu6vwxU_D7DctDj1wjPyz5d1nOiiGo!1540374828?locale=en&reference=EP_ACCREDITATION)

<sup>194</sup> **Dionigi K.M.**, “Lobbying in the European Parliament: The Battle for Influence”, Think Tank Europa, Copenhagen, 2017, p. 18.

գերազանցող ցանկացած նվերից կամ նպաստից, որը ստացվել է իրենց պարտականությունների կատարման ընթացքում: Ուղղակի ծախսերի փոխհատուցումը նվեր չի համարվում, պայմանով, որ պատգամավորները, օրինակ, որևէ միջոցառման ներկա գտնվեն պաշտոնական հրավերով: Վարքագծի կանոնները խախտող պատգամավորների նկատմամբ կարող են տույժեր սահմանվել: Դրանք հայտարարվում են նախագահի կողմից լիազուրկար նիստում և հրապարակվում են խորհրդարանի կայքում՝ պահպանվելով խորհրդարանական գումարման ողջ ժամկետում<sup>195</sup>:

Եվրոպական խորհրդարանում լրբիստական գործունեության ազդեցության շղթան ներառում է իրավաստեղծ գործընթացի հիմնական երեք փուլերը՝ **նախագիծ, բարելավում, քննարկում/քվեարկում**:

Որպես կանոն՝ Եվրոպական խորհրդարանում լրբիստական գործունեության ամենաակտիվ փուլը, երբ նաև բախվում են տարբեր լրբիստական խմբերի շահեր, բարելավումների (amendements) փուլն է: Բարելավումների վերաբերյալ առաջարկները հաճախ գրվում են ոչ թե պատգամավորական աշխատասենյակներում, այլ լրբիստական կազմակերպություններում, ապա տրամադրվում են համագործակից պատգամավորին, որն էլ ներկայացնում է Խորհրդարանում: Այս գործընթացից հետո են միայն լրբիստական խմբերը կենտրոնանում վերջնական քննարկումների և քվեարկության վրա: Մինչ այդ, բացի փոփոխությունների փուլից, լրբիստները, որպես կանոն, աշխատում են նաև տարբեր հարցերով ներգրավված զեկուցողների (rapporteur), «ստվերային զեկուցողների» (shadow rapporteur) և խմբերի համակարգողների (group coordinator) հետ, որոնք առանցքային դեր ունեն իրավական ակտերի վերջնական տեքստերի պատրաստման և ընդունման գործում<sup>196</sup>: Այս ողջ աշխատանքը կատարվում է Եվրոպական խորհրդարանի մշտական հանձնաժողովների մակարդակով, որոնք էլ Խորհրդարանի քաղաքական դիրքորոշման ձևավոր-

<sup>195</sup> Նույն տեղում:

<sup>196</sup> Նույն տեղում, էջ 26–30:

ման նախնական, բայց վճռորոշ օղակներ են: Իրավաստեղծ գործունեությանը զուգահեռ լրբբիստական խմբերն ազդում են նաև Խորհրդարանի քաղաքական մթնոլորտի վրա՝ համագործակից պատգամավորների միջոցով կազմակերպելով քննարկումներ, տարաբնույթ միջոցառումներ, ցուցահանդեսներ, լսումներ և այլն:

Այսպիսով, Եվրոպական խորհրդարանը լրբբինգի իրականացման տեսանկյունից ԵՄ բարձրագույն իշխանության ամենաբաց կառույցն է, լրբբինգն էլ ԵՄ ինստիտուտներից ամենամեծ ազդեցությունն ունի հենց Խորհրդարանի վրա: Որպես կանոն՝ լրբբիստական խմբերի նպատակը առավել երկարաժամկետ քաղաքական համագործակցությունն է և Խորհրդարանում իմիջ ձևավորելը, ինչը ենթադրում է աշխատանք ինչպես Խորհրդարանի անդամների հետ, այնպես էլ Խորհրդարանի, քաղաքական խմբերի ու հանձնաժողովների աշխատակազմերի, որոնց ներկայացուցիչները, ի տարբերություն պատգամավորների, ընտրովի պաշտոնյաներ չեն և երկարաժամկետ կտրվածքում դառնում են ինստիտուցիոնալ հիշողության կրողներ ու վստահելի գործակիցներ:

**Լրբբիստական գործունեության իրավակարգավորումների վերաբերյալ ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրություններն** առաջարկում են տարբեր մոտեցումներ, որոնք դասակարգվում են հետևյալ կերպ.

- **պետություններ, որոնք լրբբինգի վերաբերյալ ունեն պարտադիր ուժ ունեցող կարգավորումներ՝** Ավստրիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Լիտվա, Լեհաստան, Սլովենիա, Մեծ Բրիտանիա<sup>197</sup>,
- **պետություններ, որոնք ունեն լրբբինգի վերաբերյալ փափուկ-խթանիչ կարգավորումներ՝** Բելգիա, Գերմանիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Ռումինիա,
- **պետություններ, որոնք լրբբինգի վերաբերյալ առանձին**

---

<sup>197</sup> Ռեգիոնալ մակարդակում լրբբինգի վերաբերյալ պարտադիր կարգավորումներ ունեն Կատալոնիան և Շոտլանդիան:

**կարգավորումներ չունեն և առաջնորդվում են ոլորտային կարգավորումներով:** Այդպիսի պետություններից են Խորվաթիան, Չեխիան, Դանիան, Ֆինլանդիան, Լատվիան, Իսպանիան, Շվեդիան: Բուլղարիայում, Էստոնիայում, Մալթայում, Պորտուգալիայում, Սլովակիայում համապատասխան օրենսդրությունը հիմնականում ներդրման փուլում է:<sup>198</sup>:

**Եվրոպական միությունում լոբբինգի տեխնոլոգիական գործընթացը** ենթադրում է հետևյալ փուլերը՝ փաստահավաք աշխատանք, վերլուծություն, ազդեցության գործադրում, հետևողականություն:

Համաեվրոպական մակարդակում լոբբիստական գործունեություն սկսելու առաջին քայլը ԵՄ հաստատությունների և տարբեր ասոցիացիաների ներսում տեղեկատվական ցանցի ստեղծումն է, ինչը կարող է ապահովել ընթացիկ տեղեկատվության հասանելիություն: Որքան շուտ է լոբբիստը միջամտում օրենսդրական գործընթացին, այնքան ավելի մեծ է նրա արդյունավետությունը: Որպես լոբբիստական գործունեության թիրախ՝ հաճախ ընտրվում են եվրոպական հաստատությունների փորձագետները և ավելի ցածր մակարդակի պաշտոնյաները, քանի որ առաջին հերթին հենց նրանք են զբաղվում օրենսդրության մշակման գործով: Բարձրաստիճան պաշտոնյաներին դիմում են միայն այն դեպքում, երբ առկա են դժվարություններ կամ քաղաքական որոշման անհրաժեշտություն: Լոբբիստները սեփական հեղինակության բարձրացման համար կարևորում են այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են ապրանքների և մարդկանց ազատ տեղաշարժը, սոցիալական համախմբվածությունը, զբաղվածությունը և մրցունակությունը, որոնց վրա հիմնված են եվրոպական օրենսդրությունն ու նախաձեռնությունները:

---

<sup>198</sup> Transparency of lobbying in Member States, Comparative analysis, European Parliamentary Research Service, 2019. <https://www.europarl.europa.eu/EPRS/Lobbying-transparency-comparative-analysis.pdf>

Եվրոպական միությունում լոբբիստները հաճախ չեն դիմում ուղղակի և բացահայտ լոբբիստական գործողությունների՝ փորձելով այս կամ այն շահերի պաշտպանության գործընթացն առաջ մղել որոշակի քայլերի հաջորդականության և դրանց արդյունքում ստեղծված միջավայրի միջոցով: Մասնավորապես.

**Մթնոլորտի ստեղծում,** երբ հնարավոր է որոշում կայացնողների հետ անխոչընդոտ հանդիպումներ ունենալ ոչ միայն նրանցից բարենպաստ որոշումներ կորզելու, այլև ուղղակի երկխոսությունը պահպանելու և երկուստեք վստահություն ստեղծելու համար:

**Մշտադիտարկման իրականացում,** երբ լոբբիստական որոշակի հետաքրքրություն ունեցող խմբերը մանրամասն ուսումնասիրում են իրենց ոլորտներին վերաբերող անցուդարձը: Այն հաճախ ավելի բարդ գործընթաց է, քան մամուլի հաղորդագրությունների և օրենսդրական տեղեկանքների վերլուծությունը, քանի որ ենթադրում է հրապարակման ոչ ենթակա տեղեկատվությանը հասանելիություն ունենալու և, ըստ այդմ, քաղաքականությունը վերլուծելու և կանխատեսելու փորձ:

**Հաղորդակցություն քաղաքականություն մշակողների հետ:** Այս գործընթացն առավելապես հիմնված է մշտադիտարկման արդյունքների վրա և նպատակ ունի մշտական բովանդակային կապ ապահովելու որոշում կայացնողների հետ՝ օրենսդրական փոփոխությունների առաջարկների, փորձագիտական խորհրդատվությամբ ապահովելու և այլ միջոցներով:

**Շահերի պաշտպանություն և ազդեցություն:** ԵՄ-ում լոբբիստների, որպես կանոն՝ առևտրային լոբբիստների մեծ մասը կարծում է, թե իրենք բավարար չափով ներգրավված չեն շահերի պաշտպանության գործում: Լոբբիստը մշակում է ռազմավարություն և կազմակերպում արշավ, սակայն հաճախորդն է առաջին հերթին ուղերձն ուղղակիորեն փոխանցում քաղաքական գործիչներին և պաշտոնյաներին: Ավելի հաճախ առևտրային լոբբիստները նշում են, որ իրենց դերը խորհրդատվություն տալն է, թե հա-

ճախորդներն ինչպես վարվեն քաղաքականություն մշակողների հետ<sup>199</sup>:

Այսպիսով, թեև ինչպես ԵՄ ղեկավար կառույցները, այնպես էլ որոշ անդամ պետություններ ունեն լոբբինգի վերաբերյալ օրենսդրահրավական և ինստիտուցիոնալ մանրամասն կարգավորումներ և թափանցիկության ապահովման իմպերատիվ մեխանիզմներ, այնուամենայնիվ, դրանք առանձնապես չեն կարգավորում էթնիկ լոբբիստական խմբերի գործունեությունը: **Հետևաբար էթնիկ լոբբիստական խմբերը ստիպված են օգտագործել քաղաքացիական հասարակության ինստիտուտների ընձեռած հնարավորությունները և իրենց էթնիկ պատկանելությունից բխող գործունեությունը ներկայացնել որպես քաղաքացիական հասարակության մի խմբի ծայր:** Ինչպես Եվրոպական միության իշխանության մարմինների հետ լոբբիստական գործունեություն վարելու համար, այնպես էլ առանձին պետությունների պարագայում, կարևոր է ճիշտ ընտրված կազմակերպա-իրավական ձևը, որն այս դեպքում բնորոշ է շահույթ հետապնդող ոչ կառավարական կազմակերպություններին (NGO):

**Եվրոպական քաղաքական մշակույթում էթնիկ լոբբինգի ինստիտուտը որպես քաղաքական կատեգորիա չի ընկալվում,** իսկ լոբբիստական կարգավորումները հարմարեցված են առևտրային, տնտեսական և սոցիալական լոբբինգների համար: Կրոնական կազմակերպությունների պարագայում ևս լոբբիստական գործունեությունն ընդունելի չէ:

Լոբբինգի եվրոպական ընկալումներում արմատացած է նաև «պատվիրատուի» ինստիտուտը, ինչը պայմանավորված է լոբբինգի գործընթացի առավելապես սոցիալ-տնտեսական և առևտրային դրսևորումներով, ինչը կիրառելի չէ էթնիկ լոբբինգի պարագայում:

---

<sup>199</sup> Lobbying in the European Union: Current Rules and Practices”, EP Directorate-General for Research, Luxembourg, European Parliament, 2003, p. 18.



Այնուամենայնիվ արձանագրենք, որ էթնիկ լոբբիստական խմբերի համար Եվրոպական միության՝ լոբբինգի վերաբերյալ կարգավորումները օրենսդրաիրավական և ինստիտուցիոնալ խոչընդոտներ չեն ստեղծում: Առկա դժվարությունները պայմանավորված են բացառապես եվրոպական քաղաքական մշակույթի կողմից էթնիկ լոբբինգի՝ իբրև քաղաքական կատեգորիա ընկալմամբ կամ տարընկալմամբ: Այդուհանդերձ, հասարակական կազմակերպություններին տրվող արտոնությունները համայնքային բնույթի հասարակական կազմակերպություններին հնարավորություն են տալիս իրականացնելու էթնիկ լոբբիստական գործունեություն՝ օգտվելով առհասարակ լոբբինգի վերաբերյալ ԵՄ հնարավորություններից:

### **3.3 Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում**

Համաեվրոպական մակարդակում գործող հայկական լոբբին, ինչի հիմնական դերակատարը ՀՅԴ Հայ դատի Եվրոպայի գրասենյակն է (European Armenian Federation for Justice and Democracy), ԵՄ ղեկավար կառույցներից հիմնականում աշխատում է Եվրոպական խորհրդարանի հետ՝ հաշվի առնելով լոբբիստական խմբերի նկատմամբ Եվրոպական խորհրդարանի համեմատաբար բաց լինելը, ինստիտուցիոնալ հնարավորությունները և առհասարակ խորհրդարանի ներկայացուցչական բնույթը: Ինչպես նշեցինք նախորդ ենթագլխում, խորհրդարանական ընթացակարգերը լավագույնն են լոբբիստական խմբերի հետաքրքրությունները ներկայացնելու համար: Հայ դատի Եվրոպայի գրասենյակի գործունեության ուղղություններից էլ պարզ է դառնում, որ այս կառույցի աշխատանքները հատուկ խորհրդարանական ուղղվածություն ունեն: Մասնավորապես, իբրև գործունեության ուղղություն է նշվում օժանդակությունը հայկական խորհրդարանական դիվանագիտությանը՝ Եվրոպական խորհրդարանի, Եվրանեսթ

խորհրդարանական վեհաժողովի, ՀՀ-ԵՄ խորհրդարանական համագործակցության կոմիտեի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հետ միջխորհրդարանական հարաբերություններում<sup>200</sup>:

Եվրոպական խորհրդարանում Հայ դատի Եվրոպայի գրասենյակի աշխատանքային ուղղություններն են՝

- 1) Խորհրդարանի կողմից հայանպաստ բանաձևերի առաջմղում նախորդ ենթակետում ներկայացված ողջ օրենսդրական գործընթացում՝ նախագծումից մինչև քվեարկում
- 2) Օրենսդրական բարելավումների (amendments) ներկայացում
- 3) Հայաստանին ու Արցախին առնչվող օրենսդրական գործընթացի մշտադիտարկում
- 4) Ադրբեջանա-թուրքական լոբբիստական կառույցներին հակազդում
- 5) Օրենսդրական այնպիսի փոփոխությունների կանխարգելում, որոնց հետևում կանգնած է ադրբեջանական լոբբին
- 6) Եվրոպական խորհրդարանի և ՀՀ Ազգային ժողովի միջև միջխորհրդարանական կապերի զարգացում Համագործակցության կոմիտեի շրջանակներում
- 7) Եվրոպական խորհրդարանի պատգամավորների կողմից ԵՄ գործադիր իշխանության ղեկավարությանը պատգամավորական հարցումներով ապահովում
- 8) Հայաստանի համար հետաքրքրություն ունեցող հարցերում պատգամավորական ստորագրահավաքների ապահովում
- 9) Եվրոպական խորհրդարանում Հայաստանի հետ բարեկամության խմբի ձևավորում և ընդլայնում
- 10) Եվրոպական խորհրդարանում Արցախի հետ բարեկամության խմբի ձևավորում և ընդլայնում
- 11) Խորհրդարանական պատմիրակությունների և փաստա-

---

<sup>200</sup> EAFJD, Brussels headquarters, <https://eafjd.eu/brussels-headquarters/>

հավաք առաքելությունների այցելություններ Հայաստան և Արցախ

- 12) Պարբերաբար հանդիպումներ խորհրդարանականների հետ՝ բարեկամների շրջանակն ընդլայնելու համար
- 13) Խորհրդարանում հանրային լսումների կազմակերպում հայությանը հետաքրքրող թեմաներով
- 14) Հայաստանի ու Արցախի մասին, առկա մարտահրավերների մասին խորհրդարանականների իրազեկվածության մեծացում
- 15) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության քաղաքների և եվրոպական քաղաքների միջև ապակենտրոն տարածքային համագործակցությունների հաստատում և զարգացում մինչև 2020 թ.<sup>201</sup>:

Եվրոպայի հայկական լրբիի գործունեության մեթոդաբանությունն ու լրբիստական գործիքակազմն էապես պայմանավորված են Եվրոպայում լրբինգի իրավաքաղաքական ընկալմամբ: Այնուամենայնիվ, գրասենյակը գրեթե ամբողջովին օգտվում է էթնիկ լրբինգի ողջ գործիքակազմից, ինչը ներկայացված է սույն աշխատանքի առաջին գլխում: Հայ դատի Եվրոպայի գրասենյակի պարագայում, ի տարբերություն, օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի, լրբիստական կազմակերպություն-համայնք կապն այնքան էլ ուժեղ չէ: Այնուամենայնիվ, Եվրոպայի հայկական լրբին հաճախ է հենվում եվրոպահայության ներուժի վրա, բայց՝ հիմնականում քարոզչական դաշտում: Եվրոպայի հայկական լրբին դեռևս չի կարողանում եվրոպահայության ներուժը վերածել ընտրական հնարավորության և այդպիսով եվրոպական քաղաքական շրջանակներում ձեռք բերել ազդեցության հավելյալ գործիքներ:

---

<sup>201</sup> Այս կետերը շարադրված են հեղինակի՝ 2019 թ. աշնանը Հայ դատի Եվրոպայի գրասենյակում մասնագիտական ուսումնասիրությունների և դրանից հետո ձեռք բերած աշխատանքային փորձի արդյունքում:

Հայ դատի Եվրոպայի գրասենյակի հարաբերությունները Եվրոպական միության իշխանության գործադիր թևի՝ Եվրոպական խորհրդի, ԵՄ խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի, ինչպես նաև Արտաքին գործողությունների Եվրոպական ծառայության հետ սահմանափակվում են գլխավորապես բաց նամակների հրապարակմամբ և պատգամավորական գրավոր հարցումներով: Ուստի կարելի է եզրահանգել, որ Եվրոպայի հայկական լրբին, ի դեմս Հայ դատի Եվրոպայի գրասենյակի, Եվրոպական միության ղեկավար կառույցներից միայն Եվրոպական խորհրդարանի վրա ազդեցություն ունի, իսկ ԵՄ իշխանության գործադիր մասի նկատմամբ ազդեցություն, որպես այդպիսին, չունի, սակայն պահպանում է աշխատանքային բնույթի հարաբերություններ: Սակայն հայկական լրբիի ազդեցությունը Եվրոպական խորհրդարանի վրա իրապես մեծ է և պայմանավորված է ինչպես հայ գործիչների ամենօրյա աշխատանքով, այնպես էլ մեծ թվով խորհրդարանականների օբյեկտիվ դիրքորոշումներով Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերություններում:

Ընդհանուր առմամբ, Եվրոպայի հայկական լրբին ունի գործունեության երկու մակարդակ՝ համաեվրոպական և անդամ պետությունների: Եթե Ամերիկայի Միացյալ Նահանգների հայկական լրբին բնորոշենք **«մեծ ուժ, համեստ ֆինանսական ռեսուրսներ և շատ աղմուկ»** բանաձևով, ապա Եվրոպայի հայկական լրբին պետք է բնորոշել **«համեստ ուժ, փոքր ֆինանսական միջոցներ և շատ աղմուկ»** բանաձևով: Համաեվրոպական մակարդակում հայկական լրբիի հաջողությունների համար անհրաժեշտ է, որ ԵՄ անդամ պետություններում ձևավորվեն հայկական լրբիստական կառույցներ: Ընդ որում, դրանք անպատճառ պետք է դիտվեն իբրև հայապահպանության կարևոր մեխանիզմներ, քանի որ հայկական շահերի պաշտպանության ամենօրյա աշխատանքը կարող է բարերար ազդեցություն ունենալ համայնքի ազգային կյանքի պահպանման ու զարգացման վրա:

Այնուամենայնիվ, ԵՄ գործադիր իշխանության վրա թույլ ազ-

դեցությունը չի բացառում Եվրոպայի հայկական լոբբիի դերակատարման հնարավորությունը ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման գործում, քանի որ ազդեցության փորձը օբյեկտիվորեն կարող է հակազդեցության արժանանալ ԵՄ գործադիր իշխանության կողմից, իսկ Հայաստանի հետ ԵՄ հարաբերությունների զարգացման նպատակադրումը կարող է սպասարկել նաև ԵՄ քաղաքական շահը և նպաստավոր պայմաններ ստեղծել Եվրոպայի հայկական լոբբիի և ԵՄ ղեկավար կառույցների հարաբերությունների զարգացման համար: Որպես կանոն՝ հայկական լոբբին մշտապես հանդես է եկել պահանջատիրոջ դիրքերից՝ հաճախ կոնկրետ որևէ բան չառաջարկելով ԵՄ ղեկավար կառույցներին, իսկ հարաբերությունների զարգացման քաղաքական շեշտադրմամբ ԵՄ ղեկավար կառույցները կարող են սեփական շահն ունենալ և սպասել համապատասխան առաջարկի:

Ինչպես նկատեցինք սույն աշխատանքի համապատասխան հատվածում, Եվրոպական միության համար չափազանց կարևոր նշանակություն ունեն ընդլայնման քաղաքականությունն ու դրա առանձին գործիքակազմեր: Եվրոպայի հայկական լոբբին պետք է աշխատակարգային որոշակի վերանայումներ կատարի և, չիրաժարվելով արդեն իսկ գոյություն ունեցող քաղաքական նպատակադրումներից, աշխատանքներ իրականացնի նաև ՀՀ-ԵՄ հարաբերությունների զարգացման ուղղությամբ, ինչը կարող է ներառել՝

- 1) քաղաքական երկխոսության խթանումը,
- 2) միջհասարակական շփումների աշխուժացումը,
- 3) փոխադարձ soft power-ի գործիքակազմի կիրառումը,
- 4) կրթական նախաձեռնությունների խթանումը,
- 5) տնտեսական հարաբերությունների զարգացումը,
- 6) ՀՀ քաղաքական համակարգի բնականոն արդիականացումը,
- 7) արդիական փորձի ու տեխնոլոգիաների տեղայնացումը Հայաստանում,

8) ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված համագործակցության պայմանագրի հնարավորինս արդյունավետ կիրարկումը:

Եվրոպայի հայկական լոբբիի համար առանցքային նշանակություն պետք է ունենա այն հանգամանքը, որ ԵՄ ղեկավար կառույցները հայկական էթնիկ լոբբին ընկալեն իբրև ամբողջապես անդրազգային դերակատար, որը հետապնդում է ոչ միայն հայրենի պետության շահը, այլև փորձում է կոնվերգենցիայի ենթարկել հայրենի և ընդունող պետությունների շահերը և հասնել փոխադարձ հետաքրքրության խնդիրների լայն սպեկտրի սպասարկմանը՝ չոտնահարելով հայրենի և ընդունող կողմերի ռազմավարական շահերը, ինքնությունն ու քաղաքական հետաքրքրությունները:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Քննարկված հիմնախնդիրների վերլուծությունները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ ամփոփիչ եզրահանգումները:

1. Էթնիկ լոբբինգը լոբբինգի ընդհանրական ինստիտուտի կառուցվածքային մաս է: Քաղաքական գիտության մեջ առկա են երևույթի տասնյակ սահմանումներ: Դրանք գրեթե բոլորն էլ ի վերջո հանգում են նրան, որ քաղաքականության մեջ էթնիկ լոբբինգն արտահայտվում է ընդունող պետության պետական ու տարածքային իշխանության թևերի և հասարակության հետ կատարվող նպատակադրված աշխատանքով, ինչը ենթադրում է հայրենի պետության, ժողովրդի կամ համայնքի համար նպաստավոր որոշումների ընդունում:

2. Էթնիկ լոբբինգը՝ որպես սփյուռքի քաղաքական գործունեության հիմնական գործառնող, շարունակում է լինել հայրենի պետություններին սփյուռքյան քաղաքատնտեսական օժանդակության գլխավոր գործոն, ինչը միաժամանակ ազդեցության կարևոր գործիք է այլ պետությունների հետ հարաբերություններում:

3. Սփյուռքյան կառույցները կարող են վերաճել էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների հիմնականում ազատական բնույթ ունեցող ժողովրդավարական երկրներում, որտեղ խրախուսվում է բազմամշակութայնությունը և կարևորվում քաղաքացիության ինստիտուտը՝ անկախ ազգությունից: Որպես կանոն՝ էթնիկ լոբբիստական խմբերն էլ ներքին բազմամշակութայնությունը արտաքին քաղաքականության մեջ պրոյեկտելու ջատագովներ են: Նրանք ձգտում են ժողովրդավարացնելու ավտորիտար հայրենիքների վարչակարգերը և քաղաքատնտեսական առումով հայրենի տնտեսություններին աջակցող ֆինանսական ուժ են: Վերջապես, էթնիկ լոբբիստական կառույցների տիրապետող սփյուռքն ավելի ընդունակ է խթանելու անդրազգային կապերը, կամուրջ կամ միջնորդ լինելու հայրենի և ընդունող պետությունների միջ-

պետական հարաբերություններում: Իբրև քաղաքական դերակատարներ՝ նրանք ունակ են նույնիսկ փոխկապակցելու հայրենի պետության միջազգային և ներքին քաղաքականության ոլորտները:

4. Եվ ընդունող պետությունները, և հայրենի պետությունները, ըստ էության, փորձում են լրբիստական խմբերին պահել սեփական քաղաքական արժեշահային տիրույթներում: Հետևապես, դիվերսիֆիկացված և անկախ քաղաքական գործունեության ձգտումը կենսական անհրաժեշտություն է էթնիկ լրբիստական կազմակերպությունների գործունեության պահպանման և իմաստավորման համար: Ասվածը, սակայն, կասկածի տակ չի դնում էթնիկ լրբիստական կազմակերպությունների համագործակցությունը ինչպես ընդունող, այնպես էլ հայրենի պետությունների հետ:

5. Էթնիկ լրբիստական կառույցներ ձևավորած սփյուռքը հատկապես ժողովրդավարական հասարակություններում առաջին հերթին ազդում է ընդունող երկրի արտաքին, երբեմն նաև ներքին քաղաքական գործընթացների վրա: Այս երևույթը լավագույնս դրսևորվում է Միացյալ Նահանգներում, որտեղ լրբինգը քաղաքական մշակույթի ուրույն մաս է, և տարբեր էթնիկ լրբինգերը հանգեցրել են ամերիկյան արտաքին քաղաքականության ուժի մասնատման:

6. Էթնիկ լրբիստական գործունեության հիմնական նախադրյալը հյուրընկալ պետության ժողովրդավարական բնույթն է, իսկ դրդապատճառներ են ազգային ինքնությունը, դրա ընկալումը, մեկնաբանումը և, ըստ այդմ, հայրենիքին օժանդակելու ձգտումը:

7. Այն հակամարտություններում, որոնցում ներգրավված է հայրենի պետությունը, սփյուռքի քաղաքական վարքը որոշվում է հայրենիքի ներսում և դրսում սփյուռքի հետաքրքրությունների և մտահոգությունների փոխկապակցվածությամբ: Հիմնական գործոնն իհարկե ինքնության պահպանման մտահոգությունն է, իսկ արտաքին վտանգը ինքնության պահպանման կարևոր խթան է:

8. Սփյուռքի ֆինանսական հոսքերն իրենց բնույթով գլոբալ կառավարման ֆենոմեն են, սակայն հաճախ հակառակ ազդե-



ցություն են ունենում հայրենի պետությունների վրա՝ միաժամանակ խթանելով ազգային ինքնության և տնտեսության զարթոնքը՝ դրանով իսկ փաստելով սփյուռքի կայուն դերն ու ազդեցությունը ազգային պետության կյանքում:

9. Հայրենի պետության վրա սփյուռքի քաղաքական ազդեցության գործոններից մեկն էլ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջոցով հայրենի պետության հասարակության վրա ազդեցության փորձերն են՝ վերջինիս շրջանում սփյուռքյան տրամադրություններ և հույզեր սերմանելու համար: Այս գործընթացը մեծ մասամբ իրականացվում է սփյուռքի ֆինանսական միջոցներն ու մարդկային ներուժը հայրենիք ուղղորդելով: Արդի քաղաքական զարգացումներում, երբ քաղաքացիական հասարակության ինստիտուտները հաճախ մարտահրավեր են նետում պետական կենտրոնաձիգ կառավարմանը, քաղաքացիական հասարակության միջոցով սփյուռքի ազդեցության ընդլայնման գործընթացը զարգացման միտում ունի: Նկատենք, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտները էթնիկ լոբբիստական կազմակերպությունների կողմից կազմակերպա-իրավական գործունեության հնարավորություններ են հանդիսանում և ընդունող երկրում, և հայրենի պետությունում: Դրանով էթնիկ լոբբինգն իրեն լիարժեքորեն դրսևորում է որպես հանրային քաղաքականության անբաժան մաս:

10. Հայրենի պետությունների ազդեցությունը ընդհանրապես սփյուռքի վրա, որպես այդպիսին, ավելի մեծ է, քան սփյուռքի՝ էթնիկ լոբբինգ իրականացնող կազմակերպությունների վրա, քանի որ վերջիններս ունեն իրենց քաղաքական օրակարգն ու ռազմավարական նպատակները, որոնք կարող են տարբերվել հայրենի երկրի կառավարության քաղաքականությունից:

11. Էթնիկ լոբբինգի ինստիտուտը, լինելով արդի քաղաքական գործընթացներում սփյուռքի քաղաքական գործունեության գործառնող, հանդես է գալիս իբրև քաղաքական գործընթացի մակրո մակարդակի դերակատար, ինչն ամրապնդվում և զարգանում է

անդրազգային քաղաքական կազմավորումների աճող ազդեցության, գլոբալիզացիայի և տեղեկատվահաղորդակցական հնարավորությունների ընդլայնման պարագայում: Հայրենի պետությունների՝ սփյուռքի համայնքներին քաղաքականապես ապավինելու միտումները շարունակական աճ են գրանցում: Զուգահեռաբար աճում է ընդունող պետությունների հետաքրքրությունը՝ էթնիկ համայնքների միջոցով վերջիններիս հայրենի պետությունների վրա ազդեցություն գործելու հանդեպ: Հայրենի պետությունները հաճախ միջամտում են այլ պետությունների ներքին գործերին՝ փորձելով վերջիններիս տարածքում ունենալ կայուն, կազմակերպված և քաղաքական կշիռ ունեցող համայնքներ: Այսպիսով, միջազգային հարաբերությունների սփյուռքյան ոլորտը բավական բազմաշերտ տարածություն է, որտեղ խաչաձևվում են պետությունների ներքին ու արտաքին շահերը:

12. Սփյուռքի էլիտաների ինքնության երկվությունն անխուսափելի մարտահրավեր է, որի հաղթահարումը հնարավոր է երկու ինքնությունների ոչ թե դիստոմիայի, այլ կոնվերգենցիայի միջոցով, ինչը հնարավորություն կտա հավասարապես բավարարելու երկու ինքնությունների պահանջմունքները և սպասարկելու դրանք՝ չօտարվելով ո՛չ հայրենի, ո՛չ ընդունող պետություններից:

